Plugh 2/88

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.— ՇԱՀԱՆԴՈՒԽՏ . . . . . Դավափին ծնած հեքիաթ

18.— Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Ջնջուած սահմանները

19.— Ն. ՓԱՋԱՆՋԱԳԻՍ . . . . . Վերախուչուած Քրիստոսը
(հայացուց՝ Ս. ՅԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ)

32.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ . . . . . Խորհուրդ

33.— Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . Սուսանը սէր ստեղծեց...

39.— Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . . . Հայաստանի վերաբերող
յուշագրական հատուածներ

42.— Ա. ՏՈԼՍՏՈՅԱ . . . . . 1915ին Հայաստանում

60.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . Դէմ առ դէմ Փոլ Կիրակոսեանի

72.— Յ. ՕՇԱԿԱՆ . . . . . Նամակ՝ Ն. Սարաֆեանին

76.— * * * . . . . . Լոյս տեսան

digitised by

493

Բաբել

ԱՅՍԱՑԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԷ. ՏԱՐԻ. ԹԻՒ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1988 ՊԷՅՐՈՒԹ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԾՈՎԱՓԻՆ ԾՆԱԾ ՀԵՔԻԱԹ

— Տիկին Լուսածին, լսեցի՞ր, Մելքոնը խաբեփ ըրեր են,— ըսաւ տիկին Սրբուկ իր դրացուհիին, պատչգամէն ձայն տալով անոր։

— Ի՞նչ կ՚ըսես, մեղք եղեր է, երկու զաւակի հայր է, լոյսի պէս կին ունի...

— Բայց ուրկէ՞ լսեցիր... ինչ լաւ հարս է... վա՜խ, Վեհանոյշ, Վա՜խ...

— Ամբողջ թաղը կը խօսի։ Դամասկոս գացեր է գործով. վաբպետը ղրկեր է. հինգ օր եղեր է. դեռ չէ վերադարձած։ Ոստիկանատուներ, ակուռներ... հարց ու փորձ, փնտռտուք... չկա՜յ...

— Այս ի՞նչ աչքարհ եղաւ, Աստուա՜ծ իմ, խեղճ տղան մէկուն գործին չէր խառնուեր, գործէն ասուն, տունէն գործ։

— Երբեմն ձկնորսութեան կ՚երթայ եղեր Անթիլիասի ծովեզերքը։ Մեղք եղեր է, արդեօք կը գտնուի՞...

— Մուսա Սատրը գտա՞ն... հազարաւոր մարդ առուանգեցին... անոնք եկա՞ն... եթէ անոնք գան՝ Մելքոնն ալ կու գայ... Գացողը չի գար։

— Ա՛յլ կը բաւէ քարոզ կարդաք պատչգամէն,— գոռաց Լուսածինին ամուսինը՝ պատչգամէ պատչգամ դրացուհիին հետ խօսող իր կնոջ։ — Քա—

digitised by A.R.A.R.@

դուքականութիւն մի խօսիք բարձրաձայն...։ Մելքոնը խաթրիվ ըրեր են, դուք Մուսա Սասրրի մասին կը խօսիք։ Այդ մարդը Լիպիա գացած էր, հոն ալ ձերբակալեցին։ Մելքոնը սիասէթի մա՞րդ էր... Մելքոնը բոռնոնոնու էր։ Կու գայ, ով գիտէ ո՛ւր գնաց։ Երբեմն ձուկ որսալու կ'երթար... աղան անգործութենէ կը գգուէր։ Այս պատերազմը, որ սկսաւ, մարդիկ իրենց արհեստները, սովորութիւնները փոխեցին։ Թերեւ՞ս ծովը ինկաւ... Աստուած չընէ՞ հա...։ Արկած չի՞ պատահիր...։ Ես չեմ հաւատար, որ առեւանգուած է. ո՞չ կուսակցական է, ոչ ալ կասկածելի. ինչո՞ւ պիտի առեւանգեն։

— Դուն միշտ այդպէս կասկածամիտ ես, բանի մը չես հաւատար։ Ամբողջ աշխարհ «խաթրիվ ըրեր են» կ'ըսէ, իսկ դուն կ'ըսես, թէ ոգի մնացողը կը տեսնէ, թէ ով իրաւունք ունի...

— Այո, ոգի մնացողը կը տեսնէ, թէ ո՞վ հիշդ կը խօսի,— ըսաւ Մատթէոս ագա իր կնոջ, զայն կրկին անգամ պատշգամէն ներս մտնելու հրաւիրելով այս անգամ, սովորականէն խիստ շեշտով։

Քսան տարին նոր բոլորած էր, երբ ամուսնացուցին Մելքոնը 17ամեայ Վէհանոյշին հետ։ Մեղներու կատարած ընտրութեան եւ որոշումին չհակառակեցան։ Երկու երիտասարդները յօժարած էին մեծերուն կամքին, հնազանդած՝ անոնց որոշումին։ Կազմուած էր ընտանեկան բոյնը։ Ջերմ ու կենսունակ բոյն մը։

Ազգականական հեռաւոր կապ մը կար Մելքոնին եւ Վէհանոյշին ծնողներուն միջեւ։ Զիրար հակնալու գժուարութիւններ չունեցան։ Սէրը դիւրացուցած էր տնաւորական տագնապին անլուծելի նկատուած հարցերը։ Տանելի մթնոլորտ մը ստեղծուած էր տան մէջ։ Մելքոն արհեստաւոր էր. երկաթագործի տպարէզի մէջ բաւական հմտութիւն ամրարած էր։ Դպրոցը կանուխէն ձգելուն «բարիքը» այդ եղած էր։ Հիմա զինք կը կոչէին վարպետ Մելքոն...

Երեք տարուան ընթացքին հայր եղած էր երկու մանչ զաւակներու։ Վէհանոյշ կը սպասէր իր երրորդ զաւկին։ Լիբանանեան պատերազմը բռնկած էր։ Օրերը մահահոգի էին։ Ամուսինը՝ Մելքոն, չէր կրնար գործի երթալ սովորական աշխատանքը կատարելու, զրաւ չահելու համար։ Քաղաքին մէջ յանկարծակի վերիվայրումներ ստեղծուած էին։ Մարդիկ կը փախչէին երկրէն։ Դրամատեցողները կ'երթային դրացի երկիրները քանի մը շաբաթ անցընելու, արձակուրդի օրեր ապրելու։ Տնտեսապէս տկար ընտանիքները կ'ապրէին խնայողութեամբ, սպասելով կացութեան բարելաւման։ Անդամալուծուած էր երկիրը ամբողջ։ Ջրաւոր ռմբակոծումները սարսափ կը սփռէին։ Ոչ ոք կը համարձակէր տուներէն դուրս ելլել։ Դադրած էին ամէն տեսակի աշխատանքները, փակուած էին դպրոցները, դրամատուները։ Բոլոր քաղաքացիները կը մասնէին իրենց գլուխները ապահով տեղ մը պահելու մասին։ Ստեղծուած էին ապաստանարաններ, բնակարաններու դեռնայարկերը, մութ ու խոնաւ անկիւններ։ Իսկ երբ առմբերը դադրէին տեղալէ, թեթեւ շունչ մը առնելով պատուհան մը հայ կ'ուտէին, կը շաղակրատէին, կարծելով, թէ փոթորիկ անցած է։ Բայց երբ որոտումի նմանող պայթումները վերսկսէին, մարդիկ խուճապահար կը վերադառնային իրենց թաքստոցները։ Համեմատական հանդարտութեան պարագային կարելի կ'ելլար փողոց ելլել, առանց հեռանալու թաղերէն։

Մելքոնին համար երբեմն կարելի կ'ելլար դէպի ծովափ փախուստ մը։ Կը ծանծաղանար առօրեային միօրինակութենէն, մանուկներուն լացէն ու կնոջ անվերջանալի պահանջներէն։ Տան մէջ պակսած էին նոյնիսկ կենսական անհրաժեշտները։ Երեխաներուն համար երբ ակնարկութիւն կ'ընէր ամուսնոյն, «Կը բերենք, վաղը կը բերենք. այսօր խանութները փակ են», կ'ըսէր Մելքոն, եւ կամ կը խոստովանէր դրպանին պարապ ելլալը, նոյն ատեն

digitised by A.R.A.R.@

յուսադրելով Վեհանոյշը, թէ «ասնելիք» ունէր վարպետէն, վաղը կամ միւս օրը կը հանգիպին տունը ու կաթ կը հայթայթէ, նաեւ՝ շաքար, իւղ, բրինձ ու ձուար։ Կարեւորը հացին հետ կենսական սննդեղէն ապահովելն էր։

Զանձրոյթը կը զգուեցնէր Մելքոնը։ Դրամի պակասը կը ջղայնացնէր։

Դրացի երիտասարդներ խօսեցան դէպի ծովափ պտոյտի մը մասին, ապա որոշեցին ձկնորսութեան մը ժեռնարկել։ Թէ՛ ժամանակ կը սպաննէին եւ թէ ուտելիք սնուցող կ'ուենային... եթէ կարենային քիչ մը ձուկ որսալ։ Շաբաթներէ ի վեր միսի երես տեսած չէին։ Աքանչելի սնունդ մը կ'ըլլար ձուկը։

Գացին։ Ամբակեան ժեռնարկ մը ըլլար կարծես։ Առաւօտ կանուխէն լուրին կը տիրէր քաղաքին վրայ։ Անսովոր էր այդ լուրինը։ Ինչո՞ւ այդ օր ռումբեր չէին պայթիր, ռմբակոծում չկար, արձակագէնները ինչո՞ւ գործի վրայ չէին...։ Մելքոնին թուեցաւ, թէ պատերազմը վերջ գտած էր։ Հաճելի էր առաւօտեան խաղաղութեան պատրանքը արտերուն՝ ուզղուիլ մօտակայ ծովափը։

Օրը անցաւ ուրախ, խմբական արշաւի մը հաճոյքը ապրեցան։ Ընկերները առաջարկեցին յաճախակի դարձնել ձկնորսութեան արշաւը։ Առաջին օրուան բերքը յուսալից էր։ ակնկալուածէն աւելի որսացած էին խայտացող ձուկեր, որոնք «Ուլթան Իպրահիմ»ը կը յիշեցնէին։

Երեկոյեան, երբ թարմ ձուկերուն տոպրակը յանձնեց Վեհանոյշին, կիները ժպտեցան գոհ, անմիջապէս լծուեցան զանոնք մաքրելու գործին։ Մաքրելէ ետք տապկեց ձէթին մէջ։ Այրած ձէթի կծու հոտը յայտարարեց, թէ Մելքոնենք ձուկ կ'ուտէին...։ Գոհ էր ամբողջ ընտանիքը։ Երեխաներն ալ կերան՝ զգուշութեամբ փուշերը մաքրելով։ Համեղ էին ձուկերը։ Մելքոն գաւաթ մը օղի ճաթած էր, կնոջ հետ թոխտ գարնելով խմեցին։ Երանի՜ թէ ամէն օր ըլլար այդպիսի համեղ ձուկ, եւ ուտէին։ Վեհանոյշ քաջալերեց Մելքոնը, որ կրկին երթայ ձուկ որսալու, փոխանակ տունը անգործ նստելու, թղթախաղով ժամանակ սպաննելու։ Գոնէ շաբաթը քանի մը օր ուտելիքի հոգէն կը փրկուէին։ Ձրի ճաշ մը՝ գրեթէ։ Կրնային նոյնիսկ աւելորդ քանի մը քիլօ ձուկերը ծախել ծանօթներուն, դրացիներուն, ուզողներուն։ Մելքոն տրամաբանական նկատեց կնոջ թելադրանքը, ու յաջորդ օրն իսկ իր փափաքը յայտնեց ընկերներուն։ Անոնցմէ երկուքը համաձայն գտնուեցան։ Երկու օր ետք երեք ընկերներով գացին ծովափ։ Միւսները կը վախնային ռմբակոծումներէ։ Այդ պարագային ո՞ւր պահուրտէին։ քիլօ մը ձուկի համար կ'արժէ՞ր կեանքը վտանգել։ Մելքոն գոհացաւ երկու ընկերներու ընկերակցութեամբ։ Երկրորդ անգամ նոյնպէս հեռաքրքրական ու շահաբեր օր մը անցուցին Անթիլիասի ծովափներուն։ Որսացին առատ ձուկ։ Առաւօտ կանուխ գացած էին ծովափ։ Հեռուէն լսեցին ռմբակոծումներու խուլ ձայներ, բայց կարեւորութիւն չտուին։

— Ձայները շատ հեռուներէն կու գան։ Արդէն յեռներուն վրայ կը կրուին, մեզի հետ գործ չունին այսօր, մի վախնաք,— ըսաւ Մելքոն ընկերներուն։

Կէսօր չեղած արդէն առուն հասած էին։

Ընկերներն ալ ուրախ էին՝ թարմ ու համեղ ձուկ ուտելու հեռանկարով։ Այսպիսի շահաբեր օրուան բաւարարութիւնը, հոգեկան հաճոյքը տրամադրութիւնները բարձրացուցած էին։ Մելքոն ըսաւ ընկերներուն։

— Տղա՜ք, մէկական պաքիա (փոքր չիչ) օղի գնելու մի մոռնաք։ Առանց օղիի ձուկը կոկորդէն վար չի սահիր...

Ցաջորդ օր, սակայն, հակառակը պատահեցաւ։

Վերադարձի ճամբուն վրայ անակնկալ եւ սոսկալի ռմբակոծում մը՝ Տորայի օրոստրատի մուտքին։ Խուճապ մը ծայր առած էր։ Օրը խաղաղ նկատելով՝ քաղաքացիներ դուրս ելած էին իրենց թաքստոցներէն, ու ահա սա անակնկալ, անիծեալ ռումբերը։ Պատապարուելու անկիւն մը պտտան, հոն

digitised by A.R.A.R.@

սպասեցին, մինչեւ գագաթը ամբարձումին, որ երկու ժամ տեւած էր։ Երբեք ընկերները յուսահատած էին. արգեօք պիտի կրնայի՞ ողջ-առողջ տուն վերադառնալ։ Անիծեցին իրենց շար բախտը, մանկամտութիւն նկատեցին ձկնորսութիւնը շարունակելու փափաքը եւ որոշեցին ա՛լ ծովափ չերթալ։ Բայց Մելքոն մտովի ըսաւ. «Եթէ պիտի մեռնիմ, եթէ ճակտիս մահ գրուած է՝ առանց սեմին ալ ուժը մը կրնայ պայթիլ...»։ Ճակատագրապաշտի մտորումները չայտնեց իր ընկերներուն, բայց քիչ հաք արտայայտեց մտածումները ինքն իրեն հետ խօսելու պէս.

— Ընկերներ, եթէ պիտի մեռնինք՝ մահը կրնայ մեզ հետապնդել, քանի որ մահը ամենազօր է, ոչ ոքէ կը վախնայ։ Անօթի մեռնիլը աւելի սոսկալի է։ Ես պիտի շարունակեմ ձկնորսութիւնը։ Ինծի այնպէս կը թուի, որ այս պատերազմը պիտի երկարի, անգործութիւնը աւելներ պիտի գործէ։ Չէ՞ք տեսներ, որքա՜ն մարդիկ եկած էին մեզի պէս ձուկ որսալու։ Բարիք մը՝ն է, որ ծովեզերեայ երկիր մը կ'ապրինք։ Կիներ ալ եկած էին. անոնք հոգի չունի՞ն...։ Ամէն մարդ իր կեանքը պէտք է ապահովէ այսպիսի օրերուն։ Այս պատերազմը վերջանալիք չունի։ Գործերը ամբողջովին դադրած են։ Երէկ, Քաթայէպներու ակումբէն բարեկամ մը ըսաւ ինծի. «Եա՜ Մելքոն, գլխուդ ճարը նայէ։ Կա՛մ կը փախչիս այս երկրէն, եւ կամ գողութիւն կ'ընես՝ ապրելու համար։ Ուրիշ ճար չկայ»։ Իսկ ես ո՞չ երկրէն փախչելու ուժ ունիմ, ոչ ալ գողութիւն կամ առաւ-փախուտութիւն կրնամ ընել։ Քանի այս ծովը կայ, ձուկերը չեն պակսիր։ Զուր կը ամէնէն պատուական ուտելիքն է։ Այս ալ օրապահիկ ճարելու ձեւ մը՝ն է։ Ես պիտի շարունակեմ. եթէ կ'ուզէք՝ միացէք ինծի։

Ընկերները կարեւորութիւն չտուին Մելքոնի առաջարկին եւ արամաբանելու կերպին։ Երբ տուն վերադարձան հեւասպառ, Վահանոյշ ըսաւ Մելքոնին։ «Ճատ վախցանք, որ...։ Ա՛լ մի երթաք, Մելքոն, ուժերին ո՞ր ժամուն պայթիլը չես գիտեր։ Ակումբէն հաց կը բաժնեն, անօթի չենք մնար...»։

Անսալով կնոջ թախանձանքին, Մելքոն քանի մը օր տուներ մնաց։ Թղթախաղը շարունակեց։ Քանի մը անգամ գնաց վարպետին տուներ դրամ ուզելու։ Ան տուներ չէր։ Դրացիները ըսին. «Վարպետ Յակոբը իր կնոջ եւ զաւակներուն հետ Կիպրոս համբարձեց», առանց վերադարձի մասին ակնարկութիւն ընելու։

Վահանոյշին պահանջները կը բազմանային։ Երեխաներուն կաթը, շաքարը, իրինձը սպառած էին։ Գուլ-բանջարեղէն-միս արդէն չէին ուտեներ։ Գիւրակազի եւ քարիւղի պահանջ ունէին։ Եղեկտրականութեան հոսանքը ընդհատուած ըլլալով՝ քարիւղէ լապտեր կամ մոմ կը վառէին գիշերը։ Ծովը կը կանչէր Մելքոնը։ Հոն խաղաղ էր ամէն բան։ Երբ ալիքները փոթորկէին, Մելքոն կը գիտէր անոնց բարկութիւնը, ու կը մտածէր կեանքի ու բախտի մակընթացութեան եւ տնգատութեան մասին։ Ինչո՞ւ հրաժարիլ ծովուն մաքուր մթնոլորտէն։ Զուրերը չէին լսեր ուժերուն ձայնը։ Ալիքներուն հո՛գն իսկ չէր, թէ քաղաքը կ'այրէր։ Թող ծովուն ջուրերը տանէին հրդեհները մարելու։ Մելքոն չէր կրնար անհաճոյ կեանքին, թշուառութեան գէշ կատակներուն տոկալ։ Սիրած էր ծովը։ Նոյնիսկ մտածեց, թէ ինչո՞ւ մինչեւ հիմա չէ փափաքած ձկնորսութեան արհեստը կիրարկել։ Կը գիտէր հուժկու բազուկներով, շարքաշ ու թուխ ձկնորսները, որոնց յայն ափերուն մէջ կարթերը կը պարէին, թորերը կը ճմլուէին, նաւակներուն ու թիակներուն հետ կը խաղային, բնա՜ւ չէին վախնար իրարու հետ կռուող, իրարու վրայ դիպուող, գիրար լափող ալիքներէն։

Երանի՜ թէ մինչեւ հիմա ձկնորսութեան արհեստը կիրարկած ըլլար, երկաթագործութենէն լաւ չէ՞ր ըլլար։ Ցողնած էր սալէն ու մուրճէն, այրող-քրտնեցնող բոլին կրակէն։ Ծովը կը գովացնէր, թոքերուն չունչն ու

digitised by A.R.A.R.@

արիւնը կը մաքրէր։ Ծովուն կապոյտը ուրիշ էր։ Զկնորսութիւնն ալ բոլոր կին եւ մկաններուն ուժը կը զօրացնէր, մաքուր օդ ներշնչելը կեանքը կ'երկարէր։

Մելքոն հմայուած էր ծովէն։ Երբ թեթեւ հանդարտութիւն մը տիրէր քաղաքին վրայ, կ'առնէր ձկնորսի եղէգը, կարթը, պարանը, կ'երթար ծովափ։

***

Մելքոն գեղադէմ ու բարեկազմ երիտասարդ մը էր։ Գոհ էր իր կնոջմէն, որ ժուժկալ, քիչով գոհացող բարեմիտ կին մը էր, կը հնազանդէր ամուսնոյն, նոյնիսկ նեղ օրերուն անոր երեսին չէր տար դրամական ապնապը, եւ կամ հարուստ կիներու նախանձելու անտեղի ելոյթներ չէր ունենար։ Վեհանոյշին համար Մելքոն հանգցող, ընտանիքի հոգածու հայրն էր։ Ոչ մէկ օր խնդիր ունեցած էին այր ու կին։ Ամուսինին ճաշակը ի՛ր ճաշակն էր։ Անոր ուրախ կամ տխուր տրամադրութիւնը իր ալ ուրախ կամ տխուր տրամադրութիւնն էր։ Ամուսինը եթէ ուրախանար, ինք ալ կ'ուրախանար։ Ամուսինը եթէ մտախոհ ըլլար՝ Վեհանոյշ կը ջանար դայն ուրախ պահելու ձեւեր որոնել։ Արդէն ունէին երկու մանչ զաւակներ։ Եթէ գալիք դուակը աղջիկ մը ըլլար, ներդաշնակութիւնը կատարեալ կ'ըլլար։ Թող Աստուծոյ կամքը ըլլար։ Գեղանի Վեհանոյշ իր վեհանձնութեան հետ ունէր նաեւ սիրուն դէմք ու հեզարարոյ խառնուածք։ Աստուածային խաղաղութիւնը կը տիրէր տան մէջ։ Բայց պատերազմը խախտած էր ներդաշնակութեան նժարը։ Վեհանոյշ քիչ անգամ տունէն դուրս կ'ելլէր։ Կիրակի առաւօտներ երբեմն եկեղեցի կ'երթար, ադգականի մը հոգեհանդիստին ներկայ գտնուելու, երբեմն ալ դպրոց կ'երթար՝ ծնողական հանդիպումի, մանկապարտէզի մէջ եղող իր երկու մանչուկներուն մասին տեղեկութիւններ լսելու։

Գործէն վերադարձին՝ Մելքոն կինը կը գտնէր խոհանոցին մէջ, ընթրիքը պատրաստելով զբաղած։ Պատերազմը պատճառ դարձած էր աշխատանքի ժամերուն կրճատման։ Շահի նուազում մը ստեղծուած էր։ Հետեւաբար որոշած էր օգտագործել յեսմիջօրէի ժամերը։

Ծովափին՝ Մելքոն կը նայէր ձկնորսներուն։ Կ'ուզէր նմանիլ անոնց, բայց ինք կարելիութիւնը չունէր ձկնորսի գործակ ըլլալու։ Հիմա, որ քանի մը շաբաթէ ի վեր կը զբաղէր ձկնորսութեամբ, մանկական փափաք մը իրագործած ըլլալու հաճոյքը կը զգար։ Իր ընկերները այդ մասին ոչինչ գիտէին, ու կը զարմանային անոր յաջողութեան, նոր արհեստին կիրարկումին համար։

Ծովուն եւ ալիքներուն հետ ընտելանալը դիւրին եղաւ։ Զուկերուն երեւման ժամերը ճշդեց։ Այլեւս դժուարութիւններ չկային։ Վարժութեամբ հասկցաւ, թէ մայրամուտի ժամերուն՝ ձկնորսութիւնը առաւել ձեռնտու պայմաններ կը ստեղծէ։ Դիտեց դէպի ծովուն բացերը ուղղուող ձկնորսները, որոնք լապտերները նաւակներու կողերուն կախած՝ կ'երթային հեռուներ։ Մելքոն փափաքեցաւ այդ ձկնորսներուն ընկերանալ։ Բայց ոչ, անոնք փոքր տարիքէն ծովուն վրայ հասունցած ձկնորսներ էին։ Օրուան քանի մը ժամերուն եթէ աշխատէր, այդ ալ կը բաւէր, մինչեւ որ պատերազմի սա օրերը վերջ գտնէին։ Ժամանակաւոր զբաղում մը եւ փոքր շահ մը կը բաւէին իրեն։

Օր մը, յեսմիջօրէի ժամերուն, Ծովափին նշմարեց երիտասարդու հի մը։ Ըստ երեւոյթին, մանկամարդու հին եկած էր լողալու այդ «ձրիթ» ծովափը, ժողովուրդին լեզուով՝ «Մէն պէյշէր»։ Ան թէեւ ուշագրաւ դեղեցկութիւն մը չունէր, բայց կը սիրէր գեղադէմ երիտասարդները։

digitised by A.R.A.R.@

Մելքոնի սիրտը թափրաց։ «Ձիշդ իմ փնտռած թիփս է», ըսաւ իւրովի, բայց աղջիկան կողմը երկար նայելէ խուսափեցաւ։ Ինք ամուսնացած մարդ էր, զաւակներու տէր։ Մովսէսին ամայի ըլլալը սակայն խրախուսեց Մելքոնը ու, չեռ գիտեր ի՞նչ ուժէ մղուած՝ քանի մը անգամ դարձաւ աղջիկան ու այնպէս նայեցաւ անոր, որ կարծես ըսել կ՚ուզէր. «Մօտեցի՛ր»։ Աղջիկը, իր կարգին, ներքին մղումի մը ունեցաւ ժպտելու անծանօթ երիտասարդին։ Այո, ինք գեղադէմ չէր, բայց արդիւնա՞ծ էր դեղեցիկ երիտասարդներու նայիլ, կամ՝ անոնց ժպիտիլ...

Մելքոն կարթին երկար եղէգը դրաւ ժայռի մէջքին, պատասխանեց մանկամարդուհիին ժպիտին, մօտեցաւ անոր ու արտաբերէն լեզուով անունը հարցուց.

— Գերճուհի,— ըսաւ աղջիկը ու գեռին նայեցաւ։

Մելքոն զարմանքով հարցուց.

— Հա՞յ ես։

— Այո,— պատասխանեց մանկամարդուհին ու չարունակեց,— ես վստահ էի, որ դուն ալ հայ էիր, այդ պատճառով ժպտեցայ քեզի։ Ես տղոց չեմ ժպտիր։ Կարծես քեզ տեսած եմ մեր տան մօտերը, մեր թաղերուն մէջ...

Մելքոն չկրցաւ պատասխանել, մանուկի մը նման չփոթեցաւ, բայց կրկին ժպտեցաւ։ Այդ ժպիտին դիմաց Գերճուհի ինքզինք այնքան հարազատ զգաց, որ քայլ մը եւս մօտեցաւ Մելքոնին։ Կարթը ուզեց եւ, առանց երիտասարդին հաւանութիւնը առնելու՝ զայն վերցուց ժայռին վրայէն, իրր թէ ձուկ որսալու։

— Չես կրնար որսալ, դժուար է, աղջկայ գործ չէ ձուկ որսալը։ Երէկ, ամբողջ օրը ոչ մէկ ձուկ օրսացի։ Երկու օրէ ի վեր կարծես ձուկերը քնացած են...

— Դուք միայն ֆուրի՞ ձուկ կ՚որսաք,— կատակեց Գերճուհի,— բայց չիկնեցաւ։ Զզիաց այդքան համարձակ ըլլալուն, ու փորձեց փոխել նիւթը, բայց Մելքոն այնքա՜ն խրախուսուեցաւ այդ թափանցիկ ակնարկէն, որ պահ մը լուռ մնալէ ետք ըսաւ.

— Լողալ գիտե՞ս...

— Ոչ։ Բայց այսօր եկայ փորձ մը ընելու։ Քանի մը ընկերուհիներու ըսի, չեկան, վախցան ամբակոծումէ. առանձին եկայ։ Զանձարացած էի։

Մելքոն զգաց, թէ մանկամարդուհին փափաք ունի լողալու, բաւ.

— Լողալը մանկութենէն կը սորվին։ Երբ հասակ առած ես ու կ՚ուզես լողալ սորվիլ, քիչ մը դժուար է. մա՛նաւանդ աղջիկները չատ կը վախնան։ Եթէ կ՚ուզես սորվիլ՝ կ՚օգնեմ քեզի, կը սորվեցնեմ...

— Շատ կը փափաքիմ, բայց... կ՚ամչնամ. մա՛նաւանդ՝ որ հոս «Ալն պելէշ» է, քիչ ետք մարդիկը կը բազմանան...

— Ասկէ առաջ եկա՞ծ ես հոս։

— Քանի մը անգամ, դրացի կիներուն եւ աղջիկներուն հետ։ Անոնք լողացին, ես գիրենք դիտեցի։ Երանի՜ թէ կարենայի քանի մը անգամ փորձելով լողալ սորվիլ։

— Շատ դիւրին է. երբ ինծի հետ ես, մի վախնար։ Անպայման կը վարժուիս...

— Մայրս ծովափ չէ տարած մեզ։ Հայրս խիստ մարդ մը եղած է,— չարունակեց Գերճուհի, ափսոսալով զուր անցած մանկութեան օրերը, բայց Մելքոնին խրախոյսը հաճելի նկատեց եւ լուութեամբ յօժարեցաւ անոր առաջարկին։

Մելքոն նայեցաւ աղջկան աչքերուն, հոն կարդաց գոհունակութեան եւ հրճուանքի փայլ մը, ու ըսաւ.

digitised by A.R.A.R.@

— Անհապաղէ, քանի չատ մարդ չկայ՝ փորձ մը ընենք:

— Նոր սորվողներուն վրայ կը խնդան դիտողները, տարօրինակ ձեւեր կ՚ընեն ցուրին մէջ, կը վախնան: Ես ի՞նչ ձեւեր պիտի ընեմ արդեօք... եթէ վախնամ... կարծես վախնալը բնական է: Դուն չե՞ս վախնար... երբ ալիքները բարձրանան, չե՞ս վախնար...: Անկամ մը յստակ եմ, որ վարդիւռ ձկնորս մը ծովը ինկած եւ խեղդուած է: Զօրաւոր ալեկոծում մը պատճառ եղած է անակնկալ արկածին:

— Երբ ես քովդ եմ, մի վախնար,— կրկնեց Մելքոն՝ աղջկան աչքերուն նայելով:

Գերճուհի պահ մը առանձնացաւ ծովափին լքուած մակոյկի մը շուքին, հանեց հագուստները, մօտեցաւ ցուրերուն, որոնք սկսան ոտքերը համբուրել: Ջուրին գաղջ համբոյրներէն հանոյացաւ մարմինը, ու քաղցր զգայնութիւնը մը համակեց հոգին: Թեթեւ ալիքներէն չվախցաւ: Արդէն Մելքոն կանգնած էր կողքին: Արդէն բռնած էր մէջքէն: Գերճուհի զգաց, թէ կը դանուի ծովափէն բաւական հեռու: Ծովեզերեայ բնակարաններն ու ծառերը շատ փոքր կ՚երեւէին: Աչքերը փակեց...: Ալիքնե՞րը զինք հոն հասցուցին, թէ Մելքոնին բազուկները: Քո՞ւն էր, թէ արթուն. չդիտցաւ...

*
* *

Իր թաղի նախակրթարանի քանի մը դասարաններուն հագիւ աշակերտած՝ Գերճուհիին հայրը մեռաւ: Մայրը զինք դրկեց թաղին դերձակուհիին մօտ՝ կար ու ձեւ սորվելու: Արհեստի մը տիրանալու, ասկի պիլազիկ ունենալու հեռանկարով: Գարմանուհին յօժարեցաւ: Բազմանդամ ընտանեքի մը զաւակն էր, դրկուած բարօր կեանք մը ապրելու բարիքներէն: Գերճուհի շուտով ձեռք ձգեց կարգ մը վարժութիւններ: Սորվեցաւ թերակարներ ընել, օգակոճակ կարել, հագուստ արդուկել: Իր բարեկամուհիները կ՚երթային քաղաքին զանազան գործարանները եւ գրամ կը շահէին: Կարի յատուկ գործատուններ ալ կ՚երթային անոնք, եւ յոխորտանքով կ՚ըսէին Գերճուհիին, թէ իրենք դրամ կը շահէին, եւ կրնային գնել իրենց փափաքած իրերը, կօշիկ, հագուստ, պերճանքի պիտոյքներ, թէ՝ կ՚երթային վարպետարան, սինեմա, եւ կը ծախսէին իրենց շահածը: Գերճուհի ինք եւս ուզեց դրամ շահիլ. բաւարար նկատեց սորվածը: Ա՛լ կրնար տեղ մը աշխատիլ, որպէսզի կարենար քանի մը ժեռք վեղեցիկ հագուստ ունենալ, քանի մը զոյգ կօշիկ: Փայլուն պայուսակ մը: Իր փափաքը յայտնեց մօրը, որ դժկամեցաւ, քանի որ հեռաւոր թաղերու մէջ աշխատող աղջիկները կրնային «ճամբայէն չեղիլ» ու իրենց վրայ «խօսք բերել»:

Ի վերջոյ, Գերճուհի յաջողեցաւ համոզել մայրը: Նաւահանգիստի մերձակայքը գտնուող կարի գործատուն մը ներկայացաւ ու խնդրեց գործատէրէն, որ զինք ընդունի իրրեւ բանուորուհի: Գործատէրը շուտով ընդունեց եւ ներկայացուց զինք հագուստ կարողներու բաժնի վերակացուին:

Լաւ կը վարձատրէին զինք: Հագիւ քանի մը ամիս անցած, սկսաւ օգնել իր քոյրերուն եւ փոքրահասակ եղբօրը, անոնց համար գնելով կօշիկներ, հագուստեղէն:

Գերճուհի ուրախ էր: Երբեմն արբլիէի աղջիկներով կիրակնօրեայ պտոյտներ կը կազմակերպէին: Աչխարհը իր սահմանները կը լայնցնէր Գերճուհիի դիմաց: Հեռագիտէ այցելից ու տեսաւ Լիբանանի լեռնային ու ծովեզերեայ տեսարժան շրջանները: Գացած էին մինչեւ Պաալպէք, մինչեւ Արզ,

digitised by A.R.A.R.@

տեսած էր դարաւոր մայրիները: Իր ընկերու հիներէն շատեր բախտաւորուած էին նման պտոյտներու ընթացքին, ծանօթանալով երիտասարդներու: Ինք եւս կը սպասէր «հերմակ բախտի» մը, որ կ'ուշանար յայտնուելու: Արդէն 23 տարեկան եղած էր: Եթէ քանի մը տարի եւս ուշանար, տունը մնացած աղջիկներու շարքին պիտի նկատուէր: Փորձեց մօտենալ ազանէրուն, որոնք սակայն կարեւորութիւն չէին տար իր ժպիտներուն: Գերճուհի գիտէր, թէ ինք գեղեցիկ չէր, բարձրահասակ չէր, ուսեալ չէր, որը էր, ինքնաշարժ չունէր: Ո՞վ պիտի ընդառաջէր իր ժպիտներուն: Ինքնաշարժը կը հրապուրէր գոնէ աղքատիկ երիտասարդները:

Օր մը, գործատեղիէն արձակուելէ առաջ, կէսօրին արտօնութիւն խնդրեց վերակացուէն, անհանգստութիւն մը պատրուակելով, ուղղուեցաւ դէպի Անթիլիասի ծովափը: Սերվիս ինքնաշարժը զինք տարաւ իր ուզած ծովափը: Մարդին մէջ լողալու ծրագիր չէր կրնար ունենալ, քանի որ լողալ չէր գիտէր: «Գոնէ կը պտտիմ», անցուց աղջիկը մտքէն: Հեռուէն նայեցաւ ծովուն. ալիքները կարծես զինք հրաւիրեցին. «Եկո՛ւր, ի՞նչ կեցեր ես ապուշի պէս, մեր գիրկը տաք է», ըսին: Բայց Գերճուհի ինչպէ՞ս նետուէր ալիքներուն գիրկը...: Երանի տուաւ լողալ գիտցող աղջիկներուն ու, ափսոսալով իր բախտը, տրտում դիտեց ծովը: «Որքա՜ն ազէտ եղած է մայրս, որ լողալու առիթներ չէ ստեղծած», մտածեց Գերճուհի, մայրը պատճառ նկատելով իր դժբախտութեան: Ո՞վ պիտի նայէր այսպիսի ազէտ աղջկան մը երեսը...

Միտքը եւ ոտքերը քալեցին միասին, քալեցին, մինչեւ որ հասաւ խարխուլ մակոյկի մը քով, ուր նշմարեց գեղագէմ երիտասարդ մը: Կարծես մէկը յուշեց ներաչխարհէն. «Ահա՛ այս է բախտդ, փնտռածդ, մօտեցի՛ր եւ խօսէ հետը»:

Գերճուհի մօտեցաւ անծանօթին, ժպտուն: Ինքն ալ զարմացաւ իր համարձակութեան: Գանի մը քայլ յառաջացաւ: Երիտասարդը անցաւ մակոյկին ետեւը: Գերճուհի հետեւեցաւ անոր քայլերուն: Երիտասարդը զգաց իրեն հետեւող «չուքին» նպատակը, կարծես կարդաց աղջկան միտքը ու, իր կարգին, ժպտեցաւ բնազդաբար...

Թաղին մէջ Գերճուհիի գոյութեան ոչ ոք անդրադարձած էր: Կար ու չկար ինք: Ան պարզապէս թաղին անկիւնը խցկուած խրճիթին բնակիչն էր: Մայրը, փոքրակազմ, անշնչեր երեւոյթով կին մը, որ օրը կ'իրիկնացնէր ըրջանին մէջ գոյութիւն ունեցող գուլպայի գործարանին մէջ, տնտեսուհիի ծառայութեամբ աշխատելով, իրիկունը յոգնած տուն կը վերադառնար: Կը վարէր փրիմիւսը (քարշուղով վառող օճախ), ապուր մը կամ «երկու դգալ» եղինձ եփելու համար: Կ'ուտէին գոհունակ, մայրն ու երեք զաւակները: Իսկ չորրորդ աղջիկ զաւակը յանձնած էր բարեկեցիկ ընտանիքի մը, իրենց տունէն քիչ հեռու, երեկոյեան տուն վերադառնալու պայմանաւ: Այդ հարուստ տան մէջ աղջնակը կը սորվէր առտնին աշխատանքներ:

— Լուսի՜ն, ջուրին մէջ օճառի փուչին չատ մի դներ, ձեռքերդ կը փճացնէ: Գնա՛, երկու գաւաթ սուրճ եփէ, որ խմենք Աւետիս ազային հետ: Եւ ալ վարը՝ բակը իլիր ու ադու որ աւել մը զարկ...

Այսպիսի հրահանգներուն կը միանային նպարավաճառէն մանր-մունր առեւտուր կատարելու պարտականութիւնը:

— Լուսի՜ն, սիկարէթը վերջացեր է, գնա՛ պազալ կարապետին, երկու տուփ սիկարէթ բեր, մէկը՝ «Գէնթ», միւսը՝ «Մայոտրօ»: Երեք չիչ ալ «Փեփսի» բեր. թուշուեի պէս, հա՞...

Դիտակից էին իրենց տան խեղճուկ մթնոլորտին, ուր ոչ մէկ հիւր կ'այցելէր, բացի պառաւ Խաթունէն, որ երեկոյեան իր քունին ժամերը «տնցրնելու» տեղ մը կը փնտռէր. մինչեւ ուշ գիշեր պառաւ Խաթունին քունը չէր գար,

digitised by A.R.A.R.@

Արուսեակին խրճիթը յաւագոյն քնարեր օրօրն էր: Հոն եթէ մրափէր իսկ խուկալով, քրթմնջացող չէր բլլար: Երբ Գերճուհին սուրճը հրամցնէր մատնեւ-բովը ուսին թափառցնելով, Խաթուն աչքերը կը բանար — բերանը արդէն բացուած կ'բլլար — ու կ'բուր.

— Հաւատա՛, որ չէի քնանար, աղջիկս. այդպէս մրափ մը եկաւ—անցաւ: Երբ անկողին մանեմ, քունս կը փախի...

Ամէնէն անուշ պահն էր այս տիկին Արուսեակին ու Խաթուն Աէնէին համար: Ամբողջ օրը բերանը կը չորնար Խաթունին: Կը ապասէր երեկոյեան, իրճիթին ժամագրութեան: Ֆրոթ—Ֆրոթ, ագմկելով կը խմէին երկու կիները, իրարու պատմելով դրացի բնաւնիքներէն լսուած «ներքին» պատմութիւնները:

— Լուսածիներին հարսը դարձեալ ժորը տուն դացեր է, քանի որ կեսուրը անդադար լուացք բնել կու տայ եղեր: Մինասենց աղջկան խնամախօսները յետաձգած են այցելութիւնը, քանի որ շար լեզուներ ըսած են, որ Մինասին աղջիկը կը պարէ խումբի մը մէջ, ճիշդ քէաբրոյի աղջիկներուն պէս: «Լատուած բախտաւոր բնէ, քեզ, աղջիկս», կ'ըսէր սուրճին պարպուած գաւաթը երկարելով:

Գերճուհի թերահաւատութեամբ կը լսէր պառաւ Խաթունին մաղթանքները: Լա՞ւ անոր, թէ ով պիտի մտանար իրեն...: Եթէ խնամախօսի հիւրեր իսկ գային, տունը աթոռ մը իսկ չուներէն՝ հիւրերը նստեցնելու: Գէտք է քանի մը աթոռ բերէին դրացի տուներէն: Անգամ մը այդպէս եղած էր: Հիւրեր եկած էին Գերճուհիին աղջիկտեսի: Անճապարանքով քանի մը աթոռ եւ սեղան մը բերած էին դրացիներէն: Վազքին ու հեւքին հետ՝ տիկին Արուսեակին ոտքը սահած էր, մուճակը մնացած էր դրան սեմի ցեխին մէջ: Եւ ուղուրսուզ նկատած էր այցելութիւնը: Հիւրերը եկած ու դացած էին: Գերճուհին քաղցրահամ սուրճ հրամցուցած էր, բայց մեկնելէ ետք հիւրերը փիրաղատնոյ փափաք չէին յայտնած: Գերճուհին յիշեց անցեալին կատարուածը: Խաթուն նէնէին մաղթանքին շհաւատար...: Ինք կը զգար, թէ բախտաւոր չէր: Եթէ ինք այ քիչ մը դրամ ունենար, ու դնոց հագուստներ հագնէր, կահաւորուած գեղեցիկ տան մը դուռը բլլար, եթէ ինքնաշարժ մը ալ ունենար...: Հապա ինչո՞ւ: Մեսրոպին տգեղ աղջիկը շուտով ամուսնացած էր: Փեսային ամբողջ տունը ինք կահաւորած էր: Հայրը երկու միլիոն դրամագիտ խոստացած էր Թորոսին՝ այդ գեղեցիկ, երիտասարդ ազուն...: Մեսրոպին աղջիկը իր դասարանն էր, ծո՞յլ: Երբ երկու տարի նոյն դասարանը կրկնեց, հայրը արժանապատուութիւնը փիրաւորուած նկատեց, աղջիկը հանեց դպրոցէն, վստահելով իր հարստութեան: «Դպրոցը ի՞նչ արժէք ունի,— ըսած էր Մեսրոպ իր բարեկամներուն,— աղջիկ մը մայր բլլալու սահմանուած է, եւ մինչեւ քսան տարիքը պէտք է ամուսնացած բլլայ...: Թոզ ամուսնանայ աղջիկս: Եռտ կարդացած աղջիկներուն հետ գլուխ չենք կրնար ելլել», կրկնած էր բոլորին, իմաստունի հովեր առնելով:

Գերճուհի տեղեակ էր կեանքի անցուդարձերուն, փայլուն ապագային, յոյսը կարած՝ կ'երթար աշխատելու: Եւ ահա, այսօր, ան «գիւտ» մը բրած էր. ծովափի պտոյտը, ուր հանդիպած էր Մելքոնին:

Թաղին մէջ իրարանցում կար: Վայրկեան կը կը վկայէր, թէ անհանգիստ պլոգ մը պատահած է:

— Վա՞յ, ա՛յս էր պակասը. այսքան առ մը բերէն ու մահերէն ետք՝ ա՛յս ալ պիտի տեսնենք եղեր... Լուսի՛կ, լսեցի՞ր, եկեղեցիին դրան առջեւ հսրածին մը գտնուեր է: Ամբողջ գիշեր երեխան ճչացեր է: Թաղեցիները արթնցեր են ու ի՞նչ տեսնեն... ձայնը կու գայ եկեղեցիին գաւիթէն: Ակումբի պահակ տղոց լուր տուեր, պէպէէր ակումբը տարեր են, յետոյ, պատասխանատուները տի-

digitised by A.R.A.R.@

կին Սրբուկին յանձներ են երեխան: Բա՛, Սրբուկը իր չոգուխներո՞ն նայի, թէ... մեղա՛յ, մեղա՛յ, այս ինչ օրերու մնացինք, Աստուած իմ... Սողոմ-Գոմոր... կրակ պիտի տեղայ... տեղացած կրակները չէին բաւեր կարծես... գե՜ռ, գե՜ռ...

Դուռ-դրացի լուրը կը տարածեն թաղին մէջ: Սրբուկին տունը կը վերածուի ուխտատեղիի: Կ'երթան տեսնելու երեխան: Կը քննեն, կը վերծանեն, երեխային աչքերուն եւ գլխոյ գիծերուն կը նային երկար: Որո՞ւ կը նմանի արդեօք, ծանօթ մէկու մը կը նմանի՞...

— Վա՛յ եաւրում, վա՛յ... քա՛ ո՞ր անխիղճին գործն է այս,— կը սրսփայ կին մը,— ի՞նչ անուշիկ է, Սրբուկ, շամիշի պէս աչքեր ունի... հայու զաւակ ըլլայ... կարծես թէ...

— Դուն ալ անմիջապէս հայերուն փակցուցիր: Ամա՛ն, Լուսածի՛ն, հայերը այս տեսակ գործեր կ'ընե՞ն... պիտուիլ մը յակոտն է ասիկա,— բերանս բանալ մի տար...

***

Սրբուկ մօր մը դուրգուրանքով կը խնամէր անտէր երեխան, Աստուծոյ սիրոյն կ'ընէր: Հոգ չէ, թող կարծէ, որ երեքի փոխան չորս զաւակ ունի... Աստուծոյ գործն է, այս ալ բարիք մը՝ն է, ըսաւ Սրբուկ ու անարտաւնջ սնուցանեց օտար մանուկը:

Հազիւ քանի մը շաբաթ անցած էր գէպքէն, թաղեցիներն ալ մոռցած էին, որ Սրբուկի տան մէջ ընկեցիկ մը կը մեծնայ:

Այդ օրերէն որ մը, առաւօտ կանուխ, թաղը արթնցաւ կնոջ մը խելացոր-նոր ճիչերէն: Ո՞վ էր այդ ճչացողը, անասնային պոռչտուքով, որ կը տարածէր առաւօտեան լռութեան մէջ: Թաղեցիներէն շատեր պատշգամ ելան, ոմանք փողոց իջան: Լուսածինը հարցուց դրացի Եսթերին.

— Աստուծոյ հարը չըլլայ, Եսթեր: Անպայման խեղճին Ֆրիզը բռներ է նորէն...

Անսովոր ճիչը կը կրկնուէր: Մարդիկը կը բազմանային փողոցին մէջ: Ի վերջոյ բան մը հասկցուեցաւ ճչացող կնոջ պոռչտուքներէն.

— Մելքո՞ն, Մելքո՞ն...

— Բա՛, Լուսած, Մելքո՞ն որ ով է. մեր թաղին մէջ Մելքոն անունով մէկը կա՞յ:

— Մելքոնը, որ խաթրդի եղած էր, մոռցա՞ր...

— Այո, խաթրդի, բայց վերապարձած էր: Այդ Մելքոնէն ուրիշ Մելքոն չկայ այդ թաղին մէջ: Բայց զարմանալի է. ինչո՞ւ կը պոռայ այս կինը փողոցին մէջ, ուրկէ՞ եկած է... խելագա՞ր մը՝ն է արդեօք...: Լսէ՛, լսէ՛ «զաւակս, զաւակս» կը պոռայ կինը: Այս ի՞նչ փորձանք է, Աստուա՞ծ իմ...

«Ես խնդիր չեմ, ես զաւակս կ'ուզեմ», կը կրկնէր ան անգադար, արտասմլիկ ու ողբաձայն, որմէ մարդիկ կը յուզուէին, կ'ընդվզուէին: Հաւաքուած կիները կու լային, իւրաքանչիւրի մտքին մէջ կասկածներ կ'արթննային... բայց ինչպէ՞ս օգնէին...: Լուսածինը դարձեալ կը հարցնէր Եսթերին.

— Բա՛, Եսթեր, Սրբուկին քովը եղած մանկիկը չըլլայ...

— Ամա՛ն, Լուսածին, հոգիդ սիրեմ, մեկմէ թող չելլէ խօսքդ: Ես ալ Մելքոնէն կը կասկածիմ...: Զէ՞ որ խաթրդի է ըսին: Մարդը աղջիկը գլխէ հաներ է... փո՛ւհ...

digitised by A.R.A.R.@

Առեղծուածը լուծուած էր: Գազոնիքը բացայայտուած: Նոյն օրն իսկ Սրբոյ կը երթայն տարաւ ու յանձնեց Մելքոնին կնոջ, ահաւոր նախատինքով.

— Ա՛ռ, ամուսինիդ պատուոյն է, փայլէ, միանգամուն հետ տասը տարի կոթ տուր... ես այս տեսակ բարեգործութիւն չեմ կրնար ընել... աշխարհը ծուռ դարձած է: Ես փիլիսոփայ չեմ կրնար խնամել...: Աղտո՛ռ, միքրոպ, հայութեան պատիւը մէկ փարա բրաւ...

Գերճոյ հին ցնցուեցաւ, պապանձեցաւ, ճչացող երթալն դրաւ իր անկողնին ծայրը եւ, աչքերը ուռած՝ նայեցաւ անոր երկար...

Զգայացուցց նորութիւնը լսուեցաւ ամբողջ թաղին մէջ: Մելքոնը ապօրինի զաւակ մը ունեցեր է...: Փո՛ւհ... ապօրինի կնոջմէ մը, որ... որ... խենթեցեր է...: Մելքոնը հիսը ապրելէ ետք, փախեր, կորսուեր է...: Կինը հետքը գտեր է...: Խենթանոցէն փախեր, եկեր է, զաւակը կ'ուզէ...: Վա՜յ մեր գլխուն, Սոդոմ–Գոմորի զաւակ... բնաւ չէինք լսուար...: Սուսիկ–փուսիկ Մելքոնը...

Մելքոնը հանչցողները փորձեցին մեղմացնել ծանր յանցանքը.

— Գատերազմ է, ցաւնրմ, սատանկ բաներ կը պատահին. այսքան ռումբերու տակ, տպատանաբաններուն մէջ, մարդիկ իրարու խառնուած ապրեցան գիշեր–ցերեկ. արկած մը պատահեր է... մի մեծցնէք... մեր հայերն են...: Հրեանները մանաւոր արէնքներ եւ հրահանգներ ունին այսպիսի «զորձերով» մարդիկ չատցնելու...: Սխալիլը մարդկային է...

— Մենք հրեայ չենք, պարո՛ն Կիրակոս,– ըսաւ Լուսածին Մելքոնին՝ յանցանքը մեղմացնող մարդուն:

— Աղջիկն ալ թող չիարուէր... երիտասարդ է, ազատ է... մայրերն ալ իրենց աղջիկներուն ուերը թող ըլլան...: Ուրիշ ազգերու մէջ ինչե՛ր կան: Անոնք կը զոցեն, բայց մենք հաւար կը փրցնենք: Հայ մը աւելցեր է... ինչ լա՛ւ: Շահեր ենք... մրի զաւակ...

— Ինչե՛ր կ'ըսես, պարո՛ն Կիրակոս, այս տեսակ զաւա՛կ... մոռցա՞ր, որ մենք հայ ենք, ցաւիքութ (հրեայ) չենք...: Խեղճ աղջիկը խենթեցեր է... ինչո՞ւ համար էլին աղջկան արեան մոած է, մա՛նաւանդ՝ որ ամուսնացած մարդ է Մելքոնը... չոլուխ–չոնուխի տէր...

Աղջիկն ալ թող չիեանթանար: Հանդիպած մարդուն սէր չեն կապեր...: Եթէ ինծի ալ այդ տեսակ մէկը մոտենայ...: Ամուսնացած մարդուն սէր կու տա՞ն...

— Լռէ, պարոն Կիրակոս, կինդ չսէ...: Աղջիկը ինչ թող գիտնար, որ Մելքոնը ամուրի է, թէ ամուսնացած...

— Մի երկարէք, ճանըմ, վաղը մանուկը որբանոց կը դնեն, կը փակուի հարցը...

— Ի՞նչ որբանոց, Մելքոնին մօրաքոյրը խոստացեր է խնամել: Մելքոնին մօրաքոյրը ամուլ էր. անոր բախտը բացուեր է. մրի զաւակ...

— Է՜հ, հարցը լուծուեր է ուրեմն,– ըսին զրուցողները, բամբասողները, իսկ Կիրակոս բաւ յոխորտալով.

— Էֆերի՛մ Մելքոն, երանի թէ ամէն հայ երիտասարդ այս տեսակ հերոսութիւն ընէր...

— Անհամ խօսքերու ժամանակը չէ, պարոն Կիրակոս, աւելի լաւ է չխօսիլ,– ըսաւ ծերունի մը, որ մինչ այդ լուռ մոռկ կ'ընէր շուրջի խօսակցութիւնը: — Մենք հայ ենք, Կիրակոս, հասկցա՞ր, մենք անգլիացի, ֆրանսացի կամ հրեայ չենք, որ փոպոցին մէջ...: Դրացի կնիկներուն բերանը խօսք պրինք. բեն է բէ՝ խիվ...: Բոլորդ ալ զաւակ ունիք, մեծ–մեծ մի խօսք. ազորման հոգի հայրս կ'ըսէր. «Գատաւոր մեծ կերէք, բայց խօսքը մեծ մի խօսք...»:

digitised by A.R.A.R.@

***

Գուգուն շատ շուտ անհետացաւ։ Արդէն քալել սկսաւ։ Արդէն երեք տարեկան է, գպրոց կ'երթայ, եւ գպրոցին տնօրէնութիւնը ժրի աշակերտներու ցանկին մէջ արձանագրեց Գուգուին անունը։ Գողնոցն ալ ժրի տուին։ Բայց տնօրէնը չհաւանեցաւ Գուգու անունը։ Ան երեխան խնամող կնոջ ըսաւ.

— Գուգո՞ւ... փողոցը գրուած անուն մըն է, մենք գայն կը կոչենք Գրիգոր։ Աւելի հայկական է ու մարդավարի...

Գրիգորը ուրախ էր նոր անունով, մտքով պայծառ, չա՛տ ընկերային, միշտ ժպտուն եւ հանդիսակատար։

Թաղի կիները մանրամասնօրէն տեղեկացան խենթեցած կնոջ կենսագրութեան.

— Լուսածին, գիտե՞ս, այդ խենթ կինը «Տէր Սոյիպ» տարեր է...

Նոր ու հետաքրքրական լուր հաղորդողի փութկոտութեամբ օր մը ետքեր ըսաւ Լուսածինին։ Իսկ Լուսածին պատասխանեց.

— Աստուած օգներ է, ամիսներով մեր որտերը հալեցուց... Աստուած պատժէ յանցաւորը, մեր գիտնալիքը չէ այդ...։ Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Մի դատեր, որ չդատուիս...»։

***

Գիշերային ուշ ժամերուն, եթէ մանչուկ մը տեսնէք հայկական ընտանիքներով բնակուած թաղի մը մէջ՝ Գրիգորն է ան։ Ուշ ժամերուն ո՛չ մէկ մանուկ կը յանդգնի մնալ փողոցը, եթէ նոյնիսկ այդպիսի յանդգնութիւն մը գործէ սխալմամբ, մայր մը կամ հայր մը գինք պիտի փնտռէր, անկասկած։ Ուրիշ փողոցներու մէջ եւս ուշ ժամերուն երեխաներ չէին ալքտար, ո՛չ մնաց պահպանողական ընտանիքներով բնակուած թաղամասերու փողոցներուն մէջ։ Ամէն մարդ գիտէ, որ մանուկները երեկոյեան առաջին ժամերուն կը քնանան։ Բայց Գուգուին ուշ գիշերուան դեղերու մները գարմանք կը պատճառէին բոլորին, մասնաւորաբար այդ թաղերէն քիչ անգամ երթեւեկող մարդոց։

Թաղեցիները բնակեցան Գուգուին ցերեկային թէ գիշերային ներ-կայութեան, եւ նոյնիսկ սկսած գինք նկատել փողոցին անհրաժեշտ մէկ մասը, իրը, պիտոյքը, ինչպէս անկիւնադարձի ճամբու քարը, կամ մսավաճառի լուծը, եւ կամ եղեկտրական սիւնը...

Յետմիջօրէին, հապէ՛ գպրոցէն արձակուած, Գուգու արդէն փողոցն է։ Հացի փաթեթ մը ձեռքին, մէջը կտոր մը պանիր կամ լեպեն, եւ կամ՝ ծիրանի անուշ, երբեմն ալ՝ մարքատելի կտոր մը, կ'ուտէ ախորժակով։ Կրծել-ծամելէ ետք, արդէն մսավաճառը ձայն կու տայ իրեն, իւղոտ մատներուն միջեւ սեղմած լիրանանեան թղթադրամի կտոր մը, հինգնոց մը, տասնոց մը, կամ քսանհինգնոց մը, պատուիրելով անոր.

— Գուգո՛ւ, գնա՛ երկու «Փեփսի» բեր, մէկը գուն խմէ, միւսը՝ ինծի...

Քիչ ետք, թաղին միակ սուրճիչը ձայն կու տայ.

— Գուգո՛ւ, ա՛ռ սա տասնոցը, «Մալպորօ» մը բեր, մնացածը գրպանդ դիր...

Գուգու այսպիսի մանր-մունր, շատ «չտհարեր» գործերը կը կատարէր յատկութեամբ, ուրախութեամբ։ Երբ հանդիպէր իր դասընկերներուն, անոնց

digitised by A.R.A.R.@

ցոյց կու տար գրպանին պարունակութիւնը: Հարուստի զաւակ մը նոյնիսկ չէր ուզեր Գուգուի գրպանին հարստութիւնը: Այս երեւոյթը նախանձ կը շարժէր: Զրօսանքներուն, գարմացած՝ Գուգուին դասընկերները օրիորդին ուշադրութեան կը յանձնէին Գուգուին դրամները: Կ'ըսէին թէ գողցած է: Գուգուին հայրը հարուստ չէր, ուրիշ՝ կը բերէր այդքան դրամ...: Ինչո՞ւ հա-մար միւս մանուկները չէին կանչեր թաղին խանութպանները, սափրիչը, գո-վացուցիչ կամ ծխախոտ գնելու չէին դրկեր զանոնք: Գուգուն, մի՛շտ Գու-գուն...

Ուշ ժամերուն, երբ խանութները կը փակուէին ու վերջին բաց խանու-թին յոյսերն ալ մարէին, Գուգու տուն չէր երթար. դիտէր, որ քիչ անդին փոք-րիկ պահականոց մը կայ, ուր առանց վախնալու կ'ուզուէին երիտասարդներ, պատանիներ, նոյնիսկ ծերեր: Գուգուն անվախ կը բարձրանար սանդուխնե-րէն, եւ միշտ ժպտուն, գլուխը թեքեւ մը թեքած աջ ուսին, ցուցամատը բեր-նին՝ կը նայէր իր շուրջինները, որոնք կը բացագանչէին տեղական ոճով.

— Էհէ՛ն, Գուգու, էհէ՛ն...

Քաղաքերուած սիրալիր հրաւէրէն, տղեկը կը տեղաւորուէր պատկե-բասփիւռին դիմացը գտնուող աթոռակին վրայ, կը դիտէր յայտագիրները, մինչեւ հաղորդումներուն աւարտը: Ոչ ոք կը նկատէր Գուգուին երկար ժա-մեր պատկերասփիւռին դիմաց լուռ նստիլը, բացի պահականոցի հայրիկէն, որ ի վերջոյ կ'ըսէր մանչուկին.

— Գուգո՛ն, տղա՛ս, զեռ քունդ չեկա՞ւ... Էլ, տո՛ւնդ դնա: Հայրդ-մայրդ չե՞ն սպասեր...

— Հայրս բան չ'բռնէր: Մայրս, մայրս... խորթ է, ան ալ բան չ'ըսեր...

«Հայրիկը» կը զարմանար, բայց կը յարգուէր Գուգուն, որ տուն երթայ եւ քնանայ, որպէսզի յաջորդ առաւօտ կարենայ արթննալ ու դպրոց երթալ:

— Վաղը առաւօտ դպրոց պիտի երթաս, տղա՛ս, արդէն կէս-գիշերը անցեր է...

Գուգու վար կ'իջնէր կատուի փափուկ քայլերով, կը հասնէր տուն: Ին-չո՞ւ վախնար մութէն: Ինք գիտէ, որ իւրաքանչիւր փողոցի անկիւնին հայ ագաք պիտի խօսէին իրեն հետ, պիտի ասային շոֆոլայի կոտոր մը, կամ քանի մը պիստակ, ափ մը կուտ:

Մինչեւ տուն հասնիլը, ճանապարհին Գուգու կը տեսնար պահակա-նոցներու առջեւ: Տուն հասնելուն ոչ ոք կը նկատէր անոր մուտքը: Տան գուռը կիսով մը բաց կ'ըլլար արդէն: Գուգու ներս կը սպրդէր, կը հասնէր փոքրիկ անկողնին, որ գետինը փռուած իրեն կը սպասէր: Խորթ մայրն ու հայրը կը քնանային խոր քունով: Գուգու կը հագար: Հայրը կ'արթննար տղեկին հագէն, կ'ունդրեցուցնար, թէ նոր տուն կու գար գուտիր, բայց ոչ իսկ դիտցուր թիւն մը հօրը կողմէ: Ամէն ինչ բնական ըլլար կարծես...: Տղան տուն եկած է. ան գիտէր, թէ ուր էր: Առաւօտուն թող ուշ արթննար. ինչ վնաս ունի, թող քիչ մը ալ ուշ երթայ դպրոց, փիլիսոփայ պիտի չըլլայ...

Առաւօտները, մինչեւ դպրոց հասնիլը, ճամբուն վրայ Գուգու կը ժպտի իրեն հանդիպող ծանօթ եւ անծանօթ բազմաթիւ անցորդներու. կը բռնէ պա-սահական հիւրասիրի մը ձեռքը, քայլ մը եւս կը դնէ ութկնոջ մը պոյտ-սակին, եթէ պայտսակը լեցուն է պտուղով, կ'ըսէ կնոջ.

— Մէկ հատ կու տա՞ս...

Այս խնդրանքին հետ Գուգուին սեւուկ աչքերը կը պնդուան յոյսին շո-ղերով: Ան վստահ դիտէ, թէ պիտի չմերժուի: Բարի տիկին մը՝ իրեն նայողը, որ կը ժպտի զարմանքի եւ անհանդիստի մատնուած մարդու մը տարտղնու-թեամբ, ապա նարինջ մը կ'երկարէ շատ համարձակ մանչուկին: Գուգու նա-

digitised by A.R.A.R.@

բինջին կեղեւները կրծելով, ակռաներովը կեղուել ուզելով՝ կը հասնի դպրոց, ազատուս ձեռքերով ու բերանով։

Երբեմն կը պատահի, որ ճամբուն վրայ Գուգու զբոյցի «բոնուիթ» պայուսակով չալակաւոր տանտիկնոջ մը հետ, ու անոր ըսէ.

— Ես ձեր տունը գիտեմ, հո՞ն է. հետդ գամ...

Եթէ խոսակիցը տրամադիր է ու ժպտուն, իր կարգին, պայուսակը կը յանձնէ Գուգուին, որ արդէն կիսով մը քաշած-բռնած կ'ըլլար պայուսակին կոթէն։ Տղեկը, մոռցած դպրոցը, կը թռէր կնոջ քայլերուն առջեւէն։ Ժամ մը ետք կը յիշէր դպրոցը, ուր, ուսուցչուհին զինք անտեսելով՝ դժգոհ կ'ըսէր.

— Գուգու, ո՞ւր էիր. գարձեա՛լ ուշացար... քեզի քանի անգամ ըսած եմ, որ իրիկունները չուտ քնանաս, ակումբ չերթաս, փողոցները չդեգերիս, որպէսզի կանուխ արթննաս ու դպրոց գաս։ Գահականոցը երիտասարդները կ'երթան։ Դուն փոքր ես, ամէն իրիկուն դաս պէտք է սորվիս։ Եթէ այս ձեւով շարունակես՝ դասարանը պիտի կրկնես...

Գուգու կարծես չէր լսեր օրիորդին խորհուրդ-խրատները, ուր թոթ-ւելով, գոգնոցին թեւով կը սրբէր խոնաւ քիթը, ապա կը մտնէր դասարան։ Ընկերները կը նային իրեն։ Ուսուցչուհին կարծես չէր նշմարեր ուշացած տղեկը, մինչ դասընկեր մը կ'ըսէր բարձրաձայն...

— Գուգու, այսօր քանի՞ խնձոր, քանի՞ նարինջ չահեցար։ Մէկ հատը ինձի կու տա՞ս...

Գուգու հինգ մատները լայն բացած՝ ցոյց կու տար, ժպտելով, մինչ ուսուցչուհին կը սաստէր Գուգուին հետ խօսող տղեկը, որպէսզի դասարանը չխանգարէ...

***

Գուգուն բարեկամն է մեծ-մեծ մարդերու, խանութպաններու, արհեստանոցներու աշխատաւորներուն եւ վարպետներուն, տանտիկիններուն։ Անոնք գիտեն, որ Գուգուն ընկերցիկ մըն է։ Կը ներէին անոր բոլոր զարտուղի քմայքներն ու անատակութիւնները...

Գուգուն փողոցին «զարդն» ու «զարտն» էր. թագեցիներուն ճանձրոյթը, խանութպաններուն զուարճութիւնը, տանտիկիններուն գլխացաւն ու տաղտուկը։ Թաղին մանուկներուն ինչե՞ր ու ինչե՞ր սորվեցնող ատատան։ Գուգուին հասակին երկարելուն հետ՝ կ'երկնար նաեւ յանցանքին «հասակը», լեզուին «լայնքը»։ Թաղեցիները կը գանգատէին ամէն օր։ Գուգու սկսած էր ափը բանալ անցնող-դարձողին։ Գանգատները կը հասնէին դպրոցի տնօրէնութեան։ Խրատ, անուշ խօսք, սպառնալիք, պատիժ, օգուտ չէին բներ։ Կը լսէր իրեն ուղղուած խօսքերը, բայց ականջ չէին կախեր։

— Վարժուեր է,— ըսին ուսուցչուհիները։

— Վարժեցուցին,— ըսաւ անօրէնը։ — Դրամ կ'ուզէ, եթէ չտաս՝ պիտի գողնայ...

— Գուգու, թոչունի պէս վազէ եւ երեք ֆարրուած բեր սիւփրը մարքէթէն...

— Գուգու, անապարէ, պագալ Մինասէն մէկ տուփ հաւկիթ բեր...

Այսպէս, բոլորին խնդրակատարն ու փորձանքը եղած էր Գուգու։

Օր մը ալ, տիկին Սրբուկ առաջարկեց Գուգուին հօրը՝ մանչուկը յանձնել «Թռչնոց Բոյնը», ուր կարելի էր զայն դասատրաբակել՝ իրրեւ տիպար աշակերտ։

digitised by A.R.A.R.@

Մելքոն յօժարեցաւ, նոյնիսկ ուրախացաւ տիկին Սրբուկին առաջարկին համար։

— Մելքոն, եթէ այս ձեւով շարունակէ՝ տղայ փողոցային աւազակ մը պիտի ըլլայ։ Խորթ մայրը չի կրնար հոգալ։ Մօրաքոյրդ չի կրնար իրմով զբաղիլ։ Խեղճը գործի կ'երթայ։ Գուգուն բացառիկ խառնուածք մը ունի, անվախ է ու յանդուգն։ «Թոչնոց Բոյնին» մէջ դիշեր-ցերեկ ապրելով, ո՛չ պագալ կը տեսնէ, ո՛չ մասվաճառ եւ ոչ ալ չուկայ գացող տանտիկիններու կը հանդիպի։ Որբ մրն է, կ'ընդունին։

∴

«Թոչնոց Բոյնի» անօրէնութիւնը սիրով ընդունեց Գուգուն արձանագրել հառաստութեան սանեերու տոմարին մէջ։

Գուգուն տարին «Թոչնոց Բոյն»։ Մանչուկը նախ զարմացաւ չրջապատի լռութենէն, տրամեցաւ, բայց երբ չուրջը տեսաւ ծառեր, եւ քիչ անդին՝ ծովը, ուրախացաւ, մասնելով թէ հոն եւս կարելի էր նոր արկածախնդրութիւններու յանձնուիլ։

Ամբողջ թաղը ուրախ էր ու հանգիստ։ Հանգստացած էին մա՛նաւանդ Գուգուին տարեկից գաւակներ ունեցող մայրերը։

— Մե՞նք փրկուեցանք, թէ ինք,— ըսաւ տիկին Սրբուկ գրացի եսթերին, որ սփիքին ծայրը խածնելով՝ կ'ըսէր։

— Ասուած հեռու ընէ, Սրբուկ, թշնամիս ալ այս տեսակ գաւակ չտայ...

Այս ուրախութիւնը հազիւ երկու ամիս տեւած էր։ Գուգուն անակնկալօրէն յայտնուեցաւ թաղին մէջ։ ան չէր կրցած ընտելանալ «Բոյնի» կեանքին։ Միշտ երազած էր իր թաղը, փողոցը, անառակութիւնները, եսթերին տանիքին հաւնոցը, Սրբուկին շունը, պահականոցի տղաքը, դպրոցին օրիորդները, մեծերուն հետ մեծավարի խաղերը, մասվաճառ Երեմը, եւ պագալ Յակոբջանը։ Հայրն իսկ տեղեակ չէր Գուգուին վերադարձէն։ «Թոչնոց Բոյն» այցելող հիւրի մը ինքնաշարժին մէջ ապրելով՝ վերադարձած էր տուն։ Լուրը տարածուած էր թաղին մէջ։ «Գուգուն փախեր-եկեր է, շուները հալածելը կարօտցեր է, պահականոցին տղոց գէնքերը կարօտցեր է, օրիորդները կարօտցեր է»։ Ըսին խանութպաններն ու զինք ճանչցող տանտիկինները։

Տուն վերադարձին՝ Գուգուն հօրը ըսած է գլխիկոր, մեղմ ու տրտում ձայնով, ամօթահար, յանցագործի մը պէս։

— Որբերու դպրոց է հոն, ես հոն չեմ կենար, պապա, ես... ես որբ չեմ, հայրիկ... Յակոբիկը ըսաւ, որ «դուն երկու մայր ունիս, մէկ հայր ունիս, ես ո՛չ հայր եւ ոչ մայր ունիմ, եթէ ես երկու մայրի փոխարէն մէկ մայր իսկ ունենայի՝ կը փախչէի...։ Եթէ ես տեղդ ըլլայի՝ տուն կ'երթայի...»։

Այս նախադասութիւնը կրկնած էր Գուգուն լալով։ Հայրը առաջին անգամ ըլլալով տեսած էր զաւակին լացը եւ սիրար ցաւած՝ գառնօրէն...։ Գուգուն ինք ալ առաջին անգամ ըլլալով տաք արցունքին զոյութիւնը հառաստատած էր աչքերուն մէջ եւ այտերուն վրայ...

∴

Տէր Սայիպի հոգեբուժարանի գարմանատան մէջ, հոգեբոյժը հարցումներ կ'ուղղէր սեւ աչքայ Գերմու հիին, որ անճանաչելի դարձած էր. դէմքը

digitised by A.R.A.R.@

փքուած աչքերուն ներքեւ եւ շուրջը փոքրիկ պարկեր եւ թոյլ խորշոմներ գոյացած, աչքերուն փայլը ազօտած, նայուածքը անորոշ կէտի մը վրայ... անկապ բառերով կը պատասխանէր բժիշկին հարցումներուն։

— Դեղահատերը առա՞ծ ես, Գերմուհի...

Փոխանակ պատասխանելու, Գերմուհի բազուկները երկարեց երիտասարդ բժիշկին պարանոցին, զայն օղակեց, սեղմեց, ապա քրքիջով բաւ.

— Ծով պիտի երթամ, տոքթոր, Մելքոնը կանչեր է դիս, ես իր ձայնը միշտ կը լսեմ. «Գերմուհի՛, եկուրջ, կ'ըսէ...

— Մելքո՞նը ով է...

— Դուն զաւակս տեսա՞ծ ես, տոքթոր, սեւ-սեւ աչքեր ունէր, շատ անուշիկ տղայ մըն էր, ո՞ւր տարին՝ չեմ գիտեր...։ Ծովը շատ գեղեցիկ է, տոքթոր... ես կապոյտ այիքներէն չեմ վախնար, կ'երթամ հեռո՛ւ, հեռո՛ւ, ուրկէ մարդիկ չատ պզտիկ կ'երեւին, ուրկէ առները կը տեսնուին կատուներու պէս։ Դուն ծովուն մէջ լողացե՞ր ես, տոքթոր... հա՛, հա՛, հա՛,— կը համբուրէ բժիշկը ու կը շարունակէ, մինչ բժիշկը հլու-հնազանդ կը հետեւի խելագարի խօսքերուն։ — Այիքները չեն խեղդեր, տոքթոր... ես զաւակս ծովէն դատարկ... բնաւ չեմ վախնար ծովէն... նորէն պիտի երթամ. այն անգամ պէպէք մըն ալ քեզի կը բերեմ, տոքթոր...։ Մամաս միշտ կ'ըսէր, թէ պէպէքները ծովուն մէջ կը քնանան, չեն խեղդուիր... ես ալ չեմ խեղդուիր... այիքները շատ փափուկ են, մաքուր, ճերմակ...։ Ձուկերը փայլուն են, պէպէքներու աչքերուն պէս...։ Դուդուն սեւ-սեւ աչքեր ունէր, տոքթոր... դուն տեսա՞ր Դուդուն... Մելքոնը ձեռքէն բռնեց-տարաւ...։ Ես Մելքոնին տունը գիտեմ, հոն է, տոքթոր, կը տեսնե՞ս, սա ծառին տակ,— մատնացոյց ընելով, պատուհանէն դուրս երեւցող ծառ մը,— հոս ծով չկայ, տոքթոր, եկուր, ցոյց տամ քեզի ծովը, պարտէզէն կը տեսնուի...։ Շատ մեծ է, ջուրերը փայլուն... դուն օթօ ունի՞ս, տոքթոր... ես ալ մէջը մտնեմ կ'երթանք...։ Պէպէքները ձուկի պէս կը լողան... ձուկը կը բռնես, պէպէք կ'ըլլայ, տոքթոր... լեցուն է, հո՞ն... հա՛, հա՛, հա՛...,— դարձեալ կը համբուրէ բժիշկին մազերը, քրքիջները երկարելով, յետոյ, ինքնաբերաբար թուլնալով, բազուկները կողերուն ինկած, վիզը թուլցած եւ մէկ ուսին վրայ յենած՝ փեռաթափ հաւու մը երեւոյթով...

∴

Բժիշկը քանի անգամ լսած էր «ծովուն հեքիաթը», զոր կը պատմէր Գերմուհի։ Թմրեցուցիչի ներարկումը կը լուծէր երիտասարդ մայրը, որ կը նուազէր, երկար ժամեր շարթնալու համար...

Համեմատաբար հանդարտ օրերուն, երբ քրիզներ չունենար, կը պտըտէր հիւանդանոցին պարտէզներուն մէջ, կը ժպտէր անծանօթ այցելուներուն, եւ անոնցմէ կը խնդրէր, որ գինք իրենց ինքնաշարժով տանին ծովեզերք, Անթիլիասէն անդին տեղ մը։ Բարի մարդիկ գինք կը տանէին...։ Գերմուհի կ'ուզուէր դէպի իրեն ծանօթ փոդոցները, ժամեր քայելով, կը հասնէր փոդոցի մը անկիւնը, հոն պոռալով, ճչալով, միշտ նոյն բառերը կրկնելով. «Մելքո՞ն, զաւա՜կս... Մելքո՞ն... զաւակս բե՛ր...»։

Թաղեցիները դուրս կու գային տուներէն, ոմանք պատշգամ կ'ելլէին, ուրիշներ փոդոց կ'իջնէին, երիտասարդներ կը հաւաքուէին, կիներ կը խզճային, կ'անիծէին, այրեր կը նզովէին՝ հայհոյելու պէս։ Թաղին տղաքը ողոքիչ խօսքերով Գերմուհին կը հրաւիրէին իրենց ինքնաշարժին մէջ, զայն ծով տանելու խոստումով, ապա կը հասցնէին Ցլրը Մալիպ...

digitised by A.R.A.R.@

***

Լռութիւնը կ'իջնէր թաղին մէջ։ Մելքոնին դրացիները կը յամենային, կը նայէին աջ ու ձախ, անոնց աչքերը կը փնտռէին Մելքոնը, որ չէր տեսնուեր։ Մելքոնն ու իր կինը դուրս չէին եկեր առաւօտեան ժամերուն, երբեմն՝ արշալուսային կրկնուող կանչի ու ճիչի ողբերգութիւնը դիտելու...

Յետոյ, լուռ փողոցներուն մէջ, կը լսուէին դժգոհ արտաունջներ, մարդոց խաղաղ կեանքը դժոխքի վերածող անգութ մարդանման արարածներու հասցէին անէծքներ...։ Տիկին Սրբու հին, անարդ արութեանց դէմ իր վրդոված հոգիով, ձայն կը բարձրացնէր.

— Անիծ՛ուած, կնոջը ծոցին մէջ մուշ-մուշ կը քնանայ, մենք ալ ոձէ խայթուածի պէս քունէն պիտի արթննանք, առաւօտեան մեր անուշ քունը, հարամ պիտի ըլլայ «էֆֆ»ին համար...

— Հերիք է արտառաս, աղջիկն ալ թող չխաբուէր...։ Անծանօթ տղուն հետ ծով կ'երթա՞ն...

— Մելքոնը խաթըֆ ըրեր են, հա՞, խաթըֆ...։ Ապրողը կը տեսնէ, հա՞...։ Տեսանք, ապրողները տեսան, ապրողը տեսաւ...։ Ազգին գլխուն անաստակ որդի մը փաթթեց... Աստուած օգնէ մեզի...։ Եթէ այս Գուզուն քիչ մըն ալ մեծնայ՝ փորձա՞նք...

— Ա՛զգը թող մտածէ, կնի՛կ,— ասաւեց Սրբուկին ամուսինը անփութօրէն...

— Դո՛ւք, երիկ մարդիկդ բոլո՛ր ալ անխիղճ էք, պաղ-պաղ խօսիլ գիտէք,— պատասխանեց Սրբուկ ամուսնոյն՝ վրդոված եւ խռոված հոգիով, բերնէն անզգալաբար դուրս նետելով դաժան դարձուածքներ, անէծքի համազօր արտունջքներ.

— Թող անիծուի՛ մեզաւորը...։ Սոդոմ-Գոմորը մեր դուռը հասեր է...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

digitised by A.R.A.R.@

ՋՆՋՈՒԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Երբ քեզի հետ եմ
ապահովութեան զօտիներ չկան.
ալիքներբ զգայնութեանց՝ խլրտումներ կ'արթնցնեն...
մարմինիս հետ մերկութիւն մը կը շաղուի,
ինչպէս հոսանքը ջուրի
եւ ալիւրբ լուսաղացին արեւի...

Քեզ կը սեղմեմ թեւերուս մէջ
եւ բնութեան տարերքը խօլ կը թրթռայ —
ծառեր կը շարժին մրրիկին դիմաց,
խորունկ գետեր կը յորդին
եւ կ'ողողեն քաղաքները մեքենացած ու անդէմք:

Ա՛լ չեմ ճանչնար շրջապատբ առօրեայ,—
տեղահանուած՝ կ'ըլլան ցանցեր էլեկտրական,
հեռախօսային գիծեր՝ անձկութեամբ
եւ ձանձրոյթով ծանրաբեռն:
Վախցած աչքերով եղնիկ մը միայն
ճամբուն մէջտեղ կը յայտնուի,
անտառին մէջ կորսուելու համար կրկին...

Նոր խոպան է, ուր կը շարժիմ,
վտանգի հին զգայնութեան դէմ անբարբառ:
Կարծէք երկիւղով կրկին կը քալեմ
գիշերային անտառներու վախի կողքին,
կրկին լաստակալ ուղեւորն եմ,
յորձանքներու մէջ, առանց ուղղութեան,
կրկին կրակի հանոյքը գիտեմ
եւ քաղցր մարդուն,
ցուրտ հովը գիտեմ՝
ճակատս այրող...

Առաւօտուն դուն կը ժպտիս միմիայն:
Տերեւներ հիմա պատած են ցօղով:

Քիչ ետք կը մեկնիս:
Քաղաքը կրկին
իր երախին մէջ մեզ պիտի ծամէ
ապահովութեան սին խոստումներով...

digitised by ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ A.R.A.R.@

ՆԻԿՈՍ ՔԱԶԱՆԶԱԿԻՍ

* * *

...Առաջին հարուածը առողջ ժնեք պիտի չընլլանք, բայց եթէ զարնեն ժեզի, պէտք չէ մոռնալ, որ Աստուած ժեզի ալ ժեռք տուած է, ու փոխադարձաբար ժենք եւս պիտի զարնենք։ Ի՞նչ կրնայ ընել արդարութիւնը, ինչպէ՞ս կրնայ անիկա ինքզինք պարտադրել անարգաբար ու անպարկեշտ ոյժերէ մը մէջ։ Պարզ է ուրեմն, որ արդարութիւնը ոյժեր կրնայ ընել, եթէ գինուած չըլլայ։

ՆԻԿՈՍ ՔԱԶԱՆԶԱԿԻՍ

* * *

ՎԵՐԱԽԱԶՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍԸ

*

ՀԱՅԱՑՈՒՑ՝
ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՂԱՌԱՍ — Հէ՛յ, գիւղացինե՛ր։ Մա՛ի ըրէք։ Ագան կը հրամայէ, որ Տէր Գրիգորիս, տեարք Փաթրիարչէաս եւ Լատաս, վարժապետը, Թամրաղործ Փանայոդարոսը՝ անուանեալն Ցուդա, պարտին ներկայանալ իրեն ճշդուած ժամուն։ Իսկ դուք՝ միւսներդ, մնացէք ձեր տուները։ Թող ոչ ոք սրճարան կամ ճամբաները մնայ։ Հէ՛յ, գիւղացինե՛ր։ Ես վերջացուցի։ Ուշադի՛ր եղէք։

(Մարթան դուրս կ'ելլէ՝ շուարած, առանց կարենալ ճշդելու երթալիք տեղը։ Քաթէրինա կը խուժէ իր կողմը)։

digitised by A.R.A.R.@

ՔԱՔԷՐԻՆԱ.— Մարթա, ո՞վ սպանեց զայն։
ՄԱՐԹԱ (իրար անցած).— *Չեմ գիտեր, բան մը չե՛մ գիտեր...։ Կասկած մը ունիմ. անչուշ...։ Ո՛չ, բան մը չե՛մ գիտեր։ Գնա՛ հեռացիր։*
(Քաքէրինա ներս կը մտնէ։ Այրին՝ նոյնպէս։ Զորս մեծամեծները դանդաղօրէն բեմ կու գան)։
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Քրիստոնեաներ, մի՛ վախնաք։ Մեր Աստուածը մեծ է։
ԼԱՏԱՍ (Փաթրիարշէասին).— *Դուն քովս կեցիր։*
ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Կը վախնա՞ս։
ԼԱՏԱՍ.— Այո, կը վախնամ։
ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Ես ալ կը վախնամ, բայց այնպէս կը մեւացնեմ, որ չեմ վախնար։ Ամուր պահէ ինքզինքդ։
ՎԱՐԺԱՊԵՏԸ.— Մենք այս գի։ղին գլուխներն ենք։ Բոլորին աչքերը մեր վրայ սեւեռած են։
(Աղչիւն կ'ընթանայ Տէր Գրիգորիս։ Վերջինը՝ ծերունի Լատասն է, որ մտած է Փաթրիարշէասին թիւը։ Պատուհանները կէս մը կը բացուին, պատերուն ետեւ կը տեսնուին շուքեր)։
ԻՐՈՎՐԻՍԻՍ Ա. ԿԻՆԸ.— Քաջուքի՛ւն։
ԻՐՈՎՐԻՍԻՍ Բ. ԿԻՆԸ.— Թող Աստուած մեզի հետ ըլլայ։
(Մեծամեծները կը հասնին բեմին կեդրոնը, կանգ կ'առնեն եւ կ'ուզղեն իրենց հայեացքը դէպի Ազգային պատշգամը)։
ԱՂԱՆ (ներս կը մտնէ։ Ջեռի բաժակը կը զարնէ պատին).— *Կեավուրնե՛ր։*
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Հրամանքդ, աղա։

ԱՂԱՆ (մոնչելով).— *Կեավուրնե՛ր...* (Երկու ծառաներ ներս կը բերեն Փանայոդարոսը)։ *Ղաուա, հանէ՛ եաթաղանդ։*
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Աղա՛...

ԱՂԱՆ.— Կեավուրնե՛ր։ Զեզմէ մէկը իր սուրը իմ սրտիս մէջ մխեց։ Իմ Եուսուֆաքի՛ս...։ (Խեղդուած ձայնով, կատաղի)։ *Ո՞վ սպանեց զայն։ Զեզմէ՝ քրիստոնեայ չունիքէն գաւ ոչ ոք կայ հոս։ Ուրեմն՝ քրիստոնեայ մըն է զայն մեռցնողը։ Դուն, Փանայոդարոս, գիտնա՞ս։* (Տատանելով՝ կ'իջնէ աստիճաններէն ու կը մօտենայ անոնց)։ *Եթէ ոճրագործը չգտնէք, ասիէն պիտի կախեմ բոլորդ։ Պիտի կախեմ նախ ձեզ, մեծամեծներդ, կը լսե՞ս, գուն, այծեմօրուք, յետոյ՝ ուրիշներ եւ ուրիշներ, նո՛յնիսկ կիներ...։* (Փախչող կիներու ետեւ ցուր ցիչեր)։ *Եւ ամբողջ գիւղը, եթէ չգտնէք բուն ոճրագործը։ Ի՞նչ ըրած էր ձեզի իմ Եուսուֆաքիս. բերանը չէր բանար. երբեւիցէ ահաճելի խօսք մը ըսած չէ մէկուն։ Պատշգամը նստած՝ կ'երգէր, միայն կ'երգէ՛ր...։ Ինչո՞ւ սպանեցիք զայն։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Աղա, կ'երդնում...
ԱՂԱ (Տէր Գրիգորիսին).— *Քեզ պիտի չկախեմ՝ ցցամահ պիտի ընեմ։*
ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Աղա, գիտես, որ ես միշտ հաւատարիմ եղած եմ...
ԱՂԱՆ.— Խո՛ղ։ Քեզ խեղդամահ ընելու համար մէկ չարաթ պիտի յատկացնեմ...։ Ո՞վ է ետեւդ պահուրտողը։

ԼԱՏԱՍ (առաջ կու գայ դողալով).— *Ես եմ, աղա, ես։*
ԱՂԱՆ.— Դուն, խոֆած կծծի։ Մնտուկներդ մէկ-մէկ պիտի բանամ, ամէն ինչ պիտի գրաւեմ... որպէսզի փառաւոր յուղարկաւորութիւն մը սարքեմ իմ պզտիկ Եուսուֆաքիս։

digitised by A.R.A.R.@

ԼԱՏԱՍ (հեծկլտալով)։— *Աղա՛ ու հլի լու է դիս մեռցնես...*

ԱՂԱՆ։— *Իմ Նուռ ու Փաքիս մահէն ետք, ինչո՞ւ դուք պիտի ապրիք։* (Կը ծռի, կը վերցնէ մտրակը եւ անխնայ կը ծեծէ զանոնք, արձակելով սուր ճիչեր)։ *Ինչո՞ւ։ Ինչո՞ւ...։ Ի՞նչ բրած էր ձեզի,կեավուրնե՛ր, կեավուրնե՛ր, կեավուրնե՛ր։ Ան միայն ու միայն կ'երդէր... կ'երդէր... կ'երդէր...։* (Տխուր է։ Կը տարուրբերի։ Կը նետէ մտրակը եւ կը սկսի լալ։ Ցեսոյ, դղածգօրէն աչքերը կը սրբէ ու կը ճչայ)։ *Կապեցէ՛ք ասոնք։*

(Ղաուաս եւ ծառաները կը կապեն զանոնք)։

ԼԵՆԻՕ (լալէն)։— *Տէրս, տէրս, իմ տէրս պիտի կախեն։*

ԱՂԱՆ։— *Փանայոդարո՛ս, քեզմէ պիտի սկսիմ...։ Կամրջակին վրայ Թեքուող ծառին ճիւղէն պիտի կախեմ քեզ։ Կը տեսնե՞ս այդ ճիւղը, որ կը Թեքի կամրջակին վրայ։ Վաղը կարգը քու կդ է, ազատ՝ա, կծծի Լատաս։ Ուրբաթ օրն ալ Նորի՞ն արժանաւորութիւն վարժապետը։ Շարաթ՝ ձերդ մեծութիւն ծերունի չուտայս Փաթրիարչէսը։ Իսկ Կիրակի, պատարագի ատեն, կարգը հասած պիտի ըլլայ քեզի, չո՛ւն տէրտէր։ Եւ այսպէս, բոլորը, ամբո՛ղջ գիւղը։* (Ատիճանները վեր կ'ելլէ)։

ԼԻՊՈՎՐԻՍԻՆ Ա. ԿԻՆԸ.— *Կորսուա՞ծ ենք, կորսուա՞ծ ենք։*

ՏԻՄՈՍ.— *Այս Ցուդան է սնրագործը...։ Ան կործանեց մեր գիւղը։*

(Կը խաչակնքեն)։

ԼԻՊՈՎՐԻՍԻՆ Ա. ԿԻՆԸ (Փանայոդարոսին, Աղայէն զգոյշ, ցած ձայնով)։— *Խոստովանէ՛, խոստովանէ՛, որպէսզի փրկուի մեր գիւղը։ Զե՞ռ զԹաբ մեր զաւակներուն։*

(Կիներու ուրիշ խումբ մը, սրահին միւս ծայրը, կ'օրօրեն իրենց գլուխները, կարծես թաղմանական ոգիեր կ'երգեն։ Կը լսուի «Օ՜Օ՜Օ՜» մը, տրտունջի շեշտով)։

ԿԻՆԵՐԸ.— *Խոստովանէ՛։*

ԼԻՊՈՎՐԻՍԻՆ Ա. ԿԻՆԸ.— *ԵԹԷ դուն ես սպանողը՝ ըսէ։*

ԲՈԼՈՐԸ.— *Խոստովանէ՛, խոստովանէ՛։*

ԿԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ.— *Խոստովանէ՛, խոստովանէ՛։*

ԼԻՊՈՎՐԻՍԻՆ Գ. ԿԻՆԸ.— *Գթա՛ մեզի։*

ԼԻՊՈՎՐԻՍԻՆ Բ. ԿԻՆԸ.— *Խոստովանէ՛, անասուա՞ծ։*

ԾԵՐՈՒՆԻՆ.— *Մեր զաւակնե՞ր...*

ԲՈԼՈՐԸ.— *Խոստովանէ։ Զե՞ռ զԹաբ մեզի։*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ (յանկարծ ու կատաղօրէն)։— *Իսկ ինծի, ինծի՛ ով պիտի գթայ։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Նզովեա՛լ Ցուդա, խօսէ՛... խօսէ՛...։ Պիտի օրհնեմ քեզ եւ քու բոլոր մեղքերուդ թողութիւն պիտի շնորհուի։

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Գրողը տանի մեր գի՛ւղն ալ, ձի՛գ ալ։ Այրեցէք ամէն ինչ։ Ատիկա խաղաղութիւն պիտի պարգեւէ ինծի։*

ԲՈԼՈՐԸ (գայրալից, թայց մեղմ ձայնով, որպէսզի Աղան չիմանայ)։— *Անասուա՞ծ, Ցուդա՛։*

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— *Դո՛ւն ես զայն սպանողը, դո՛ւն, նզովեա՛լ Ցուդա։*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Դուք էք, որ դիս Ցուդայի վերածեցիք։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— *Խոստովանէ՛, որ դուն ես զայն սպանողը եւ Քրիստոս պիտի ներէ քեզի։... Դիւղին ամբողջ հոգին քու ձեռքերուդ մէջ է։ Ոտքի ելէ եւ ըսէ՝ զանոնք փրկելու համար։*

ԲՈԼՈՐԸ.— *Ըսէ, ըսէ։*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Գիւղի մեղքերուն համար։ Բոլո՛ր։ Դուն, ազ-*

digitised by A.R.A.R.@

տո՛ւ տէրտէր, ապա՛հ գրամամոլ, եւ դուք՝ մեծամեծներդ, կախուած ինծի հետ, ինծի՝ Ցուդայի՛ն հետ։ (Կը խնդայ)։

ԼԱՏԱՍ (գոռալէն)։— *Խօսէ, Փանայոդարոս։ Ինծի պարտական ես նանաքոսի երեք ոսկիներդ պիտի տամ քեզի։ Պիտի ծախեմ անոր էշը…*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ։— *Հի՛նգ ոսկի, տղա՛հ։*

ԵԱՆԱԿՈՍ (խօսքը իշուն ուզելով)։— *Կը լսե՞ս, իմ պզտիկ Եուսուֆաքի, կ'ըսէ թէ պիտի ծախէ քեզ…։ Ես անոր տո՛ւնը կ'այրեմ. կը տեսնես…*

ՂԱՌԱՍ (շեփորը կը հնչեցնէ եւ կը պոռայ)։— *Ազգային հրամանն է, տիկիններ եւ պարոններ, բոլորդ պէտք է հաւաքուիք հրապարակը։*

(Այրեր եւ կիներ կը շտապեն հրապարակ։ Ադան կ'իջնէ աստիճաններէն։ Անոր ետեւէն՝ երկու ծառաներ, պատգարակի մը վրայ կրելով Եուսուֆաքիի մարմինը։ Մարքան բռնած է երկու ջահ։ Ղաուսաս ի ձեռին ունի մտրակ մը։ Մարդիկ ճամբայ կու տան անոնց։ Պատգարակը կը դնեն սօսիին տակ։ Մեռելը ծածկուած է ծաղիկներով։ Կը տեսնուի միայն անոր դէմքը)։

ԱՂԱՆ— *Կեսաւուրնե՛ր։ Նշիւքիս մէկ նժարին մէջ Եուսուֆաքին, միւսին մէջ՝ դուք բոլորդ։ Ի՞նչ վատութիւն ըրած էր ձեզի, ա՛ն՝ որ երդելէ զատ ոչինչ կ'ընէր եւ հիմա կը ննջէ, սպաննուած, ծաղիկներու մէջեւ…։* (Փանայոդարոսին)։ *Կեսաւո՛ւր, դո՞ւն ես զայն սպաննողը։ Ինչո՞ւ, արիկա՛յ, ինչո՞ւ։* (Ինքնիրմէ դուրս եկած՝ կիցեր կու տայ անոր)։ *Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ։* (Շնչասպառ՝ մտրակը կը ձգէ վար։ Ղաւասին դառնալով)։ *Կախէ՛ զինք։* (Ղաւաս վիզէն կը բռնէ Փանայոդարոսը եւ կ'առաջնորդէ դէպի կամրջակը)։ *Վերը, կամուրջին վրայ ոչնչէ՞ս մը կախէ, որ տեսնուի։* (Եուսուֆաքիին դառնալով)։ *Որպէսզի հոգիդ հանգչի։*

ԲՈԼՈՐԸ (կը պոռթկան, երբ Փանայոդարոսը կախուելու կը տարուի)։— *Խոստովանէ, խոստովանէ, գնովեա՛լ Ցուդա։ Գոնէ՛ մեզ փրկելու համար։*

(Ցանկարծ կը լսուի ձայն մը եւ Մանոլիոս կը յայտնուի)։

ՄԱՆՈԼԻՈՍ։— *Կեցէ՛ք, կեցէ՛ք…։ Ես կը ճանչնամ ոճրագործը։*

ԱՂԱՆ։— *Ո՞վ է խօսողը։*

ՄԱՆՈԼԻՈՍ (անոր անցքին՝ մարդիկ ճամբայ կու տան)։— *Ես եմ, Մանոլիոսը։ Ես կը ճանչնամ ոճրագործը։*

ԱՂԱՆ (կը բռնէ Մանոլիոսը եւ կը ցնցէ զայն)։— *Դո՞ւն, դուն կը ճանչնա՞ս ոճրագործը։ Խօսէ՛։*

ՄԱՆՈԼԻՈՍ։— *Այո, ես գիտեմ ով է։*

ԱՂԱՆ։— *Ո՞վ է, յիմար։*

ՄԱՆՈԼԻՈՍ։— *Ես։*

ԱՂԱՆ։— *Դո՞ւն։*

ԼԻԳՈՎՐԻՍԻՒ Ա. ԿԻՆԸ (ուրախութենէն ցատկռտելով)։— *Ի՛նքն է, ի՞նքը։*

ԼԻԳՈՎՐԻՍԻՒ Բ. ԿԻՆԸ։— *Քանի որ այդպէս կ'ըսէ, ուրեմն՝ ի՛նքն է։*

ԼԻԳՈՎՐԻՍԻՒ Գ. ԿԻՆԸ։— *Ի՛նքն է, ի՞նքը։*

ԲՈԼՈՐԸ։— *Ինքն է, ի՛նքն է, ի՞նքը։*

ԵԱՆԱԿՈՍ։— *Ձիշդ չէ ըսածը, Ադա։*

ԿՈՍՏԱՆԴԻՍ։— *Մտիկ մի ըներ զինք, Ադա։*

ԲԱԶՄԱՔԻԻ ԶԱՑՆԵՐ։— *Լռեցէ՛ք։ Ի՛նքն է, ի՞նքը։*

ԱՂԱՆ։— *Կը բաւէ։* (Մանոլիոսին)։ *Դո՞ւն։ Դո՞ւն։*

ՄԱՆՈԼԻՈՍ։— *Այո, ես։*

digitised by A.R.A.R.@

ԱՂԱ.— Բայց ինչո՞ւ։ Ի՞նչ ըրած էր քեզի։

ՄԱՆՈԼԻՈՍ.— Սատանան մղեց զիս։ Քնացած ատենս լսեցի ձայն մը, որ կ'ըսէր. «Սպաննէ փոքրիկ Եուսուֆը»։ Կէս գիշերին եկայ եւ սպաննեցի զինք։ Կախէ զիս։ (Միշէլիս, Եանամոս եւ Կոստանդիս կը մօտենան Ադային)։

ՄԻՇԷԼԻՍ.— Ադա, այս մարդը սուրբ մըն է, մեր հովիւը, խնայէ իրեն։ Թող գըլուխս կտրեն՝ եթէ այս մարդը ոճրագործ է։

ԵԱՆԱԿՈՍ.— Ան սուրբ մըն է։

ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Սո՛ւրբ մը։

Ա. ԿԻՆԸ.— Առանց կարեւորութիւն մի տար։ Ցանցաւորը ան է։

(Ամբոխը կը պոռայ։ Ադան ատրճանակով օդը կը կրակէ)։

ԱՂԱ (հանդարտօրէն՝ Մանոլիոսին)*.— Դիւղը փրկելու համար այդպէս կ'ըներիր դուն։ Դու խենթ մը ըլլալու ես, կամ. սուրբ մը, դուն գիտես։ Վատահ եղիր, պիտի կատարեմ փափաքդ։ Գիտի կտրեմ քեզ...։ Բայց կ'ուզէի հասկնալ, Մանոլիոս, իրապէս դո՞ւն սպաննեցիր իմ Եուսուֆքիս։*

(Քաթէրինան ներս կը մտնէ վազելով եւ կը նետուի Ադային ոտքերուն)։

ՔԱԹԷՐԻՆԱ.— Ինք չէր սպաննողը, Ադա, ինք չէր, ե՛ս էի։ Այլեւս չեմ կրնար դատապարտեալ պահել արարքս։ Ոչ ոք յանցաւոր է...։ Ե՛ս էի սպաննողը։

ԱՂԱ.— Դո՞ւն, ա՛զգ։

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ (Սօսիին կապուած՝ կը պոռայ)*.— Կը սուտ։ Կ'ուզէ ազատել Մանոլիոսը։ Մտիկ մի ըներ զինք։*

ՄԱՆՈԼԻՈՍ.— Քաթէրինան սուտ կը խօսի։

ՔԱԹԷՐԻՆԱ.— Ես եմ, Ադա, ե՛ս, նզովեալը։ Սերէս ու Նախանձէս մղուած սպաննեցի զայն։

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— Սուտ կը խօսի, սուտ կը խօսի։

ՔԱԹԷՐԻՆԱ.— Եուսուֆքին ուունգ մտած օրէն ի վեր՝ դուն այլեւս երեսս չնայեցար։ Ես ես կու լայի, արցունքներս կը չորցնէի։ Կը սպասէի դրան առիթին, կը սպասէի... ոչինչ...։ Դուն ունէիր քու Եուսուֆքին, իսկ զիս մոռցած էիր բոլորովին...։ Կախարդութիւններու գիմեցի, բայց ոչինչ դուրս եկաւ։ Դուն ունէիր քու Եուսուֆքիդ...։ Անլքս կորսնցուցած՝ կէս գիշերին...

ԱՂԱ.— Դո՞ւն... ա՛զգ, դո՞ւն...

ՄԱՆՈԼԻՈՍ (Կը պոռայ)*.— Ո՛չ, ես էի սպաննողը։*

ՔԱԹԷՐԻՆԱ.— Ականջ մի տար անոնց...։ Մէկը կ'ուզէ գիւղը փրկել, իսկ միւսը կը սիրէ զիս...։ Ահաւասիկ, այս դանակով սպաննեցի։

(Կ'երկարէ անոր դաշոյնը մը։ Ադան առնելով դաշոյնը՝ կը դաշուռնահարէ Քաթէրինան։ Մանոլիոս կը խուժէ Քաթէրինայի տապալող մարմինին վրայ)։

ՄԱՆՈԼԻՈՍ.— Քո՞յդս։

(Փանայոդարոս կը մռնչէ եւ գետին կը փռուի։ Մանոլիոս կը խաչակնքէ։ Քաթէրինա, սպաննուած, կ'իյնայ Եուսուֆքիի դիակին առջեւ)։

ԱՂԱ.— Նետեցէք զինք իր դրան առջեւ։ Եւ կախեցէք այս ատաքեալը անմիջապէս։

(Ղառուս կը բաշխէ Մանոլիոսը։ Նոյն վայրկեանին, ներս կը մտնէ Մարքաս, ձեռքին հագուստ մը)։

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԹԱ.— Ադա՛, Ադա՛, (կը քակէ ծրարը. հագուստներ են)*, Տե՛ս, Ադա՛, տե՛ս ինչ գտայ: Արիւնով պատուած տարբատ մը եւ չապիկ մը:*

ԱՂԱ.— Ո՞ւր գտար ատոնք:

ՄԱՐԹԱ.— Նեբոր, տան մէջ:

ԱՂԱ.— Որո՞ւն են այս հագուստները:

ՄԱՐԹԱ.— Ղաուասին, Ղաուասին: Իր սենեակին մէջ գտայ: (Տժգոյն՝ Ղաուասը քաշուած է բեմին խորքը: Ադան կը նայի Ղաուասին եւ յանկարծ կը յառաջանայ ու կատաղութեամբ կը բռնէ ծոծրակէն: Ղաուաս կը դողայ, կը ծռի եւ կ'իյնայ Ադային ոտքերուն: Ադան գայն վեր կ'առնէ եւ կը ստիպէ ոտքի մնալ:

ԱՂԱ.— Աչքերուս նայէ: (Լռութիւն)*: Ինչո՞ւ, հը:*

ՂԱՈՒԱՍ (դողալէն)*.— Ան չէր ուզեր... կ'ազաչէի անոր... ան չէր ուզեր:*
(Ադան կը բռնէ Ղաուասին օձիքէն)*:*

ՄԱՐԹԱ.— Կէս գիշերին լսեցի անոր վէր բարձրանալը... եւ լսեցի պզտիկ ճիչ մը, շատ պզտիկ ճիչ մը, ձեռքիդ մէջ խեղդուող թռչունի մը ճիչին պէս: (Դուրս կ'ելլէ):

ԱՂԱ.— Ալլահ, ըսէ ինծի, ի՞նչ մահով վերջացնեմ գայն: (Ցանկարծ)*: Ոտքի՛:* (Ղաուաս ոտքի կ'ելլէ դողալով, կ'առնէ մտրակը)*.— Վազէ՛...:* (Ղաուաս կը վազէ, կը սայթաքի, կը տարուբերի: Ադան կը հետապնդէ գայն եւ կը հարուածէ անխնայօրէն: Մարդիկ կը փախչին վազն ի վազ: Մանոլիոս եւ երեք առաքեալները, Փաբրիսիոսչեան տան մէջ պահուըտած գաղտագողի կը նային): *Կանգ առ:* (Ղաուաս կանգ կ'առնէ: Ադան կը ծեծէ գայն: Յետոյ՝ առնելով իր եաթաղանը) *Շո՛ւն, շո՛ւն, շո՛ւն, շո՛ւն, վազէ:*

(Ղաուաս կը վազէ հրապարակին շուրջ, կը գայթի, դարձեալ կը վազէ՝ Ադային հարուածներուն տակ: Կ'անհետանայ քուլիսին ետին: Կը լսուին երեք առնոցներ: Մանոլիոս, Եանաքոս եւ Կոստանդիս, ինչպէս նաեւ Մարթա կը մօտենան Քաբէրինայի անշունչ մարմինին):

ԵԱՆԱՔՈՍ.— Որքա՜ն գեղեցիկ էր:

ՄԱՐԹԱ (ատելավառ)*.— Գեղեցիկ ըլլալու ինչ պէտք ունէր: Ինչի՞ կը ծառայէ հիմա գեղեցկութիւնը:*
(Մինչ Մանոլիոս առանց պատասխանելու, երկարօրէն կը դիտէ Քաբէրինայի մարմինը, Փանայոդարոս կը մօտենայ, կը նետուի դիակին առջեւ, կը ծնրադրէ եւ գրկելով գայն, կը խօսի կատաղի ձայնով մը):

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— Առանձին ձգեցէք մեզ:
(Մանոլիոս, ինչպէս նաեւ իր երկու ընկերները կը քաշուին):

ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Կը խղճա՞ս անոր, Մանոլիոս:

ՄԱՆՈԼԻՈՍ.— Այս ժամուս, Մարիամ Մագդալենացին բռնած է անոր ձեռքը եւ երկուքը միասին կը պտըտին դրախտի անմահական մարգերուն մէջ: Կը հարցնես ինծի, թէ կը խղճա՞մ իրեն, Կոստանդիս, ո՛չ, չեմ խղճար: Ընդհակառակն, երանի կու տամ...

digitised by A.R.A.R.@

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Անցած է քանի մը շաբաթ:
Սուրբ Եղիայի տօնն է՝ Լիֆովրիսիի մէջ: Այդ մէկը կ'երեւի գծուած պատատառէ մը:

Տօնակատարութիւնը աւարտելու վրայ է:
Տէր Գրիգորիս կը մտենայ Փաթրիարշէասի սեղանին: Փաթրիարշէասի տաճ առջեւ, բակին մէջ, ընդարձակ սեղան մը կայ, որ կ'երկարի մինչեւ քուլիսը, բեռնաւորուած պարէնով:
Սեղանին շուրջը, նստած են Փաթրիարշէաս, ուսուցիչը եւ Լատաս: Լենիս գրաղած է անոնց սպասարկելով: Ազային փակ տան առջեւ խումբեր կը պարեն՝ քուլիսէն երկարող պարեղանակի մը կշռոյթով: Կոստանդինի սրճարանի սեղանները նոյնպէս գրաւուած են գիւղացիներէն: Մսագործ Տիմոս, սափրիչ Անտոնիս, Կոստանդիս եւ իր աշկերտ Տիմիդրին կը սպասարկեն անոնց:
Փանայոդարոս առանձին նստած է՝ քիչ մը հեռու դրուած սեղանի մը մօտ, շիշ մը գինիի առջեւ:
Կենաց կը խմեն: Քրքիջներ, ճիչեր:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ (Լենիս միասով լեցուն պնակ մը կը դնէ անոր առջեւ)— *Ուրիշ ալ բերէք: Բե՛ր: Բե՛ր ինչ որ կը գտնուի խոհանոցին մէջ, ամէ՛ն ինչ, ապրիս: Քու ամուսնութեանդ կենացը, Լենիս:* (Կը դառնայ իր հիւրերուն): *Ա՜հ, մեզի չեմ ըսած, թէ շուտով կ'ամուսնացնեմ. Լենիսն:*

ԼԱՏԱՍ.— *Ահա քեզի նորութիւն: Եւ որո՞ւ հետ պիտի պսակես: Զեմ կարծեր, որ կապուած ըլլաս այդ խենթ Մանոլիոսին:*

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— *Վերջացած հարց է այդ մէկը: Ան մեկնեցաւ արօտավայրերը անվերադարձ: Նիկոլիոյին հետ կ'ամուսնացնեմ զինք:*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— *Ո՞ր Նիկոլիոյին, այդ պզուկի հովիւի՞ն, այդ լաճի՞ն:*

ԼԵՆԻՍ (յանկարծ վիրաւորուելով),— *Իմ Նիկոլիոս փողոցային լաճ մը չէ, ոչ հայր: Ան ազամարդ է, ճշմարիտ ազամարդ մը: Ինձի կը նեբէք:*
(Ներս կը մտնէ: Մեծամեծները կը խնդան):

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— *Սուրբ Եղիայի տօնին կենացը:*

ՈՒՍՈՒՑԻՉԸ.— *Մեր սուրբին:*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Կոսատանդիս, շիշ մը եւս բեր:*
(Մինչ պարը կը շարունակուի, Փանայոդարոս մէկէն ոտքի կ'ելլէ, մէջտէն կը քաշէ ատրճանակը եւ կը կրակէ):

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Ա՛ռ քեզի, սրիկայ, առ քեզի:*
(Ցուցում: Պարը կանգ կ'առնէ):

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— *Է՜, Փանայոդարո՛ս, խենթեցա՞ր:*

ՓԱՆԱՅՈԴԱՐՈՍ.— *Օդը կը կրակեմ:* (Կը կրակէ): *Ահաւասի՛կ:*
(Ատրճանակը կը նետէ գետին եւ կ'իյնայ սեղանին վրայ):

ՈՒՍՈՒՑԻՉԸ.— *Խելքը կորնցուցած է, խեղճը:*

ՄԱՐԹԱ (Ներս մտնելով)— *Այս ի՞նչ խրատանցում է: Ո՞վ է կրակողը: Ապա՞ն վերադարձած է:*

ՏԻՄԻԴՐԻ.— *Դժբախտութեան մասին մի՛ խօսիր: Մենք առանձին չատ լաւ ենք:*

digitised by A.R.A.R.@

ԿՈՍՏԱՆԴԻՆ.— Մեկ հանդիսաւոր պիտի ձգէ՝ մինչեւ որ Զմիւռնիայէն գինք մխիթարող ուրիշ Նուսու Ֆաքի մը գտնէ։ (Երաժշտութիւնը կը վերսկսի. երիտասարդ-երիտասարդուհիները ձեռք ձեռքի կու տան պարելու համար։ Տօնը կը վերածուի խնճոյքի։ Միշէլիս եւ Նանաքոս արօտավայրերէն վար կ'իջնեն գրուցելով։ Կոստանդին գինիի շիշ մը կը մօտեցնէ Փանայոդարոսին եւ տեսնելով Միշէլիսի եւ Նանաքոսի ժամանումը, կը մօտենայ ամոնց)։ *Մանոլիոս առանդ չէ՞։*

ՄԻՇԷԼԻՍ.— Մենք հանդէ կու գանք։ Տուն չէր։

(Նանաքոս եւ Կոստանդին կ'երթան սրճարան։ Միշէլիս կը մտնէ իր տան բակը)։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ (Միշէլիսը նկատելով)։— *Իմ փեսայիս կենացը։*

ՄԻՇԷԼԻՍ (Տէր Գրիգորիսին)։— *Մարիորին ինչպէ՞ս է, տէր Հայր։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ (յուզուած)։— *Մարիորի՞ն... լեցաւ տեղէն ելեալ այս առաւ։*

ՄԻՇԷԼԻՍ.— Եւ գինք առանձի՞ն ձգեցիք։ Շատ ծանր բլլալու է վիճակը, որ չէ կրցած ներկայ բլլալ այս ուրախութեան։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Մտահոգիչ բան մը չկայ, տղաս։

ՓԱՊՐԻԱՐՇԷԱՍ.— Ազիկդ աւելի՞ ծանր է։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Ոչ... Բայց... Այս օրերուն չատ հանդիսաւոր չի թուիր բլլալ։

ՓԱՊՐԻԱՐՇԷԱՍ.— Եկուր, Միշէլիս, եկուր կեր եւ խմէ։ (Կը նստեցնէ զայն մօտը)։ *Լենիս, խոհկոսի եւ վառեակներու խորոված ներրը բեր։ Բե՛ր, Լենիս, բե՛ր։*

(Նիկոլիս, խնդալով, տօնական հագուստներու մէջ, կը վերադառնայ արօտավայրերէն)։

ՆԻԿՈԼԻՈ.— Լենիս, Լենիս։

ԼԵՆԻՈ (Կը ձգէ սպասարկելու պաշտօնը եւ կը վազէ Նիկոլիոյին ընդառաջ)։ *Նիկոլիո՞ն, Նիկոլիո՞ն եկաւ։*

ՓԱՊՐԻԱՐՇԷԱՍ.— Այս եռանդուն աղջիկը, տեսէք ինչպէս կը հրճուի Նիկոլիոն տեսած պահուն։ Եթէ ամուսնութիւնը քիչ մը ալ ուշանայ, այրիին տեղը պիտի բռնէ։

ՆԻԿՈԼԻՈ.— Եկուր պարենք, Լենիս։

ՓԱՊՐԻԱՐՇԷԱՍ.— Թող տեսնեմ, Լենիս, տեսնեմ որքան պիտի դիմանաս պարելուն։

(Կը պարեն։ Փաթրիարշէաս, ձեռքով պարեղանակին չափ կու տայ, իսկ ուրիշներ կը կապկեն գինի։ Սուրբ Եղիայի ուխտազնացութեան եկած Սարաֆինայի գաղթականները կ'երթին, իրենց գլուխը ունենալով Տէր Ֆոթիսը։ Վերջինին կողքին՝ Մանոլիոսը։ Պարերը կը դադրին, տօնախմբութիւնը յանկարծ կանգ կ'առնէ)։

ԵԱՆԱՔՈՍ.— Բարի էք եկեր մեր Սուրբ Եղիայի տօնակատարութեան, Տէր Ֆոթիս։

ՏԷՐ ՖՈԹԻՍ (խիստ նայուածք մը նետելով շուրջը)։— *Թող մարդարէն ներ մեզի, եթէ պարապ ձեռքով եւ ցնցոտիներով եկած ենք։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Ահաւասիկ օտարականներ, որոնք կը բռնագրաւեն մեր տունը։

ՓԱՊՐԻԱՐՇԷԱՍ.— Թող այդպէս բլլայ։ Մեզ չեն կրնար ուտել իրենց աչքերով։

ՏԷՐ ՖՈԹԻՍ (դառնալով դէպի եկեղեցին)։— *Դուն, Սուրբդ Եղիա, դուն մեզ կը հասկնաս։ Դուն ալ ազգատ էիր մեզի պէս։ Ողջոյն քեզ, եղբա՛յր։*

(Կը յառաջանայ եւ, իրեն հետեւող հօտին հետ՝ կը մտնէ եկեղեցի։ Մանոլիոս դուրսը կը մնայ)։

digitised by A.R.A.R.@

ՆԻԿՈԼԻՈ.— Բարեւ, վարպետ։
ՄԱՆՈԼԻՈՍ.— Բարեւ։
ՆԻԿՈԼԻՈ (կը տատամսի, քաջութիւն ստանալու համար ակնարկ մը կը նետէ Լենիոյին).— *Գիտես ի՞նչ, վարպետ... Լենիոն եւ ես պիտի ամուսնանանք։*
ՄԱՆՈԼԻՈՍ.— Գիտեմ։
(Մարդիկ կը հաւաքուին անոնց շուրջ եւ կը հետեւին տեսարանին)։
ՆԻԿՈԼԻՈ (ապշահար· եռանդուն).— *Գիտես եւ վրա՞ չէ՞ս յարձակիր։*
ՄԱՆՈԼԻՈՍ.— Ինչո՞ւ։
ՆԻԿՈԼԻՈ.— Որովհետեւ աղջիկդ ձեռքէդ կ'առնեմ։ Ես քու տեղը ըլլայի, յանուն կերած հացիս, կը սպաննէի քեզ։
ՄԱՆՈԼԻՈՍ.— Երջանիկ եղէք։
ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Ո՞ւր էիր, Մանոլիոս։
ՄԻՇԷԼԻՍ.— Գիշերուընէ ի վեր քեզ կը փնտռենք, Մանոլիոս։
ՄԱՆՈԼԻՈՍ.— Սարաքինա բարձրացած էի։ Որոշած եմ այլեւս հոն ապրիլ։ Այժէն ինչ կարգին է։
ԵԱՆԱՔՈՍ.— Կարգի՞ն։ Ի՞նչ բանի մասին կը խօսիս։
ՄԱՆՈԼԻՈՍ.— Կ'ուզեմ ըսել, որ հոգիները պատրաստ են ըմբոստանալու, եւ բերանները՝ պոռալու։
ՆԻԿՈԼԻՈ (սթափած).— *Լսեցի՞ր, Լենիո։ Փոխանակ սպաննելու՝ օրհնեց զիս։ Ինքնացած է խեղճը։ Իրաւունք ունէի։*
ԼԵՆԻՈ (կը փաթթուի Նիկոլիոյին).— *Ի՞մ Նիկոլիոս։*

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Գիւղացիներ, ինչո՞ւ դադրեցուցիք ձեր երգերն ու պարերը։ Արդէն խակ յոգնեցա՞ք։ Ահաւասիկ այսօրուան երիտասարդութիւնը։ Լենիո, առ նշանածդ եւ տոլեւ եկէք։
(Երաժշտութիւնը կը վերսկսի։ Տէր Ֆոթիս, իր հօտին հետ՝ դուրս կու գայ եկեղեցիէն։ Անոնք կը խաչակնքեն եւ մէկ կողմ կը քաշուին։ Փաթրիարշէաս կը շարունակէ ուտել Լատասի հետ։ Տէր Գրիգորիս մտահոգ կ'երեւի սակայն)։
ՄԱՆՈԼԻՈՍ (ձեռքերը կը տարածէ ընկերներու ուսերուն).— *Եղբայրնե՛ր, պատրաստ էք դիմագրաւելու բոլոր պատահականութիւնները։*
ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Մենք քեզի հետ ենք կեանքին թէ մահուան մէջ։
ՄԻՇԷԼԻՍ.— Օ՜ն, Մանոլիոս, մենք պիտի հետեւինք քեզի։

ՄԱՆՈԼԻՈՍ (կը վազէ, կը բարձրանայ մեծ ժայռի մը վրայ եւ ձեռքերը կը տարածէ դէպի լիմովրիսեցիները).— *Եղբայրնե՛ր...* (Աւելի ուժգին եւ ինքզինք պարտադրել ուզող հովով մը)։ *Եղբայրնե՛ր, լռեցէք քիչ մը, կ'աղաչեմ, ըսելիք ունիմ ձեզի։ Մոլիկ ըրէք զիս։*
(Բոլորը կանգ կ'առնեն, կը դառնան անոր կողմը եւ կամաց-կամաց կը մօտենան անոր։ Տէր Գրիգորիս եւս ոտքի կ'ելլէ)։
ԼԵՆԻՈ.— Ի՞նչ կայ։
ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Մանոլիոս խօսք առնել կ'ուզէ։
ՆԻԿՈԼԻՈ (զմայլած).— *Ճիշդ ժամանակն է խօսելու։*
ԵԱՆԱՔՈՍ.— Լռութիւն, գիւղացնե՛ր։ Մանոլիոս շատ կարեւոր ըսելիքներ ունի ձեզի։
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Դատարկ խօսքեր։ Մանոլիոս խօսելու բնաւ կարողութիւն չունի։
ՄԱՆՈԼԻՈՍ.— Տէր հայր, ձգէ, որ երկու խօսք ըսեմ ժողովուրդին։
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Դո՞ն։ Ի՞նչ բանի մասին։

digitised by A.R.A.R.@

ՄԱՆՈԼԻՈՍ.— Քրիստոսի:

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Քրիստոսի՞: Քրիստոսը իմ գործս է, ի՛մ:

ՄԱՆՈԼԻՈՍ.— Քրիստոս հրամայեց ինձի, որ խօսիմ:

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Խօսելիքդ ալ, պատահմամբ, չՔելադրե՞ց քեզի:

ՄԱՆՈԼԻՈՍ.— Ո՛չ, չՔելադրեց: Բայց բերանս բացած վայրկեանիս՝ պիտի Քելադրէ:

ՄԻՇԷԼԻՍ.— Տէր հայր, քեզմէ կը խնդրենք, որ խօսելու արտօնութիւն տաս Մանոլիոսին:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Թոյլ տուր, որ խօսի, Տէր Գրիգորիս, քանի տղայ է:

ՏԻՄԻԴՐԻ.— Զդէ, որ խօսի, Տէր Գրիգորիս:

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Աղէկ, աղէկ, պէտք չկայ այսքան ազմուկի: (Դառնալով Մանոլիոսին): *Թող Աստուած նեղչնչէ քեզ: Խօսէ՛:*

ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Լսենք Մանոլիոսը:

(Տէր Գրիգորիս ձեռքերը կը ծալէ եւ կը կանգնի Մանոլիոսին դիմաց: Մանոլիոս կը սպասէ, որ լռութիւն տիրէ: Կը նայի ամէնուն եւ կը սկսի խօսիլ):

ՄԱՆՈԼԻՈՍ.— Եղբայրներ, կ'ուզեմ խօսիլ ձեզի Քրիստոսի մասին: Ներեցէք ինձի, եւ անուս մարդ եմ եւ գեղեցիկ նախադասութիւններ կազմել չեմ գիտեր...: Բայց անցեալ օր, իրիկնամուտին, երբ փարախին դիմաց նստած, Աստուածաշունչը կը կարդայի, Քրիստոս եկաւ եւ նստաւ մօտս, նստարանին վրայ, գրացիի մը պարզութեամբ: Անոր բոպիկ ոտքերը փոշիով ծածկուած էին եւ խաչելութեան իր հինգ սպիները բացուած կ'արիւնէին. ձեռքին ունէր պարապ տոպրակ մը: Տխրօրէն ըսաւ ինձի. «Կը սիրե՞ս զիս»: Պատասխանեցի իրեն՝ ըսելով. «Իմ սիրելի Քրիստոս, եւ պատրաստ եմ քեզի համար մեռնելու»: Այն ատեն, Ան մօտեցաւ՝ առանց բան մը ըսելու: Այդպէս մնացինք բաւական ժամանակ: Անձկութեան մատնուած էի, կը հասկնա՞ք: Բայց վերջապէս համարձակութիւն ունեցայ հարցնելու Իրեն. «Ցոգնած կ'երեւիս, Տէր իմ, ուրկէ՞ կու գաս»: Այն ատեն Ան ըսաւ ինձի. «Զաւակներս անօթի են: Այս տոպրակը առած՝ կը շրջիմ գիւղէ գիւղ՝ ողորմութիւն խնդրելու համար: Անցայ Լիքովրիսիէն: Նայէ, տոպրակը պարապ է»: Չէի դիտեր ինչ պատասխանեմ: Այն ատեն Քրիստոս ջղայնացաւ եւ ըսաւ. «Կը ձեւացնես, թէ կը սիրես զիս, եւ հանդիսա կը նստիս հոս՝ խմելէ եւ ուտելէ հոգ, կարդալով իմ խօսքերս եւ լալով, որ խաչուած էի: Հիմա պիտի երթաս քնանալու: Կը կարծե՞ս, թէ իմ խօսքերս կարդալը կը բաւէ: Կը կարծե՞ս, թէ իմ վրայս լալը կը բաւէ: Ոտքի՛ելէ: Գնա՛ փնտռէ մարդերը: Խօսէ՛ անոնց»: Ես պատասխանեցի Անոր. «Ի՞նչ պիտի ըսեմ անոնց, Տէ՛ր: Ես անուս եմ ու աղքատ: Կը վախնամ»: Այն ատեն Ան պատասխանեց ինձի: Գնա՛ եւ ըսէ անոնց որ անօթի ես:

ԼԱՏԱՍ (Տէր Գրիգորիսին).— *Ասիկա լաւ տեղ մը չի տաներ մեզ. պէտք է լռեցնես զինք:*

ԻՊՈՎՐԻՍԻ Ա. ԿԻՆ.— Տէր երկնաւոր, այս տղան իրապէ՞ս Մանոլիոսն է, հոգի՞ը:

ՄԱՆՈԼԻՈՍ.— «Անօթի եմ, կ'աղաղակէ Տէրը: Քրիստոնեանե՛ր, ողորմած եղէք: Ան՝ որ կու տայ աղքատին, պարտք տուած կ'ըլլայ Աստուծոյ:

ԼԱՏԱՍ.— Հանդերձեալ կեանքին մէ՞ջ գանձուելիք պարտքեր: Ա՞յս է, որ կ'առաջարկես մեզի, Մանոլիոս: Դէ՛լաւ, եթէ իմ կարծիքս կ'ուզես, ըսեմ

digitised by A.R.A.R.@

քեզի, որ այս աշխարհին մէջ մէկը աւելի կ'արժէ, քան երկուքը միւս աշխարհին մէջ։

ԵԱՆԱՔՈՍ.— Զգէ՛, որ խօսք, ծերունի Լատաս։ Զլսեցի՞ր։ Քրիստոսի կողմէ կը խօսի մեզի։

ԼԱՏԱՍ.— Դո՜ւն, դո՛ւն աւելի լաւ կ'ընես տեղդ հանդիստ մնալով, Եանաքո՛ս...։ Եւ յետոյ՝ չմոռնաս, որ երեք օրէի պարտական ես ինծի — երեք, ստացագիր ունիմ այս աշխարհին մէջ գանձելի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ.— Ինչ որ առաջարկեցիր, սկզբունքով կատարեալ է, Մանոլիոս։ Բայց դուն ամբերու մէջ կ'ապրիս։ Մտածէ, որ մենք սուրբեր չենք, այլ պարզապէս մարդեր։ Մտածէ մարդկային անկիւնէն։

ՄԱՆՈԼԻՈՍ.— Իմ ըրածս ալ ճիշդ այդ է, պարոն ուսուցիչ։ Եթէ դուք քրիստոնեայ էք, ա՛ռք է որ հաւատաք միւս աշխարհի գոյութեան։ Պէտք է հաւատաք, որ ձեր արարքները պիտի դատուին հանդերձեալ կեանքին մէջ։ Եւ թէ ա՞ն՝ որ կ'ողորմի իր եղբայրներուն այս աշխարհի կարճ կեանքին մէջ, պիտի վարձատրուի յաւիտենական կեանքով։ Ինչ որ պիտի ունենաք չատ աւելի կ'արժէ, քան ա՛յն՝ որ պիտի ունենանք, ծերունի Լատաս։

ԼԱՏԱՍ.— Դո՜ւն, պզտի՛կ յիմար։

ՏԻՄԻԴՐԻ.— Ուրեմն՝ ի՞նչ պէտք է ընել, Մանոլիոս։ Ըսէ մեզի ինչ կը հրամայէ Քրիստոս։

ԿԻՆ ՄԸ.— Յամենայնդէպս, մեր բոլոր ունեցածը չենք կրնար բաշխել։

ՏԻՄԻԴՐԻ.— Դժուար է։

ՄԱՆՈԼԻՈՍ.— Հունձքը առատ էր։ Քանի մը օրէն կը սկսի այդեկութիւնը, ապա՝ ձիթենիներուն քաղը։ Մարկ ըրէք Քրիստոսի կոչը, որ կ'ըսէ. «Ձեր դուռներուն առջեւ եղբայրներ կը գտնուին, որոնք այս ձմեռ սովահար եւ ցրտահար պիտի ըլլան»։ Զեզի չեմ ըսեր, որ ձեր ամբողջ ունեցածը տաք, կը մտածեմ մարդկային չափերուն մասին, պարոն ուսուցիչ...։ Թող ամէն մարդ Սարաքինայի աղքատներուն տայ, թող ամէն մարդ Աստուծոյ պարտքին տայ իր մէկ տասներորդը, մէկ տասներորդը միայն իր հունձքին։ Տարի մը, երկու, մինչեւ որ դպրոցականները կարենան գլուխ ազատել։ Առաւել՝ հոս կան խոպան բազմաթիւ արտեր, զորս խնամելու ժամանակ չունինք։ Եկէք տանք զանոնք դպրոցականներուն՝ բերքը կէս առ կէս բաժնուելու պայմանով։ Այսպէսով անոնք ուսելիք կը ճարեն եւ մենք նոյնիսկ չահ կ'ապահովենք ասկէ։ Վա՜յ այն լիքովրիսեցիին, որ կուտ ու կուշտ կ'ուտէ՝ առանց մտածելու Սարաքինայի զաւակներուն մասին։ Մեր սեմին սովամահ եղողը մեր ուսերուն կը ծանրանայ քարի մը պէս, որ իր ամբողջ ծանրութեամբ մեզ կը մխրճէ դժոխքի յաւիտենական բոցերուն մէջ։ Երեւակայեցէք, թէ Սարաքինայի դպրոցականները քանի՞-քանի՞ քար կ'ըլլան մեր պարանոցներուն. եւ այդ մանեակով կրնա՞նք համարձակիլ ներկայանալ Աստուծոյ առջեւ։

ԱՆՏՈՆԻՍ.— Համաձայն եմ, Մանոլիոս, բաց ոտմար մը եւ արձանագրէ իմ անունս— Անտոնիս Եանիտիս, սափրիլ Քիրասիպուլոսի որդին։ Քանի մը այդի եւ քանի մը կաղ հող ունիմ, բայց իմ հունձքիս մէկ տասներորդը սիրով կու տամ։ Սիրով փոխ կու տամ Աստուծոյ։ Արձանագրէ, Մանոլիոս։ Գիտեմ, որ նոյն ատեն Աստուած ալ կ'արձանագրէ։

ՏԻՄԻԴՐԻ.— Ես ալ կու տամ մէկ տասներորդ։ Արձանագրէ, Մանոլիոս։

Ա. ԿԻՆԸ.— Ես ալ։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— Է՜հ, դիւղացիներ, զգո՜յշ։ Այս ստախօսէն մի խաբուիք։ Աշխարհ կը հանդչի շատս սիւներու վրայ, կան հաւատքը, հայրենիքը

digitised by A.R.A.R.@

եւ պատիւը, բայց կայ նաեւ անփոկան ստացուածքը։ Մի՛ պպիք տանոնց։ Աստուած ստացուածքները բաշխած է իր անփոկան կամքովը, որ վեր է մեղմէ։ Սուեղծած է հարուստներ եւ ազքատներ։ Վա՜յ տնոր, որ կը խոխոռէ կարգը։ Կարգը խախտողը Աստուծոյ կամքին դէմ ծառացած կ'ըլլայ։

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ (զայրացած)։— *Գնա՛ եւ ոչխարներդ արարդէ, Մանոլիոս, քու տեղդ հոն է, այն տեղը, զոր Աստուած տուած է քեզի։ Դուն միայն քու գործերովդ զբաղէ։*

(Տէր Գրիգորիս ձեռքի նշանով կը լռեցնէ Փաթրիարշէասը եւ կը դառնայ Տէր Ֆոթիսին, որ մտիկ կ'ընէ)։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ։— *Տէր Ֆոթիս, ձեր գալէն առաջ ամէն ինչ կարգին էր հոս։ Մենք խաղաղ էինք ու երջանիկ։ Դուք Աքովրիսիին բերին խռովութիւն, գոգութիւն եւ գայթակղութիւն։ Ազքատները աներես դարձան եւ հարուստները սկսան մտահոգուիլ։ Զգո՛յշ եղիր, Ազան չուտով պիտի վերադառնայ եւ գիւղի մեծամեծները անկէ պիտի պահանջեն, որ քեզ ալէկ դուրս ընէ, որպէսզի մենք ալ կարենանք գրանել մեր խաղաղութիւնը։ Հաւաքէ՛ մարդերդ եւ գնա՛ այլուր, Աստուծոյ օրհնութիւնը հետդ ըլլայ, միայն թէ կարելի եղածին չափ հեռո՛ գնա։*

ՏԷՐ ՖՈԹԻՍ։— *Իրաւունք ունիս, տէր հայր։ Որովհետեւ ինչ որ կը պատահի այս աշխարհին մէջ, կը պատահի Աստուծոյ կամքով։ Եթէ Մանոլիոս խօսեցաւ՝ խօսեցաւ Աստուծոյ կամքով։ Եթէ ձեր մէջէն քանի մը հոգիներու սրտերը բացուեցան՝ նոյնպէս, բացուեցան Աստուծոյ կամքով։ Եթէ մենք, ինչպէս դուն կ'ըսես, հոս եկանք ձեր գիւղին անդորրութիւնը խանգարելու, այդ եւս Աստուծոյ կամքին պէտք է վերագրել։ Որովհետեւ ինչպէս ջուրը երկար ատեն անշարժ մնալով կը պղտորի, նոյնպէս եւ հոգին կը պղտորի երկար ժամանակ խաղաղ մնալով։ Թող Աստուած այնպէս մը տնօրինէ, որ մենք բլլանք փոթորիկը ազդարարող եւ ջուրերը խենթացնող հովը...։ Եղբայրնե՛ր, մենք ալ ձեզի պէս բարեկեցիկ կեանք մը կ'ապրէինք եւ իջանք մուրացիկի աստիճանին։ Գիւղէ գիւղ շրջեցայ ու վերադարձայ ձեռունայն։ Մեռնիլը փոյթ չէ ինծի։ Փոյթ չէ նաեւ, եթէ ծերերը մեռնին, անոնք ապրած են իրենց ժամանակը։ Բայց ամէն օր մեր զաւակներէն մէկը կը մեռնի անօթութենէն։ Անոնք պիտի չմեռնէին, եթէ չունենան նեռուելիք մեր սեղաններուն աւելցուքները տալիք անոնց։ Ես մանուկներուն համար է, որ ձեռքերս կ'երկարեմ։*

(Գիւղացիները կը յուզուին)։

ՏԻՄԻԴՐԻ։— *Ցառաջիկայ կիրակիին համար գէր զուարակ մը մորթեցի. պիտի երթամ ու միսերը բաժնեմ Սարաքինայի զաւակներուն։*

ԱՆՏՈՆԻՍ։— *Ես ալ երթամ եւ գաղթականները ձրիաբար սափրեմ։*

ՈՒՍՈՒՑԻՉԸ։— *Ես այբենարաններ ունիմ, փոքրիկներու յատուկ ընթերցանութեան գիրքեր, մատիտներ եւ Ցունաստանի մէկ չքեղ քարտէսը, ուր նշուած են նաեւ այն նահանգները, որոնք բռնագրաւուած են ոսոխէն։ Կը նուիրեմ զանոնք Սարաքինայի զաւակներուն։*

(Տէր Գրիգորիս խիստ նայուածք մը կը նետէ եղբօրը վրայ)։

ԼԱՏԱՍ։— *Գրո՛ղը տանի։*

ՄԱՆՈԼԻՈՍ (մօտենալով Տէր Ֆոթոսին)։— *Կը տեսնե՞ս, տէր հայր, պէտք չէ յուսահատիլ։ Քրիստոս չէ մեռած։ Քաջութի՛ւն։*

ՏԷՐ ՖՈԹԻՍ (սարսափնցիներուն)։— *Օ՜ն, զաւակներս, մենք ալ լեռան բարձրունքին ունինք մեր Սուրբ Եղիայի մատուռը։ Երթանք փառք*

digitised by A.R.A.R.@

առնք Աստուծոյ: Այս օրը մեծ է, նման այն օրուան, երբ չարժենցաւ մարդուն սիրտը։ (Կը սկսի քալել։ Կը դառնայ հոն)։ Ցտեսութիւն, լիքովրիսեցիներ եւ բարի ախորժակ։ Տո՛ւր օրհնութիւնդ, Տէր Գրիգորիս։

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— *Դուք կը ուտանաք միա՛յն անէծքս։*

(Տիմիդրի սեղանը կը հաւաքէ։ Փաքրիսարշէաս կը կանչէ Մանոլիոսը։ Միշէլիս հւս կանգ կ'առնէ)։

ՓԱՔՐԻԱՐՇԷԱՍ.— *Մանոլիոս, հո՛ս եկուր...։ Ապուշ, դուն խանդաբեցիր մեր ուռնախմբութիւնը։ Ինչ յիմար եմ եղեր այն օրը, երբ մարդ ընելու համար քեզ դուրս բերի վանքէն, ուր կ'ապրէիր նեբբինների մը պէս։ Այս ի՞նչ պատմութիւններ են, ի՞նչ շահ ունինք մենք քեզմէ։ Սուրբ-սուրբ կը խաղաս, որպէսզի տխմարները հաւատան քեզի եւ յիշատակութիւն յայտարարես։*

ՄԱՆՈԼԻՈՍ (զարմացած).— *Ե՞ս, յիշատակութի՞ւն յայտարարեցի։*

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ.— *Ցանցաւորը դուն ես, այդ դուն ես, որ կը հրահրես գիւղացիները։*

ՓԱՔՐԻԱՐՇԷԱՍ.— *Դուն չես լսած փորին ատակը, որ կ'ուզէ ըլլալ գլուխը՝ հրամայելու համար։ Մարմնի գեղեցիկը սկսան դուրս եկել բերնէն ու աչքերէն եւ մարդը հաթեցաւ։ Թող փորը իր տեղը մնայ, եւ գլուխը՝ իր տեղը։ Գլուխը ես եմ։ (Զայրացած կ'եբբեւեկէ թեմի լայնքին ու երկայնքին)։ Եթէ քեզի մնանք՝ պէտք է որ հարուստները անհետանան։ Բայց եթէ հարուստները անհետանան, անխե՛լք, աղքատներուն ո՞վ պիտի ողորմի։ Ո՞վ պիտի վարձէ քեզ իբրեւ հովիւ։ Ա՜հ, այս մարդն չէի՞ր մտածած։ (Ինքն իրմէ դուրս գալով)։ Ոչնո, հեռացի՛ր ասկէ, անպէտք, քչուառական։ Մենք եղբայրներ ենք։ կ'ըսես, որպէսզի մեր ունեցածին կէսը առնես ու մեկնիս։ Ո՞վ ասիկա մացուց քոչունի ուղեղդ մէջ։*

ՄԱՆՈԼԻՈՍ.— *Քրիստոսը։*

digitised by A.R.A.R.@

ԽՈՐՀՈՒՐԴ

★

Քարերու
Ծանր յիշողութիւններէն
Թեւածող՝
Թռչունները
Գմբէթներ կը գծեն
Հոն՝ ուր հայոց աշխարհին
Երկինքը ծածկող
Ազաւնաթեւ լռութիւններ
Կ'աղօթեն...

Խորհուրդներուն վրայ հսկող
Սարերն ի վեր
Անմատոյց՝
Խոյակները լուսակնդիր կը խոկան...

Մեր երազին ծիածանէն եօթներանգ
Մեղեդիներ յորինած՝
Թռչուններու երամն անքեմ՝
Աստուծոյ լոյս հայեացքին տակ.
Կը խոյանայ՝
Բարբառելու
Մեր աչքերուն
Վիրապները անյատակ...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

... ՍՈՒՍԱՆԸ ՍԷՐ ՍՏԵՂԾԵՑ....

Կարապետն արթնացաւ սրտի անասանելի խառնուրդից: Երազում, նա անցնում էր խանութի առջեւով Գելանց մասնորդ Թաթուշի, որի հետ խոով էր. երբ Թաթուշը ժպտալով նրան հրաւիրեց.

— Արի, արի, ա՛յ Կարո: Ներս արի, քիզ մի լաւ միս ուտեցնեմ:

Կարապետը յիշեց, որ ինքը Թաթուշի հետ չէր խօսում, բայց անմիջապէս մոռացաւ:

Խանութի ներսում Թաթուշը մորթից եւ ներքին գործարանների մաքրուած երիք հարպապատ ոչխարներ էր կախել: Այդտեղ շատ հանձեր կային եւ հում մսի ծանր հոտ:

Թաթուշը շատ սիրալիր էր Կարապետի հետ:

— Ասա՛, ասա՛, որտեղի՞ց ես ուզում, որ կտրեմ, եւ դու մի լաւ միս ուտես, Կարո՛...

Կարապետն այնպէս համաձայնեց Թաթուշի հետ, որ կարծես ինքը հում միս ուտելով էր մեծացել.

— Հա, Թաթուշ, մի քիչ ուտեմ:

Թաթուշը վերցրեց իր սուր դանակը եւ մի ոչխարի մէջքից կէս մետր երկարութեամբ մի շերտ կտրեց եւ տուեց Կարապետին.

— Անուշ արա, Կարո: Անուշ արա:

Կարապետը խժռեց հում մսի շերտը:

— Նորի՞ց,— հարցրեց Թաթուշը:

— Նորից,— համաձայնեց Կարապետը:

— Հիմա էլ այս միւս ոչխարից համտես արա...

— Հա՛,— համաձայնեց Կարապետը:

Կարապետը կերաւ երկրորդ շերտը:

— Հիմա էլ էն միւս ոչխարից:

— Հա՛,— նորից համաձայնեց Կարապետը:

Կարապետը սկսեց ուտել երրորդ շերտը: Իսկ դուռդիր Թաթուշը դանակի հետ միասին երկու ձեռքը դրել էր փորի վրայ ու ծիծաղում էր: Ծիծաղում էր, ո՞նց էր ծիծաղում. կարծես Կարապետը շատ ծիծաղելի մի բան էր անում:

— Էլի՞,— ծիծաղի միջից հարցրեց Թաթուշը:

— Էլ չէ,— ասաց Կարապետը եւ սրտի խառնուցքից արթնացաւ:

Արթնանում, ուր նա պառկել էր՝ ծանր մութ էր: Կարապետի կինը, որ շատ նիհար էր եւ ոչ գեղեցիկ, մէջքը գարձրել էր դէպի ամուսինը եւ քնել: Երեւի կէս գիշեր էր: Կարապետը հառաչեց.

«Եթէ մեր այս կինը մի քիչ գեղեցիկ լինէր....»

Սիրախաղերի մասին մտածելով, անմիջապէս Կարապետի միտքն ընկաւ Յովակիմից հարս Սուսանը, որը մի պուտ արիւն էր դարձել եւ կաթել Կարապետի սրտի սրտում:

«Սուսան, ա՜խ, Սուսան...», հառաչեց սիրահար Կարապետը:

digitised by A.R.A.R.@

Կարապետը իրաւունք ունէր սիրահարուելու Յովակիմանց հարս Սուսանի վրայ, որովհետեւ Սուսանի վրայ չէր կարելի չսիրահարուել: Հազիւ քսաներ կու տարեկան կար: Ո՛չ Թուխ էր եւ ոչ էլ սպիտակ: Աչքերը եղնիկի էին. հայեացքը՝ եղնիկի. քայլուածքը՝ եղնիկի:

Հազիւ մի բարակ ու ցածր պատ էր բաժանում Կարապետենց բակը Սուսանենց բակից: Այդքան մօտիկութիւնը դժուար էր Կարապետի համար, որովհետեւ ամէն օր տեսնում էր նրան, սէր էր քաշում եւ ներքին այրուցքից բերանից ու քթածակերից ծուխ արձակում:

Սուսանը եւ՛ շատ մօտիկ էր Կարապետին, եւ՛ շատ հեռու: Թւում էր նաեւ, թէ անհոգի Սուսանը սեղի ծայրի չափ անդամ ուշադրութիւն չէր դարձնում Կարապետի սիրախորով եղած հեռապրնդումներին:

Օրեր էին լինում, երբ նրա կինը տանը չէր լինում, այն ժամանակ նա կանգնում էր իրենց բակի մի բարձր տեղում եւ այնտեղից Սուսանենց բակն էր դիտում:

Շատ անգամ նա Սուսանին տեսնում էր բակը ուլելիս, հաւերին կուտ տալիս, ներս ու դուրս անելիս: Նա տեսնում էր նրա փարթամ մարմինը եւ կիրքն աւելի էր բորբոքւում նրա մէջ:

Մի քանի անգամ նա երիտասարդ կնոջը հասկացրել էր իր սէրը, բայց Սուսանն իրեն անհասկացողի տեղ էր դրել, խօսքը փոխել էր եւ հէջ Կարապետին փուչման թողել:

Բանն այն էր, որ Սուսանի մասին գիւղում ուրիշ էին խօսում: Այն օրուանից, երբ Սուսանի ամուսինը քարափից ընկաւ, դլուխը կոտրեց ու երիտասարդ-երիտասարդ մահացաւ, այդ օրուանից Սուսանի եւ նրա տնտեսութեան հոգն իր վրայ վերցրեց նրա մօրաքրոջ թոռը՝ ռուս Արշոն: Արշոյին ռուս էին անուանում, որովհետեւ նա չէկ էր եւ կապոյտ աչքեր ունէր: Արշոյենց բնտանիքի անդամներն ամէնքն էլ Թուխ էին, բայց այս մէկն այդպէս չէկ էր: Նա հազիւ տասնիններորդ տարեկան լինէր: Նիհար էր ու գունատ:

Սակայն, թէեւ ոչ ոք հաստատօրէն ոչինչ չգիտէր, գիւղում խօսք ու զրոյց էր գնում, որ ռուս Արշոն ու Սուսանը մէկ են, այսինքն՝ երբեմն մի անկողնում են պառկում, եւ իրենք իրենց մարդ ու կնոջ պէս զգում: Խօսք էլ կար, որ Սուսանն ու Արշոն մինչեւ Սուսանի ամուսնութիւնը սիրահարուած են եղել միմեանց վրայ, որ նրանց, թէեւ հեռաւոր, բայց նորից ազգակցական կապ էր պատճառ դարձել, որ չամուսնանան եւ մի բարձի վրայ չծերանան:

Սակայն սէրը, որ կայ՝ հեռաւոր ազգակցական կապ չի հարցնում, ծուռումուռ ճանապարհներով բերում է սիրահարներին իրար միացնում:

«Անուէ՛ր մնա սէրը, սէրը որ կայ՝ էդէնց ա», ասում էին համագիւղացիները իրենց բամբասանքներն արդարացնելու համար:

Բայց եթէ համագիւղացիները թերեւս միայն բամբասում էին, Կարապետն, ինչպէս ասում են, խանդից իրեն ուտում էր, երբ Արշոյին եւ Սուսանին իրար հետ էր տեսնում: Յաճկօրէն նա տեսնում էր, թէ ինչպէս Արշոն Յովակիմանց բակը մտնելու ժամանակ, Սուսանը նրան ընդառաջ էր գնում, համբուրում՝ թէ վազում էր, քիչ էր մնում դրկէր նրան, բայց ձեռքը նրա չէկ ու գունատ երեսին էր քսում, մատներով ատամներում էր նրա չէկ մազերը, իրբ թէ կատակ էր անում, երբ փորձում էր ոլորել պատառնու չէկ ու թիլ-թիլ բեխերը: Յետոյ՝ նրանք համբուրում՝ կիսագրկուած գնում-մտնում էին կիսամութ թոնրատունը:

Այդտեղ Կարապետի երեւակայութիւնը սիրային պատկերներ էր գծում նրա աչքերի առջեւ եւ խանդից խենթացնում:

Նման դէպքերում, նա ոչ այնքան Սուսանի վրայ էր բարկանում, ինչքան որ Արշոյի:

«Եթէ չլինէր այդ յարդի պէս չէկ լակոտը, Սուսանն անպայման ինձ վրայ կը սիրահարուէր: Ա՛խ, ո՞վ է այդ լակոտը, որ այդքան սիրուն կնկայ հետ պառկի: Ի՞նչ ա հասկանում նա սիրուն կնոջից», բարկանում էր Կարապետը:

2

Կարապետը շատ շուռ-մուռ եկաւ անկողնում, մինչեւ որ կարողացաւ նորից քնել: Լոյս էր արդէն, երբ արթնացաւ:

digitised by A.R.A.R.@

ելաւ անկողնուց եւ լուացուեց։ Նրա կինը տանը չէր, եւ նա ուրախ էր, որ այդպէս էր, որովհետեւ նրան չէր սիրում։ Կարապետն ուզեց գնալ իր արտը տեսնել, եւ եթէ մոլախոտեր կան, կնոջ ուզարկի քաղհանելու։

Գարնանային արեւոտ եղանակ էր եւ Կարապետը հրճուանք զգաց կեանքի նկատմամբ։ Միայն Սուսանն էր պակաս։ Ցիչելով Սուսանին, նա նայեց նրանց բակը։ Բայց երիտասարդ այրին այնտեղ չէր։ Նա հառաչեց եւ գնաց մարագը, ուր նա պահում էր իր տարճանակը։ Այդ տարճանակը ինքն էլ չգիտէր, թէ ինչու էր գնել։ Բայց գնել էր, եւ երբեմն գրպանն էր դնում, երբ դուրս էր գնում։ «Թերեւս արջ, գայլ, աղուէս տեսնեմ, սպանեմ», իրեն արդարացրեց նա, տարճանակը դնելով գրպանը։ Երբ մարագից դուրս եկաւ՝ նորից նայեց Ցովակիմանց բակը եւ տեսաւ Սուսանին, որը հաւերին կուտ էր տալիս։ Կրքից նրա սիրտը թրթռաց, եւ նրան այնպէս թուաց, որ հազարաւոր ասեղներով ե՛ւ ցաւալից, ե՛ւ դուրեկան ծակծկեցին իր մարմինը։

— Բարի լոյս, Սուսան,— պատին մօտենալով եւ նրա վրայով գեղեցկուհուն բարեւեց նա։ աչքերում սէր, աչքերում դուրգուրանք։

— Բարի լոյս, Կարապետ,— Կարապետի տարփալից հայեացքի նկատմամբ անտարբեր, բարեւեց Սուսանը։

— Ա՛խ, Սուսան, Սուսան,— հառաչեց նա, իբր թէ սէրից տառապածի ձայնով։

— Կարապետ, նորից մի սէրբ,— մեղմօրէն յանդիմանեց Սուսանը։

— Ա՛խ, ինչպէս չսիրեմ, Սուսան, ինչպէս չսիրեմ, երբ քո սէրից էրում եմ՝ մոխիր եմ դառնում։

— Ամօթ ա, Կարապետ, ամօթ ա։

— Ամօթ ինչի՞ համար, Սուսան։ Սէրի՞ս համար։

— Դու կին ունես, ամուսնացած մարդ ես,— նորից յանդիմանեց Սուսանը։

— Ի՞նչ անեմ կինը, որ չեմ սիրում։

— Ես մեղաւոր չեմ, Կարապետ,— ասաց Սուսանը եւ գնաց մտաւ քոնրատուները։

Կարապետը չմտածեց, թէ ինչ է անում, երբ պատի վրայով թռաւ Սուսանենց բակը։ Նա նորից չմտածեց, երբ գնաց դէպի թոնրատունը, եւ զուրը բացելով ներս մտաւ։

— Կարապետ, ինչի եկար։ Ցեռ գարձիր, յետ դարձիր։ Հարեւանները որ տեսնեն՝ ինչ կը մտածեն,— այս անգամ բարկացաւ Սուսանը։

— Իմ սէրիս պատասխան տուր, Սուսան։

— Քո սէրի պատասխանը ո՛չ է։

— Աղէա՛ ինձ, Սուսան։

— Ցե՛տ դարձիր, Կարապետ։

— Վերջին դանակը, սիրտս փորիր։

— Գնա՛, Կարապետ, գնա՛։

— Ձե՛մ գնա, մինչեւ այս չասես։

— Կարապետ ես բ... չեմ։

— Ես չեմ ասում, որ ես։

— Դեհ, գնա՛, Կարապետ։ Աղաչո՛ւմ եմ, որ գնաս։

— Սէ՛րս, Սուսան, սէ՛րս։

— Ես այդ կանանցից չեմ։

— Ծիլդ չէ։

— Այդ ի՞նչ ես ասում։ Ձե՞ս ամաչում։

— Աբշո՞ն։

— Աբշոն տուա ա։

— Ես իմ աչքերով եմ տեսել։

Սուսանի բարկութիւնից լարուած դէմքը մեղմացաւ։ Անուշացաւ։

— Աբշոն իմ բարեկամն ա։

— Բայց նորից։ Ինչ ա էդ չէկ լակոտը, որ կպել ես նրան։

— Աբշոն լակոտ չէ։

— Լակո՛տ ա։

— էդ «լակոտ» մի մարդը չեմ փոխի քեզ հետ, Կարապետ։

— Բա՛հ,— զարմացաւ Կարապետը։

Դեռ ոչ ոք այդպէս անխղճօրէն չէր վիրաւորել նրան։ Վերաւորանքից դունատած եւ գողդողուն՝ նա ձեռքը բարձրացրեց հարուածելու կնոջը, բայց յիշեց գրպանի տարճանակը։ Նա արագօրէն հանեց գէնքը եւ առանց մտածելու՝ կրակեց անպաշտպան կնոջ վրայ։

Կրակոցից առաջացած ահռելի ձայնից օդը տատանուեց, եւ մի քանի առարկաներ շարժուեցին իրենց տեղերում։ Տունը ծխով լցուեց, եւ վառօդի սուր ու կծու հոտով։

Վառօդի այդ հոտն էլ սթափեցրեց Կարապետին։ Նա դեռ չէր գիտակցում, թէ

digitised by A.R.A.R.@

ինչ պատահեց, որ իր արածը սպանութիւն չէր, երբ անուս Սուսանին յատակին պառկած:

— Մի՞թէ,— հարցրեց նա ինքն իրեն, եւ իրեն նեռեց կնոջ վրայ: Գնդակը ծակել էր Սուսանի կուրծքը՝ երկու ստինքների արանքում:

Նա բարձրացրեց կնոջ գլուխը եւ դրեց ծնկանը.

— Սուսա՛ն, ա, Սուսա՛ն...

Կինը բացեց աչքերը եւ նրան նայեց մոլոր հայեացքով, եւ ապա բառերը մեծ դժուարութեամբ եւ հատ-հատ արտասանելով շշնջաց.

— Ինչո՞ւ... Կարապետ, ինչո՞ւ սպանեցիր ինձ...

Նա ուզեց ուրիշ բան էլ ասել, սակայն նրա բերանից արիւն հոսեց եւ նա անշընչացաւ:

«Ինչո՞ւ սպանեցի նրան... ինչո՞ւ սպանեցի նրան... Թող կոտրուէր ձեռքս... կոտրուէրջ, շշնջաց նա եւ Սուսանի գլուխը զգուշութեամբ դնելով ասֆալտ հողէ յատակին՝ ելաւ տեղից:

Նա ուզեց փախչել, բայց զգաց, որ չի կարող: Որ իր ոտքերը կարծես կապուած էին իր գոհի հետ: Նա չկա նայեց:

Սուսանը կարծես չէր պառկել, այլ թաւալել էր յատակին: Նրա մի ոտքը երկնցած էր, իսկ միւսը՝ ծնկից ծալուած: Թեւերը տարածել էր կողքերին: Նրա բերանից դեռ արիւն էր հոսում:

— Սուսա՛ն... Ներիր ինձ, Սուսա՛ն...,— նորից շշնջաց նա, եւ նրան այնպէս թուաց, որ ոտքերը բացուեցին: Նա մօտեցաւ դրանը, մի քիչ բացեց եւ սկսեց գուրսը նայել զգուշութեամբ:

Դուրս գալով Սուսանենց բակը, նա այնտեղից ուզեց պատի վրայով թռչել իրենց բակը: Բայց մտածելով, որ հարեւան տանիքների վրայից կարող են տեսնել, նա վճռեց նախ դուրս գալ թաղից: Բակի կիսաբաց դարպասի արանքից դուրս նայեց եւ ոչ ոքի չտեսնելով, համարձակօրէն դուրս քայլեց դարպասից: Բայց հապա էր երկու քայլ արել դէպի իրենց դուռը, երբ դէմ ու դէմ եկաւ Սահականց Մեծ Բերան Սաղոյին: Սաղոն, մէկ ոտից կաղ էր, եւ գիւղի բոժբասանքների տեղեկատուական կենտրոնական անձը: Նա ամէն ինչ գիտէր, եւ եթէ չգիտէր էլ՝ ինքն էր ստեղծում, եւ տարածում: Ու որովհետեւ այդպիսի մէկն էր, նրա համագիւղացիները նրան Մեծ Բերան Սաղո էին կանչում: Նա չէր վիրաւորուած այդ ածականի համար, այլ ծիծաղում էր: Անհոգ էր եւ կատակաբան:

«Ա՜խ տուն քանդուեցէ, մտածեց Կարապետը: Նա վճռել էր ամէն գնով ուրանալ, որ Սուսանին ինքն է սպանել: Իսկ հիմա այդ Մեծ Բերան Սաղոն:

Սաղոն երեւի անտառից էր գալիս, որովհետեւ մի խուրձ խոխ էր կրում ուսի վրայ:

— Հը՞,— հարցրեց նա Կարապետին այնպէս, որ կարծես ամէն ինչ պարզ էր:

— Ի՞նչ ա, Սաղո,— իր հերթին հարցրեց Կարապետը:

— Տեսնում եմ գեղեցկուհի Սուսանի հետ գործերդ կարգի են բերել...

— Ինչո՞ւ ես այդպէս կարծում, Սաղո... Սաղոն հրհռաց.

— Տեսնում եմ հաշտուած վատ չէ, մե՛ր աղայ...

— Գիտես, որ Սուսանն ուրիշն ունի, էլ ինչո՞ւ ես բաներ ստեղծում ինձ վրայ,— ազիրուց Կարապետը:

— Էդ ուրիշը ուս Աբչոն ա՞: Սուսանը դիմ ա, որ քեզ պէս բարեւի հասակ ունեցող երիտասարդին թողնի եւ գնայ մէկի հետ, որը դեռ քիթը մաքրել չգիտի, ուր մնաց...

— Դու Սուսանին հարցրու...

— Դու հարցրե՞լ ես...

— Սաղո, դու գիտես, որ հանգուցեալ Քրմոյի հետ մենք եղբօր պէս էինք, էլ ինչպէս ես կարող եմ նրա կնոջն աչք դնել...

— Անտէ՛ր մնա սէրը, սէրն այդպիսի բաներ չի հարցնում...

— Սխալ բաներ ես մտածում, Սաղո՛: Ես հիմա Քրմոյենց բակից եմ դուրս գալիս, որովհետեւ նրանց քաղհանի ուրադը չեմ տարայ...

Սաղոն նորից հրհռաց.

— Կարապետ, մէկ ուրիշը, որ քու տեղը լինի՝ հպարտութիւնից երկինքից աչքերը վար չի բերի, որ գեղեցկուհի Սուսանի սէրն է վայելում...: Դու ինչո՞ւ ես ուրանում: Մի վախեցիր, չեմ գնայ գեղը չեմ լեցնի...

digitised by A.R.A.R.@

Կաբապետի աչքերը յանկարծ բացուեցին։

«Այո՛ Մեծ Բերանն իմ ոգուին է խօսում։ Եւ պիտի գնայ գիւղում տարածել եւ այդ աւելի լաւ։ Որովհետեւ կապածը իմ վրայից կը հեռանայ։ Որովհետեւ ալխարհի վրայ այդ ո՞վ է, որ ազատում է իր սիրած կնոջը»,— մտածեց նա։

— Գիտես ինչ, Սաղո՛, քո աչքից բան փախցնել չի լինի։ Ճիշդ ա... իմ եւ Սուսանի միջեւ կապ կայ... բայց ինդրում եմ չդնաս գեղը չլեցնես... ամօթ ա։ Քրմոյի հետ եղբօր պէս էինք...։ Ցեսայ էլ, գիտես։ Ես կին ունեմ։

— Ապահո՛վ մնա, Կաբապետ, ապահո՛վ մնա, գիւղում այդ մասին ոչ ոք չի իմանայ,— հրհրաց Սաղոն եւ հիւանդ ոտքը քարշ տալով հեռացաւ։

Կաբապետը տուն գնաց այնպէս ծանրօրէն քայլելով, որ կարծես իր ոտքերը ազմի մէջ էին խրուում։ Միւս կողմից էլ նա յանկանում էր գտնել, գնայ Սուսանի մօտ լինել։ Ինչու էր նա յանկանում իր գոհի մօտ լինել, նա չէր հասկանում։

Տանը նրա կինը վառել էր ակուռքը եւ կերակուր էր եփում։

Նայեց կնոջը, որը նրան շատ գեղեցիկ երեւաց։

«Ճիշդ է, նիհար է, բայց գէշ չէ», մտածեց նա եւ հառաչեց։ Ինչ հնարաւոր էր անելու, նա պատրաստ էր անելու, միայն Սուսանին ապառնած չլինէր։

— Ի՞նչ ես եփում,— հարցրեց նա կնոջը խղճուած ձայնով։

— Քո սիրած կերակուրն է, Կաբապետ։ Կաթնով։

— Բրինձ ա, թէ ձուար։

— Բրինձ ա։

— Ես հիմա արաը կը գնամ։ Եթէ մոլախոտեր կան, ասում եմ վաղը գնանք քաղհանելու։

— Այո։ Նստիր, նստիր։ Արդէն պատրաստ է։

Բակը արեւով էր ողողուած։

Կաբապետը նստեց, նայեց արեւին եւ զարմացաւ, որ այդպիսի մի գեղեցիկ օր ինքը մարդ է սպանել։

«Կաբապետ, ինչո՞ւ սպանեցիր ինձ», նրա ականջին անվերջ հնչում էր Սուսանի հարցումը։

Նա մի կերպ նախաճաշից եւ գուրս եկաւ տնից։ Գիւղամիջում մի խումբ երիտասարդներ նրան նայեցին նախանձով։ Մեծ Բերան Սաղոն էլ այնտեղ էր եւ պարդ էր, որ պատմել էր իր տեսածը եւ լսածը։

— Երանի՛ քեզ, Կաբապե՛տ,— չդիմացաւ եւ դուշեց երիտասարդներից մէկը։

Կաբապետը չլսելու տուեց եւ շարունակեց իր ճանապարհը։ Ամբողջ օրը նա արտում մնաց։ Մի քանի մոլախոտեր քաղեց, արմատներից հանեց։ Բայց արամադրութիւն չունէր աշխատելու։ Աշխարհն իր համար կործանուած էր տեսնում։ Տեսաւ մի քանի կաքաւներ, որոնք իրենից ոչ հեռու մի նոր վարուած արտում քիչուչ էին անում։ Նա յիշեց տարճանակը, անդիտակցաբար հանեց այն, որպէսզի կրակի կաքաւների վրայ, բայց յիշելով Սուսանին, տարճանակը զգուանքով գրպանը գրեց։ Նա մտածում էր ու մտածում։ Ուզում էր գլուխը առնել ու գնալ։ Գնալ ու փախչել։

«Բայց արդեօք կարո՞ղ եմ Սուսանի ապառնութիւնից փախչել», հարց տուեց իրեն, եւ գտաւ, որ ոչ։

«Եթէ չլինէր այդ Մեծ Բերան Սաղոն, ինձ վրայ կասկած չէր լինի»,— մտածեց նա։ Բայց անմիջապէս հակադարձ ունեցաւ, որ գրառով Սուսանի ապառնութիւնը եղելութիւնների մատեանից չէր ջնջուի։ Ինչպէս եւ չէր ջնջուի իր մտքից ու սրտից։

«Ինչո՞ւ ապառնեցի», տառապում էր նա։ Ցեսայ նա մտածեց, թէ ինչու էր գնել տարճանակը։

«Թող ձեռքս կտրուէր, թող ոտքս կտրուէր, որ պատի վրայից չթռչէի։ Թող եւ փայտից չլինուած լինէի, որ չտեսնէի այդ կնոջ գեղեցկութիւնը», մտածեց նա։

3

Կէսօրից յետոյ, նա վճռեց տուն գառնալ։ Եւ երբ մօտենում էր գիւղի ծայրին, կալերի մօտ, նա տեսաւ գիւղապետին եւ չրջանից եկած երկու ոստիկանների, որոնք իրար հետ խօսելով դէպի իրեն էին գալիս։

«Մի՞թէ գրանք ինձ են փնտռում», մտածեց նա։

digitised by A.R.A.R.@

Ցանկարծ նրա մէջ ամէն ինչ փոխուեց։ Եթէ նախապէս նա որոշել էր իրեն կասկածելու դէպքում ամէն ինչ խոստովանել, եւ բառնա գնալով քաւել իր յանձնածը, հիմա վճռեց որքան որ հնարաւոր է չյանձնուել, եւ գլուխը ոտնել ու փախչել։

Նա շրջուեց ու սկսեց վազել դաշտերում։ Հենց այդ ժամանակ էլ նրան տեսան ոստիկանները։

— Կանգնի՛ր, կանգնի՛ր։

Այդ հրամանը աւելի ստոկացրեց նրա վճիռը՝ չյանձնուելու։ Եւ նա սկսեց աւելի արագ վազել։

— Կանգնի՛ր, թէ չէ՝ կը կրակենք։

Սակայն նրա հոգը չէր։ Նա վճռել էր չյանձնուել։

Նա դեռ վազում էր, երբ լսեց գիւղապետի ձայնը.

— Մի սպանէք նրան։ Մի սպանէք նրան...

Բայց գնդակները սուրում էին նրա կողքերից.

«Վէ՛զդ, վը՛զդ...»։

Ցանկարծ նրան այնպէս թուաց, որ մի փոքրիկ քար կպաւ թիկունքին։ Նա զգացաւ, որ ինքը վեր թռաւ, կարծես օդի մէջից մի բան էր ուզում բռնել։ Երկրորդ անգամ մի այլ քար դիպաւ նրա թիկունքին։ Այս անգամ նա թեւերը բացեց եւ բերանավար փռուեց գետին։ Նա դեռ չէր կորցրել գիտակցութիւնը, երբ արիւնը խուժեց նրա բերանը։

«Ձիշդ ու ճիշդ Սուսանի պէս», մտածեց նա։

«Սակայն ես ինչո՞ւ սպանեցի Սուսանին», նորից մտածեց նա։

— Կարապետ, ա՛յ Կարապետ,— լսեց գիւղապետի ձայնը։

Նա ուզեց պատասխանել, բայց չկարողացաւ։

Ցանկարծ ուժեղ արեւ եկաւ։

«Ինձ մէջքի շրջեցին», մտածեց նա եւ սկսեց բաց աչքերով արեւին նայել համարձակ։

— Ս... ար... լա... ս... է...,— ասաց նա։

— Կարապետ, ասում են դու ես սպանել Սուսանին։ Ասա՛, ասա՛, քանի՞ տարի է։ Ձի՞շդ է, որ դու ես սպանել Սուսանին,— իր գէմքը նրա գէմքին մօտ բերեց գիւղապետը։

Մէկ էլ, ամէնքի համար անսպասելի, նա խօսեց.

— ... Սու... Սուսանը... ամբ... ամբ դրբ... դրեց իմ սրբ... սրտում...

— Կարապետ, ա՛յ Կարապետ,— նորից կանչեց գիւղապետը։

Նա ուզեց նորից խօսել, բայց չկարողացաւ։ Երեւի բերանից հոսող արիւնը խանգարում էր նրան։ Թուաց, թէ նա ամաչեց։ Նրա աչքերը արցունքով լեցուեցին։ Նա ուզեց բարձրացնել ձեռքը, երեւի արցունքները սրբելու համար, բայց չկարողացաւ։

— Կարապետ, ա՛յ Կարապետ...

Նա ճիգ գործադրեց խօսելու համար, սակայն ոչինչ զուրս չեկաւ։ Արցունքները դեռ հոսում էին նրա հեռահեռ մարող աչքերից, երբ նրա գլուխն ընկաւ կողքի։

Գիւղապետն ոտքի կանգնեց եւ կարգադրեց իր շուրջը հաւաքուած գիւղացիներին.

— Մի սայլ բերէք...

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

(Անտիպ)

digitised by A.R.A.R.@

Իմաստական Շարժում

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

1979 թուին Կանադայում, «Զարիա» հրատարակչութեան կողմից, լոյս տեսաւ ռուս մեծահամբաւ գրող Լեւ Տոլստոյի կրտսերագոյն դուստր Ալեքսանդրա Տոլստայայի (1884–1979) յուշերի շուրջ 500 էջանոց «Դուստրը» քառասուն գիրքը: Գրքի երկրորդ մասը արդէն լոյս էր տեսել աւելի վաղ՝ 1965ին, առանձին հատորով, իսկ մնացեալ մասերն էլ՝ նոր գրքի «Նովոյէ ռուսկոյէ սլովո» օրաթերթի կիրակնօրեայ համարներում, 1974 եւ 1975 թուերին:

Աւելի առաջ՝ 1953ին, Զեխովի անուան հրատարակչութեան նախաձեռնութեամբ, նոր գրքում տպուել էր յուշերի մի այլ երկհատոր գիրք «Հայրը» վերնագրով, որը նուիրուած էր հեղինակի՝ իր հօր հետ անցկացրած տարիներին, համապատասխան բովանդակութեամբ: Կրտսերագոյն դուստրը, ի դէպ, ամէնից շատ էր կապուած իր հօրը, նրա օգնականն ու պաշտպանն էր բնականաբար հանրայայտ ասբակարծութիւնների պայմաններում:

«Դուստրը» ընդգրկում է 1914–1939 ժամանակաշրջանը: Այնտեղ նկարագրւում են հեղինակի կեանքն ու տպաւորութիւնները Առաջին աշխարհամարտի ընթացքում, այնուհետեւ՝ խորհրդային տարիները, դրանց հետ

digitised by A.R.A.R.@

կապուած այլատեսակ ու յատկանշական իրադարձութիւններով։ 1929ի աշնանը Տոլստայինի, երկար ու դժուարին բանակցութիւններից յետոյ, յաջողուեց դասախօսութիւնների մի շարք կարդալու ծրագրով մեկնել Ճապոնիա, այնտեղի առլսոյականների հրաւէրով, որտեղ եւ որոշեց այլեւս Ռուսաստան չվերադառնալ։ Ճապոնիայում որոշ ժամանակ մնալուց յետոյ՝ նա 1931ին հասաւ ԱՄՆ, օրերից մի օր Նիւ Եորքի շրջակայքում ձեռք բերեց մի գիւղատնտեսական ագարակ, որտեղ եւ հեռագրում ստեղծուեց նշանաւոր «Տոլստոյի ֆոնդը» (Հիմնադրամը)՝ մարդասիրական ծրագրով ու գործունէութիւնամբ։

Եւ ահա յիշեալ յուշերի գրքի առաջին մասի հինգ հատուածներ ուղղակի վերաբերում են այն ամիսներին, երբ 30 տարեկան Տոլստայան, իրրեւ համառուսաստանեան Զեմստուական Միութեան կազմակերպած կամաւոր շրջանակում գործող դիւրութեան քոյր, գտնւում էր Հայաստանում՝ ռուսական բանակի տրամադրութեան տակ, եւ այդ ստիքով էլ իրերի բերմամբ եղաւ Երեւանում, Իգդիրում, Ալաշկերտի Ղարաքիլիսայում ու Վանում։ Աւելի առաջ նա նոյն ուղղութեամբ գործել էր արդէն Արեւմտեան ռազմաճակատում, համապատասխան նախնական փորձառութիւն ձեռք բերելով։

Գրքի սկզբնական երեք հատուածներից յետոյ («1914ի Ցուլիսը», «Տազմաճակատում», «Բելոստոկի սանիտարական կետը») սկսւում է Հայաստանեան բաժինը (4–8 հատուածներ)։ Այդ հայաստանեան՝ այժմ իմ կողմից թարգմանուած բաժնի ընդհանուր վերնագիրը տրուած է թարգմանչի կողմից, իսկ առանձին հատուածների վերնագրերը, ի հարկէ, հեղինակին են պատկանում։ Հատուածները համարակալուած են առանձնացուած բաժնի հաշուով։

Ցուլերի հայաստանեան բաժինը ուշագրաւ է նրանով, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս էր տեսնում հիւսիսից եկած մի օտարուհի հայոց բնաշխարհը, ինչպէս էր զգում նա պատերազմական մթնոլորտը, եւայլն։ Այդ ժամանակի Հայաստանի մասին գրականութիւն առհասարակ շատ կայ, մա՛նաւանդ հայերէն եւ հայերի կողմից շարադրուած։ Բայց իր տեղն ունի եւ օտարների ձեռքով ներկայացուած գրականութիւնը, անկախ իր բնոյթից՝ յուշագրական կամ հետազօտական։

Շարադրանքը աչքի է ընկնում միանգամայն զուսպ ոճով։ Նախադասութիւնները հիմնականում կարճ են, երբեմն էլ սակ առանձին բառերով կամ բացականչութիւններով սահմանափակուած։ Այսինքն՝ խտացուած։ Հեղինակը ցուցաբերում է դիտելու ակնյայտ կարողութիւն, անմիջականութիւն։ Եւ դա ընթերցողին հնարաւորութիւն է տալիս առանց յատուկ ճիգի տեսնելու եւ զգալու այն, ինչ որ ժամանակին տեսել ու զգացել է հեղինակը։ Մա՛նաւանդ որ, հասկանալի պատճառներով, բացակայում է ճշգրիտ ու հետեւողական բառացի ժամանակագրութիւնը եւ չեչաը գրուած է առաւելապէս ընթացիկ դէպքերի ու դրանց հետ առընչուած պատկերների վրայ։

Կարելի է ասել, թէ միակ տարակուսելի կէտը հետեւեալն է։ Ցուլերը կարդացողը, մա՛նաւանդ երբ օտար է եւ հայ իրականութեանը անտեղեակ, համարեա՛ ոչ մի վաւերական պատկերացում չի կարող կազմել, դրանց հիման վրայ, ժամանակի դարհուրելի դէպքերի՝ Արեւմտահայաստանին ու արեւմտահայութեանը վիճակուած ողբերգութեան մասին։ Ի հարկէ, յուշագրի անցած ճանապարհը նեղ եւ նրա գործունէութեան շառաւիղը կարճ էր։ Նա չատ բան չդիտէր եւ չէր կարող իմանալ անմիջական շրջապատից։

Բայց եւ այնպէս... ժամանակն իր բնոյթով այնպիսին էր, որ յիշեալ իրադրութիւններին անդրադառնալու համար նոյնիսկ յատուկ դիտաւորութեան ու նախասիրութեան կարիք չկայ։ Պէտք է որ լարուած գրիչն ինքնաբերաբար այդ ուղղութեա՛մբ շարժուէր, իր յետեւից հրամայաբար տանելով դրող ձեռքը։

digitised by A.R.A.R.@

Սակայն իրականում այդպիսի ինքնարուխ՝ թէկուզ եւ նուազագոյն տրամադրութիւն չի նկատուում։

Դա երեւում է նաեւ այն քիչ տողերից, որտեղ ի միջի այլոց յիշւում են հայերը կամ նրանց հետ կապուած դէպքերը, որոնք ներկայացուում են անընդհատ գոյներով կամ էլ գժկամութեամբ, ոչ թէ հեղինակի անմիջական տեսութեան հիման վրայ, այլ՝ ականջալուր «տեղեկութիւնների» ապաւորութեան տակ։ Իսկապէս այն չէ, թէ օտար յուշագրից անպայման հայանպաստ վկայութիւններ կարող են ապաւուել ոմանց կողմից։ Այդպիսի վկայութիւններ, այս կամ այն պատճառով, կարող են եւ չլինել։ Բայց պատմական այնքան ծանրակշիռ իրականութիւնը համարեա՝ ուղղակի շրջանցելը՝ հազիւ թէ հաւարակ պատահականութեան արդիւնք լինի։ Երեւոյթն այնքան անհասկանալի է, որ որեւէ տրամաբանական բացատրութիւն անկարելի է դատնում։ Չէ՞ որ յուշագիրը իրականում եւ անմեղապէս ոչ մի հիմք չունէր իր վերապահութիւնների, թերասածութիւնների ու, մանաւանդ՝ հիմնովին անտեղի վերագրումների համար։

Թէեւ հեղինակի վերաբերմունքը բացատրելն անկարելի է, այդուհանդերձ, անտեղի չէ նշել երկու կողմնակի հանգամանք, որոնք թերեւս բան յուշեն՝ այդ վերաբերմունքի բնոյթը կռահելու ուղղութեամբ։

Առաջին.— Գրութեան ոճը գործում էր ռուսական բանակի այն զօրաբաժնի հրամանատարի ենթակայութեան ոլորտում, որը անմանրամասն չէ հայութեան համար։ Դա օտազգի զօրավար Արացիւն էր։ Հայկական յուշագրական կամ պատմա-քաղաքական գրականութեան մէջ Արացիւը միահամուռ կերպով յիշւում է զարգացած իրեւ «հայասէաց» անձնաւորութիւն, որն ամէն կերպ խանգարում էր հայերին ու, մանաւանդ՝ հայ կամաւորներին։ Այդ բնութագրումը, ըստ էութեան, հաստատուում է եւ խորհրդահայ հրատարակութիւններում։ Այսպէս, օրինակ, հանգուցեալ ռազմական պատմաբան Աշոտ Յարութիւնեանի «Կովկասեան ռազմաճակատը 1914–1917 թուականներին» գրքում նշւում է, թէ զօրավար-մայոր Դմիտրի Կոնստանտինովիչ Արացիւը (ծնուած 1857 թ.), որը ժամանակին մասնակցել է 1877–1878ի ռուս-Թրքական եւ 1904–1905ի ռուս-Ճապոնական պատերազմներին, յետագիմական զինուորականներից մէկն էր, միապետական, ու բազմիցս դրպարտել է հայ կամաւորներին՝ այլեւայլ մեղադրանքներով, հանդիպել նրանց համապատասխան բողոքներին, ինչպէս եւ անբարեացակամ էր հայ բնակչութեան հանդէպ։ Աւելին.- գրքում յիշւում են եւ ռուս ականաւոր հասարակական ու քաղաքական գործիչ Պ.Մ. Միլիւկովի քննադատական արտայայտութիւնները Արացիւի եւ նրա նմանների հակահայ տրաքքների ու վարած քաղաքականութեան դէմ։

Արդ, այդ Արացիւը յուշերի հեղինակի ազգականների փեսայ էր եւ, ինչպէս երեւում է շարադրանքից, տարբեր առիթներով յանախ էր տեսնուում գրութեան քրոջ հետ՝ ջանալով ամէն կերպ ընդառաջել նրա խնդրանքներին ու հանձնարարանքներին։ Անկարելի չէ կարծել, որ այդ թռուցիկ հանդիպումների ժամանակ նա այս կամ այն չափով ու եղանակով իր հակահայ պատկերացումներն էր արտում ինչպէս իր շրջապատի մարդկանց, այնպէս էլ աչքարկից մեծ մասամբ անտեղեակ գրութեան քրոջ մէջ։ Դրա համար շատ բան հարկաւոր չէր եւ ոչ էլ յատուկ գաղափարներ կարիք կար։ Հատուկենտ խօսքերը ու դէմքի արտայայտութիւնները էլ միանգամայն բաւական էին։ Մնացածը կարող էր «խմբուել» ինքնին։

Երկրորդ.— Շատ տարիներ առաջ, կարծեմ Վարդգէս Հարոնեանի յօդուածներից մէկում, կարդացել եմ այսպիսի մի բան։ 1894–96 թուականների կոտորածներից յետոյ, մի խումբ հայ եւ ռուս մտաւորականներ որոշեցին

digitised by A.R.A.R.@

հրատարակել «Եղբայրական օգնութիւն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն, թէ՛ հրատարակութեանը ուշադրութեանը այդ ու պղտութեամբ սրելու եւ թէ գրքի վաճառքից հաւաքուած գրամը տուժածներին հասցնելու համար: Եւ այդ նպատակով նրանք գիմեցին ժամանակի աչքի ընկնող մարդկանց՝ գործին մասնակցելու հրաւէրով: Դիմեցին նաեւ Լեւ Տոլստոյին, որը, սակայն... մերժեց ընդառաջել:

Արդ, այդպիսի կարուկ մերժումի համար նա պէտք է որ որոշ՝ իր համար ծանրակշիռ պատճառներ ունենար: Եթէ Տոլստոյի փոխարէն մէկ ուրիշ՝ պակաս նշանաւոր մարդ լինէր մերժողը, գարձալ դա մտածելու նիւթ է: Բայց ահա աշխարհահռչակ՝ «սիրոյ», «հնչմարտութեան», «արդարութեան» եւ այլնի փառաբանուած առաքեալը օրը-ցերեկով պտտուում էր մի քանի էջ կամ գոնէ խօսքեր գրել ժողովածուի օգտին, չգիտես ո՛ւմ եւ ո՛ր օրուայ համար պահելով իր «սէրն» ու ժպիտը: Ի հարկէ, սա մի այնպիսի հարց է, որ կարող է լուսաբանուել միայն մանրակրկիտ ու անմիջական հետազօտութեամբ, որի համար հարկ կը լինի թերթել գրողի հարիւրի մօտեցող հատորների ու յարակից գրականութեան համապատասխան տեղերը, եւ յանպատրաստից մերկ յայտարարութիւնները ոչինչ չեն կարող պարզել: Դարձեալ անկարելի չէ ենթադրել, որ մեծանուն գրողը, իր ամէնօրեայ շփումների ընթացքում եւ այս կամ այն առիթով, իր սեփական նախապաշարումները, եթէ ունէր այդպիսիք, փոխանցած լինի նաեւ իր փափկամիտ գուսարին:

Այս ուղղութեամբ ուելի տարածուելն ուելորդ է, բայց երեւոյթը նշելն ու ընթերցողի ուշադրութեան յանձնելը՝ անխուսափելի: Քանզի այդ կէտը խիստ աչքի է ընկնում յուշերի շրջանակում եւ չի կարելի շրջանցել: Մա՞նաւանդ՝ որ դա կարող է ինքնաբերաբար թիւրիմացութիւնների աղբիւր ծառայել, եթէ չարժանադրուի:

Ա. ՏՈԼՍՏԱՅԱ

1915ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏՈՒՄ

Հոկտեմբերի 16ին, առանց պատերազմ յայտարարուելու, Թրքական նաւատորմը գնդակոծեց Օդեսան, Նովոռոսիյսկը եւ Սեւ ասատպոլը: Ռուսաստանն անմիջապէս ընդունեց մարտահրաւէրը: Մի քանի փայլուն յաղթութիւններ շահելով՝ մեր բանակը, գրեթէ առանց ճակատամարտի, առաջ էր շարժուում դէպի Թուրքիայի խորքը:

Տ. Ն. Գոլենը, հին զեմստուոյական գործիչ, եւ Սերգէյ Գլեբովը՝ մի եռանդուն ու գաղափարապաշտ երիտասարդ, որոնց ընտանիքների հետ մենք ծանօթ էինք մանկութիւնից — նրա քոյրը ամուսնացած էր իմ եղբայր Միխայիլի հետ — այդ ժամանակ կազմակերպեցին Համառուսաստանեան Զեմստ-

digitised by A.R.A.R.@

ուղղական Միխիթեան[1] 7րդ առաջաւոր ջոկատը, որը գործուղուեց Թբքական նահատակաց աշխատելու համար։ Ինձ ջոկատում բնդունեցին միայն Գոլների ու Գլեբովի հովանաւորութեամբ, քանի որ ընդունուած էին միայն կարմիրխաչական հիմնական քոյրերին, եւ ես պատերազմական ժամանակի միակ քոյրն էի։

Մեր գինուորական գնացքը Թիֆլիսի նահանգապարհին գանուեց աւելի քան մի շաբաթ եւ այնտեղ մեզ վիճակուեց մօտ մէկ ամիս սպասել նշանակուած տեղերու համար։ Բոլորի տրամադրութիւնն ընկաւ։ Հրաշալի գրօսանքները, նշանաւոր ծծմբային բաղնիքները, անգործութիւնը՝ այդ ամէնը լաւ էր զրօսաշրջիկների համար, բայց մենք կռուելու ցանկութեամբ էինք վառուած։

Վերջապէս, հրաւիրուեց ընդհանուր ժողով։ Իր սեւ ու ալեխառն փոքր մօրուքը ցնցելով եւ իր խելացի չագանակագոյն աչքերով մեզ գննելով, Գոլենը ճառ խօսեց. «Մենք պիտի գնանք երկու ուղղութեամբ,— ասաց նա,— մէկ ուղղութիւնն է Կարս-Էրզրում[2], իսկ միւսը՝ Երեւան-Իգդիր ու աւելի հեռու՝ Ալաշկերտի Ղարաբիլիսա, Թուրքիայի խորքը։ Երկրորդ ուղղութիւնը վտանգաւոր է, ճանապարհներին յարձակւում են քրդերի հրոսակները, մոլեգնում են տիֆի բոլոր երեք տեսակները, երկար ու ծանր անցումներ են ձիով՝ առանց ճանապարհի լեռնանցքներով։ Որոշեցէք ինքներդ, թէ ով ուր կը գնայ աշխատելու, ես ոչ ոքի չեմ նշանակում»։

Եւ նա գեռ չէր հասել խօսքն աւարտել, երբ ջոկատի գրեթէ կէսը առաջնացաւ եւ ցանկութիւն յայտնեց աշխատելու Երեւան-Իգդիր ուղղութեամբ։ Վերջապէս, մտածում էինք մենք, կը սկսուի իսկական աշխատանքը։

Տ. Ն. Գոլները կանգնեց մեր առջեւ, «Շնորհակալ եմ,— ասաց նա,— ես ինքս կը գլխաւորեմ մեր ջոկատը»։

Իգդիրը փոքր բնակավայր է Արարատեան դաշտում, որը գտնւում է Եփրատ[3] գետն գիտակի ափին։ Ասուածաշնչական, բայց տխուր, ճահճոտ տեղեր, մոծակների՝ արեւադարձային մալարիայի ամենածանր ձեւերից մէկը կրողների անհաւատալի առատութեամբ։

Իգդիրի նախկին դպրոցում մենք կազմակերպեցինք՝ Համառուսաստանեան Զեմստուոյական Միութեան 7րդ առաջաւոր ջոկատի ադաջին վիրաբուժական կէտը։ Աշխատանքը եռում էր։ Թուխ, չորացած բժշկուհին, ինչպէս ինձ թուաց՝ չարութիւնից,— մի սոցիալիստուհի՝ հերթական գլանակը բերանին,— խիստ ատում էր ինձ։ «Տեսնո՞ւմ էք տաշխատո՛ղ» են ուղարկել,— գանգատւում էր նա երիտասարդ բժշկին,— առանց հովանաւորութեան՝ այստեղ չէր ընկնի։ Ի՞նչ գիտի նա. կոմսուհի՞, ազնուականուհի՞»։ «Ինչ-որ լուացէ՛ք հիւանդանոցների բոլոր յատակները, պատուհանները, գոնները,— հրամայում էր նա ինձ,— ոչպէսզի մաքուր լինի»։

Յատակի խոզանակներ չկային։ Լաւ, ատամներս սեղմած, ես յատակը մաքրում էի լաթերով։ Ես այնքա՞ն էի վախենում, որ բժշկուհին ծիծաղի իմ անպէտքութեան վրայ, ինձ անուանի փափկասուն, կալուածատիրուհի, առաւել եւս, որ յատակ լուալու ոչ մի փորձ չունէի։

Շնորհակալ եմ, որ ինձ փրկեց գիրութեան եղբայր Էմիլիո Ֆերարիսը՝ խուլացի կամաւոր, որը չգիտես ինչու էր մեր ջոկատն ընկնել իբրեւ գիրութեան եղբայր։

— Էնպոսի՛ր, սինեորի՛նա,— տաքանում էր նա,— այդ տոկսոր՝ սիրահարուած բոլոր ազամարդկանց, տնտեսութեան գեղեցիկ վարիչ՝ եւ խանգում։ Դուք չատ յոգնած, ես ձեզ ազնել[4]։

Եւ մենք մաքրում էինք յատակները, լուանում պատուհանները, սեղաւորում եւ պատրաստում մահճակալները՝ ուրախ արտով։ Իսկ բժշկուհին հետեւում էր ջոկատին ու չրջապատին, չան նման, յետեւից շաքժում էր նրա

digitised by A.R.A.R.@

սիրելի այծը, որին նա ընտելացրել եւ հիւրասիրում էր ծխախոտով։

Իսկ երբ բերեցին ռեումատիզմով (յոգացաւով) հիւանդ 30 մարդու՝ բժշկուհին ինձ յանձնարարեց մաժել նրանց։ Եւ ես չգիտէի նրանց ոտքերը, ձեռքերը, թիկունքները՝ մաժելով, քրտինքը թափւում էր իմ վրայից դեռ պէս։ Ես այն ժամանակ չգիտէի, որ յատակներ լուալն ու տաքնակ հիւանդներին մաժելը չի մտնում քրոջ պարտականութիւնների մէջ։ Եւ հենց շար բժշկուհին հիմնական քայլերին չէր յանձնարարում այդ աշխատանքը կատարել։ «Ինչ՞ը, թո՛ղ, հալից ընկարց»,— ասում էին ինձ հիւանդ զինուորները։ Նրանք խղճում էին ինձ, բայց ես ուշադրութիւն չէի դարձնում նրանց խօսքերի վրայ, շարունակելով մաժելով մաժել նրանց։

Թերեւս հենց դա էր սխրագործութիւնը։ Բայց իմ պատկերացման մէջ սխրագործութիւնը բոլորովին ուրիշ բան էր։

Իգդիրում մենք մնացինք մի քանի ամիս։

Եկան տաք օրերը։ Խոխոջում էին առուակները, ափերից դուրս էին գալիս գետերը ամբողջ հովտում։

Անտանելի շոգ։ Զանգալի։ Աշխատանքը քիչ։ Երեկոյեան մոծակները բազմութեամբ պտրւում էին մեր վրայ եւ խայթում։ Սաստիկ ծարաւ։ Զոկատում գիւղեան եղբայրների դեր կատարող ուսանողները գիւղից բերեցին խաղողի հիւթ։ Թթուա-քաղցր, համով եւ ծարաւը հիանալիօրէն կոտրող հիւթ։ Լցնում ենք արծնապատուած խոշոր դատարկները եւ բուսականութեամբ խմում միմիանց յետեւից։

— Ի՞նչ բան է դա, Կատեա՛, ի՞նչ է պատահել ձեզ։

Կատեան շատ դուրեկան, համեստ կարմիրթաշակեան քոյր, որի հետ բարեկամութիւն էի անում, ծիծաղում է, անընդհատ խմում, չի կարողանում կանգ առնել։ Ուզից մի քանի քայլ անել, ասյքաքից, երկու ձեռքով բռնեց պատշգամբի սիւնը, կանգնում է, քրքջում, իսկ տեղից շարժուել չի կարողանում։

Ամբողջ ջոկատը — քոյրերը, գիւղեան եղբայրները —, բոլորն էլ թունդ հարբած են։ Միայն յետոյ մենք իմացանք, որ եփուող խաղողի հիւթը համարեա՝ թի գինուց պակաս չի հարբեցնում։

Սպասում էինք պետին։ Բարեբախտաբար՝ շար բժշկուհին արդէն իր անկիւնն էր քաշուել։ Գոյներին սիրում էին, բայց եւ վախենում նրանից։ Նա շատ խիստ էր։ Ի՞նչ կը լինի, եթէ նա տեսնի իր ամբողջ անձնակազմը այդ վիճակում։

Ամբողջ ջոկատից միայն տնտեսութեան վարիչը եւ ես էինք, որ հարբած չէինք։ Մենք սկսեցինք շտապով տեղ հասցնել ու քնելու համար պատկեցնել մեր բոլոր ընկերներին։

— Որտե՞ղ են բոլորը,— հարցրեց պետը, հայեացք նետելով դատարկ ճաշասրահի եւ պատշգամբի վրայ, որտեղ սովորաբար նստում էին երիտասարդները մինչեւ ուշ երեկոյ։

— Գնացել են քնելու, յոգնե՛լ են շոգից...

Զեմստուոյական տարեց վիրաբոյժը ինձ յանձնարարեց վիրահատանոցում օգնել վիրահատական փորձառու բուժակուհուն։ Ես երջանիկ էի, որ գուրս եկայ շար բժշկուհու իշխանութեան տակից ու նա, վերջապէս, զրկուեց ինձ շարչարելու սադիստական հաճոյքից։

Վէրքերը ծանր էին, թուրքերը գործ էին ածում դում-դում պայթուցիկ գնդակներ։ Դժուար էր վարժուել անդամահատումներին։ Բռնում ես ոտքը կամ ձեռքը եւ յանկարծ զգում մեռեալ ծանրութիւն։ Մարդու մի մասը մնում է քո ձեռքում։

— Քոյրի՛կ,— յոյսով եւ պատասխանից վախենալով՝ ինձ է դիմում մի

digitised by A.R.A.R.@

երիտասարդ գեղեցիկ կազակ, անզգայացումից սթափուելով,— իսկ ոտքը թոդել են, չեն կարել, կրունկս քոր է գալիս...

Ինչպէ՞ս ասել նրան...: Ոչոր սեւ աչքերը նայում են քեզ յոյսով, պաղատանքով...

Եւ, ճշմարտութիւնն իմանալով, ուժեղ եւ հզօր գեղեցիկ կազակը, դէմքը ձեռքերով ծածկելով, հեկեկում էր երեխայի պէս:

— Քոյրի՛կ... իսկ հիմա ի՞նչ եմ անելու եւ: Չէ՞ որ իմ Դունեան... Դունեան չի՛ սիրի հաշմանդամին... կը հեռանայ... բայց, տղանե՛ր... ինչո՞վ եմ աշխատելու:

— Իսկ ոչ մի արհեստ չգիտե՞ս:

— Գիտեմ, կոշկակար եմ...: Երեւի մի կերպ աշխատեմ: Իսկ ի՞նչ ես կարծում, իմ Դունեան կը ասոյի՞ ինձնից, չի՞ կամենայ ինձ հետ ապրել:

— Եթէ քո Դունեան մի բան արժի՝ նա աւելի՛ կը սիրի ու կը խղճայ քեզ:

Իսկ մի չաբաթ անց նա ուրախացնում էր ամբողջ հիւանդասենեակի մարդկանց եւ բարձրաձայն, գեղգեղուն տենորով երգում իր կազակական երգերը:

2

ԹՐՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իդգիրում մենք երկար չմնացինք: Զոկատին հրամայուեց մեկնել Ալաշկերտի Ղարաքիլիսա — աւելի քան հարիւր վերստ՝ Թուրքիայի խորքում,— Թրքական Հայաստան:

Բերեցին ուղտերի քարաւանը: Նրանք պէտք է որ Ղարաքիլիսա հասցնէին պարենամթերք եւ կերոսին (նաւթ)՝ վրաններում բոցամուղ (ֆոքուսնկա) տաքացնելու համար:

Մեր համբայ ընկնելը նշանակուեց մի քանի օր անց: Բոլորն էլ ուրախացան, տենդագին պատրաստւում էին ուղեւորութեան: Ես որոշեցի սեփական մի ձեռք բերել: Քուրդերն ու հայերը բերեցին մի քանի ձիեր, բայց գրանք յարմար չէին ինձ: Միակ հովատակը, որին սիրահարուեցի, շատ երիտասարդ էր՝ երեք տարեկան: Նա չէր դիմանայ լեռնանցքերով անցնելուն: Ես չէի կարողանում աչքերս հեռացնել այդ ճերմակ, թիկունքի երկայնքով սեւ գոտով, արաբական հովատակից: Ես երբեք չէի տեսել ճերմակ ձիեր: Ըստ երեւոյթին, միայն արաբները (արաբական ձիերն) են լինում, այն էլ հազուագիւտօրէն, ճերմակաթոյր: Կարծես թէ ձուլուած՝ նրա վրայ հանգիստ նստել էր մի ծեր, թուխ, ճերմակ մօրուքով քուրդ, շերտաւոր մետաքսէ վերնազգեստով (խալաթով) եւ ճերմակ չալմայով, զարդարով ղեղնուքեամբ ամրակներով գոփոզ արաբին, որը ծածկուած էր վառ գոյնի գորգային քրտնաքաշով:

Ա՜խ, որքա՞ն կ'ուզենայի նրան ձեռք բերել: Եթէ վախ չունենայի, թէ նա չի դիմանայ երկար անցումներին, լեռնանցքներին, կը գնէի նրան: Բայց կարապի վզով, ուռեցուած ռուդերով, գեանի վրայ ղղայնօրէն պարող այդ ձին աշխատանքի համար չէր ստեղծուած: Եւ ինձ վիճակուեց գնել մէկ ուրիշ դիմացկուն եւ հասարակ ձի, որին աւելի ուշ փոխանակեցի հիանալի, ժոխրագոյն կարարդինցու հետ եւ որով հետագայում կատարեցի բոլոր ուղեւորութիւնները Թրքական Հայաստանում:

Երկար ու տարօրինակ էր քարաւանը: Բեռնուած ուղտերը, ամբողջ

digitised by A.R.A.R.@

անձնակազմը — քոյրերը, բժիշկները —, բոլորն էլ հեծնել, հեծնել չկարողացող չատերը ձիերի վրայ նստել էին, հեծելազորայինների արտայայտութեամբ ասած, ինչպէս շները ցանկապատի վրայ։

Իսկ երեկոյեան, կանգառներում, չէին կարողանում ո՛չ քայլել, ոչ էլ նստել՝ ոտքերի ցաւից։ Իսկ ես միայն ծիծաղում էի...։ Զուր չէ՛, որ հայրս ինձ վարժեցրել էր ձիով երթալու՝ վեց տարեկանից սկսած։

Գարնանը, երբ լեռներում դեռ խոր ձիւն էր փռուած, չէր էլ կարելի մատնել ապչակոտքերի մասին։

Մեր պետ Գոլները, ըստ երեւոյթին, նոյնպէս իրեն վատ էր զգում ձիու վրայ։ Ոտքերի դուլպանները դուրս ընկած, թամբի վրայ կոտցած՝ Գոլներն ընթանում էր իր երկարականջ, կախուած շրթունքներով գամբիկով։ Նա գրաւենական մարդ էր, հին գեմստուոյական, հասարակական աշխատող։ Վատ հեծնել էր, բայց երբեք ցոյց չէր տալիս, թէ յոգնել է կամ էլ թէ ցաւում են ոտքերն ու թիկունքը։ Նրա դիմացկունութիւնը հսկայական էր։

Մի քիչ տարտափելի էր սրընթաց դեռերը կտրել-անցնելը։ Լայնօրէն փռուել էին ջրառատ Եփրատն ու նրա վտակը, որոնց վրայով վիճակուեց անցնել։ Ես նոյնիսկ չնկատեցի, թէ ձին ինչպէս կտրուեց դեռերից ու լողաց։ Ուժեղ հոսանքը մեզ հեռու՝ մի կողմ տարաւ եւ, որքան էլ սեղմում էի ոտքերս, դրանք թրջուեցին ծնկներից վեր։

Զախում հեռուից արեւի տակ փայլում էր Արարատի ձնէ ծածկոյթը ու աւելի հեռու, թաղուած մառախլապատ մշուշի մէջ, երեւում էին Սիւնեաց լեռների շղթաները։ Վերեւը։ Աւելի բա՛րձր, աւելի բա՛րձր։ Լեռների լանջերը կապոյտ են, ծածկուած անմոռուկներով, բայց անմոռուկներն այնպիսիք չեն, ինչպէս որ մեզ մօտ՝ Տուլայի նահանգում, այլ՝ խոշոր, կարծես արհեստական։ Վայրի նարգիզներ, վարդակակաչներ...

Զինդիլի լեռնանցք։ Աւելի բա՛րձր, աւելի բա՛րձր։ Աւելի է ցրտում։ Զիւներ։ Տեղ-տեղ ձին տապալւում է փորի վրայ։ Իջնում եմ՝ ձիուն թեթեւացնելու համար, թաւալելով ընկնում եմ ձիւնի մէջ...։ Վայրէջքնե՛ր, վերելքնե՛ր, լեռնային վայրի բնութիւն, ոչ մի բնակարան, ոչ մի կենդանի չունչ չկայ...։ Ցանկարծ մի ձայն. «Բարե՛ւ ձեզ, քո՛յրս։ Ժայռի մօտ, ինձնից աջ, մի խումբ կազակներ, սպիտակ ատտառով փափախներով եւ չերքէզկաներով, պահում են ձիերի կապերը։ Նրանց մէջ է մի բարձրահասակ եւ կանոնաւոր դիմագծերով, թուխ, չերքէզկայով ու փափախով զօրավար. «Բարե՛ւ ձեզ, քո՛յրս։ Ես կանգնեցնում եմ ձին, ձգւում ու նայում նրան հարցականօրէն։ «Ես զօրավար Արացիւնն եմ, ամուսնացած ձեր զարմուհու՞ հետ։ Չէ՞ որ դուք Տոլստայան էք։ Ես երբեք չէի հանդիպել նրան, բայց շատ էի լսել նրա մասին։ Նա ամենաքաջ զօրավարներից մէկն էր, օ, Գէորգիեւեան չքաւորանակիր՝ Գէորգիեւեան բոլոր խաչերով եւ Գէորգիեւեան զէնքով։ Նրա մասին պատմում էին, որ նա երբեք, ոչ ոքից եւ ոչինչից չի վախենալ։ Մարտի ժամանակ, իր ամրոցի հսկայական տարածով, լեռան վրայ կանգնած՝ հակառակորդի դիմաց, նա գլխաւորում էր զօրքերը։

Զօրավարը գնաց Իգդիրի ուղղութեամբ, բայց նրա սպայակոյտը Ղարաքիլիսայումն էր, ուր եւ գնում էր մեր ջոկատը։

⁂

Զինդիլի լեռնանցքը մնաց յետեւում։ Դարձեալ շոգ է, հովիտը ծածկուած է խիտ բուսականութեամբ։ Կան շատ ծաղիկներ։ Սրընթաց դեռակներ են, փոքր կամուրջներ՝ գրանիտեայ ճաղաչարքերով։ Մեր ճանապարհին եր-

digitised by A.R.A.R.@

բեմն պատահում են հսկայական մարմարեայ եւ գրանիտեայ չէնքերի աւերակներ։ Թերեւս տաճարնե՞ր։ Ի՞նչ է եղել այդպէս աւելի առաջ։ Ո՞վ է ապրել այդտեղ, ո՞վ է կառուցել այդ տաճարները՞։

Գետնի տակից բխում են տաք ու սառը աղբիւրներ...։ Ջուրը պղպջում է, որոշ փոսերից գոլորշի է բարձրանում։ Նրանցից մէկում, երեւի կատարեալ երանութեան մէջ, նստած է բրոնզէ թիկունքով մի թուխ հայ։

Բնական ինչպիսի՜ հարստութիւն։ Ինչպիսի՜ հրաշալի երկիր եւ ինչպիսի՜ վայրի կենդանիներ եւ թռչուններ։

Բնակարանները քիչ են, միայն երբեմն, կարծես թէ գետնի տակից, բարձրանում է բարակ ծուխ։ Դրանք հայերի եւ քրդերի բնակարաններն են։ Նրանք գետնի տակ են։ Վերին յարկում անասուններն են՝ կովեր, ոչխարներ, իսկ ներքեւում, ներքնայարկերում, ընտանիքները։ Գետնի տակ աւելի տաք է, աւելի քիչ վառելիք է հարկաւոր։

Ալաչկերտի Ղարաքիլիսան կեղտոտ, չսայարկած յունական գիւղ է։ Մի քանի փոքրիկ, ապքստիկ տներ, որոնց մէջ տեղաւորուել են գինուորականները։ Ամենամեծ երկյարկանի տունը զբաղեցնում է զօրավար Արացիեւն իր սպայակոյտով։

Վրաններ են ամբացնում հիւանդների, վիրաւորների, անձնակազմի համար։

Փոյրերը չեն բաւականացնում։ Հապի՛ւ, հապի՛ւ են հասնում։ Վիրաւորները քիչ են, բայց մոլեգնում են տիֆի բոլոր ձեւերը՝ որովայնային, բծաւոր եւ անդրադարձ։

Երբեմն չէր բաւականացնում սնունդը, եթէ որեւէ պատճառով ուշանում էր ուղտերի քարաւանը։

Ուղտերը միակ փոխադրական միջոցն էին, որոնք մեզ էին հասցնում անհրաժեշտները, բոցամուղները տաքացնող կերոսին եւ փոստ։ Ուղտերին սպասում էինք անհամբերութեամբ եւ, երբ լեռների թիկունքից երեւում էր երկարաշղթայ քարաւանը, ցնծութեամբ էինք դիմաւորում նրանց. «Գալի՛ս են, գալի՛ս, ուղտերը գալի՛ս են»։

Ուղտերն ընթանում էին հանգիստ, զանգաղ, կողքերից խնամքով ամրացուած բեռներով։ Բեռները պէտք է հնգրտորէն հաւասարակշռուէին՝ իւրաքանչիւր կողմից ուղիղ չորս փութ։ Բեռնաթափումից յետոյ ուղտերը պառկում էին կանոնաւոր շարքերով, գորգարար անտառով ուտելիքը որոճալով՝ իրենց փոքրիկ բեռներով։

Ցիչում եմ մի դէպք, որը կարող էր ողբոով վերջանալ, բայց, բարեբախտաբար, բարեյաջող անցաւ, շատ ծիծաղ յարուցելով քոյրերի մօտ։

Մեզ մօտ կային մի քան երիտասարդ, պատերազմական ժամանակի նորաթուխ բժիշկներ։ Ցիչում եմ մէկին։ Նա այնքա՜ն մաքուր էր, նոր համազգեստով։ Նրա վարդագոյն, կլոր դէմքը, միշտ թարմ, սափրուած, ճառագայթում էր երիտասարդ եռանդ ու կենսուրախութիւն։ Նա կարմրում էր միամիտ ազջկայ նման, երբ պատրաստում էր վիրահատութիւն կատարել եւ, առանց ձեռքերը լուալու, մեզ շտապեցնում էր վիրակապը վերցնել։ Իսկ մենք, բուժքուհու հետ, կանգնում էինք քարացածի պէս, վերեւ պարզած՝ լուացուած ձեռքերով, հրամանը չսպասելով։

— Հանեցէ՛ք վիրակապը, մի՞թէ չտեսնէք։

— Ներեցէ՛ք, բժի՛շկ,— պատասխանում էր բուժակուհին,— մենք սպասում ենք, որ դուք ձեռքերը լուաք...

Եւ ահա մի անգամ, երբ ուղտերը պառկած էին շարքերով, այդ բժիշկի խելքին փչեց քոյրերին զարմացնել ու անցնել ուղտերի թիկունքների վրայով։ Ուղտերը վեր թռան կայծակի արագութեամբ, վայր նետեցին մեր բժիշկին՝

digitised by A.R.A.R.@

ինչպէս ցանկասախոսեցիք։ Նա օգուտ թուաւ երեք սաժէն։ Մենք բոլորս էլ ա՞խ քաշեցինք, բայց, բարեբախտաբար, նա ընկաւ փափուկ խոտի մի կոյտի վրայ։ Տեսնելով, որ սաժէն ինչ բարեյաջող է եւ թժիշկը ողջ ու անվնաս, մենք բոլորս՝ քոյրերն ու եղբայրները, ծիծաղից թուլացանք։ Մի պահ հանգստացանք, իսկ յետոյ էլ յիշեցինք, թէ ինչպէս թուաւ թժիշկը, նայելով նրա կարմիր, վախեցած, չփոթահար դէմքին, ամբողջովին խոտով ծածկուած նոր համազգեստին, գարձեալ շատախօսելով ու քրքջալով։

Զօրավար Աբացիեւը շատ լաւ էր վերաբերուում ինձ հետ եւ միշտ ջանում էր օգնել.

— Քո՛յր, ես ի՞նչ կարող եմ անել ձեզ համար։

— Մանր հիւանդներ են ինձ մօտ, Ձերդ գերազանցութիւն։ Կերակրելու բան չկայ։ Եթէ որ հաւեր ճարէիք, նրանց համար նաեւ ձուեր կը լինէին, թէ չէ՝ սնունդը շատ վատ է։

— Լա՛ւ, քո՛յր, ես կ՚անեմ՝ ինչ որ կարող եմ։

Եւ մի քանի օր անց տեսնեմ՝ կազակներ են եկել։

— Այնպէս որ, նորին գերազանցութիւնը հաւեր է ուղարկել ձեզ։

Նայում եմ. թամբերին, գլուխները վար, կապուած են հաւեր։ Կապերը քանդեցին, իսկ նրանք ոտքերի վրայ չեն կանգնում...։ Ոտքերը թմրել էին։ Ես դուսյ մի մեծ երկաթեայ կոնք, հաւերի համար ոտքերի տաք լոգանք արեցի։ Երիտասարդները ծաղրում էին ինձ, բայց իմ յանձնարարդների ոտքերն աստիճանաբար կենդանացան եւ մի քանի օր անց նրանք ձու ածեցին։

Ես ուրախացայ, որ իմ հիւանդները ձու կը տուտան, իսկ քոյրերը նախանձում եւ ձուերը գողանում էին ուղղակի հաւերի տակից՝ իրենց հիւանդների համար։

Զօրավար Աբացիեւը յանախ էր մեզ մօտ՝ ջոկատ անցնում.

— Է՞ լ ինչ կարող եմ անել ձեզ համար, քո՛յր։

— Կաթ չկայ, Ձերդ գերազանցութիւն։ Գուցէ կարելի է կովեր ճարել։ Կանգ տուաւ, մտածեց։

— Կը ջանամ,— ասում է,— քո՛յր։

Եւ մի քանի օր անց տեսնենք ճանապարհին փոշու սիւներ են բարձրանում, կազակները քշում են եօթ հատ կովեր։

Կովերին կերակրելու բաներ կան։ Խոտը շատ է, եւ հենց ցորեն՝ ուզածի չափ, միայն թէ դա հարկաւոր է դառնել։ Կազակները շրջում են հայերի տների շուրջ, հողը չոչափում նիզակներով։ Երբ նիզակը հեշտ է խրուում, սկսում են փորել ու գտնել թաքցրած ու հողով ծածկուած հացահատիկը։

Իսկ ես նոր գրազմունք ունեմ՝ կթել կովերը։ Կովերը նիհար են, փոքրիկ, կաթը քիչ, բայց հարկաւոր է կթել. ուրիշ ժարգ չկայ։

Նստում եմ փոքրիկ աթոռի վրայ, կթում, ձեռքերս ցաւում են անսովորութիւնից.

— Այդ ի՞նչ էք անում, քո՛յր։

Ես չէի էլ նկատել, թէ ինչպէս մօտեցաւ զօրավար Աբացիեւը։

— Կովեր եմ կթում, Ձերդ գերազանցութիւն։

Կանգնեց, գլուխն օրօրեց, իսկ երեկոյեան փոխարինող ուղարկեց կովեր կթելու։

⁂

Գիշերները քոյրերը հերթով հերթապահութիւն էին անում։ Կային չորս հիւանդասենեակ՝ իւրաքանչիւրը 40–50 հիւանդներով։ Իւրաքանչիւր հիւան-

digitised by A.R.A.R.@

դասենակին մէկ հերթապահ սանիտար, իսկ բոլոր հիւանդասենեակների համար՝ մէկ քոյր։

Գրեթէ բոլոր հիւանդները սիֆով են հիւանդ։ Ամբողջ գիշերը վազում ես մէկ հիւանդասենակից միւսը։ Ցնքում են, շարժումներ անում, զառանցում։ Զգում ես քո լրիւ անզօրութիւնը՝ որեւէ կերպ հեշտացնել, օգնել։ Սարսափելի բոպէներ են լինում։ Մա՛նաւանդ՝ երբ տնքոցները խոխոջ են դառնում...։ Մօտն ես վազում, շնչառութիւն համարեա՛ չկայ, հիւանդը մարել, երակազարկ չկայ։ Միայն հացնում ես խաչակնքել, աչքերը փակել՝ արդէն մեռած է։

Շրջայցի ժամանակ մտնում եմ բնաւոր սիֆով հիւանդների սենեակ։ Լուսացարանի մօտ կանգնած է մի շատ թոյլ, ապաքինուող հիւանդ։ Սենեակի խորքում զառանցանքի մէջ դողում, հայհոյում է մի հայ։ Ես դեռ մօտենալ չհասցրած՝ նա կատաղի նման, կայծակի արագութեամբ, վեր ցատկեց, թռաւ երկու–երեք մահճակալի մօտով, նետուեց լուսացարանի վրայ, յափշտակեց քլորանդրիկի (ռուլիմայի) շիշը ու թափահարեց թուլակազմ հիւանդի գլխից վերեւ։ Նա կը սպանէր նրան, բայց ես հարցրի բռնել հայի ձեռքը յետեւից, շիշը առեցի հիւանդի գանկի վրայով, այն թեթեւակի քերծելով...։ Հայը նետուեց իմ վրայ, ինձ յատակի վրայ գլորեց, բռնեց իմ կոկորդից ու սկսեց խեղդել։ Միմեանց դէմ մաքառելով՝ մենք թաւալուեցինք յատակի վրայ ու մեղնով փակեցինք դուռը։ Հիւանդի ձեռքերը պողպատեայ աքցաններով սեղմում էին կոկորդս...։ Դրան մօտ վազեց հերթապահ սանիտարը...։ Բայց նա չէր կարող դուռը բացել։ Ինձ մի կերպ յաջողուեց հային հեռու գլորել գոներից։ Հիւանդասենեակ մտան երկու սանիտարներ, բռնեցին հային ու զսպաշապիկ հագցրին։

Ամէն ինչ դողում էր իմ ներսում, երբ հերթապահութիւնից հաշտասենեակ մտայ...

Իսկ ապաքինումից մի քանի օր անց, երբ հայն արդէն լրիւ գիտակցութեան մէջ էր, նա մեղաւոր դէմքով ժպտում էր իմ առջեւ, երբ հիւանդասենեակ մտայ։

— Այդ ինչպէ՞ս էիր ուզում ինձ խեղդել,– հարցրի ես նրան կատակով։ Նա չփոթուած էր։

— Ների՛ր ինձ, քոյրի՛կ, Աստուա՛ծ վկայ, ոչինչ չեմ յիշում...։ Եթէ խելքս վրաս չլինէր՝ երբեք այդպէս բան չէի անի։

Բուժակուհիները չէին սիրում ու կարոտանում վիրաւորներին խնամել։ Մեր բուժակուհիներից մէկից ինձ վիճակուեց ստանալ գլխից վիրաւոր մի հեռաւոր կազակի (պլատունի)։ Գորշ ուղեղի հիւսքերը ցցուել էին ապիրուած գլխի վրայ...։ Նա ուներ պառկելավէրքեր, թէյի պնակի մեծութեամբ, ներքնակը թրջուած էր, նրա մահճակալից սարսափելի դարշահոտութիւն էր փչում։ Նա բոլորովին անդիտակից էր, ոչինչ չէր յիշում եւ միայն յիշում էր իր կին Մարուսիային ու ինձ նրա անունով էր կանչում։

— Մարուսիա՛, խմելի՛ք տուր։ Մարուսիա՛, ոտքերս չփիր, ցաւում են։

Վիճակուեց նրան թիկունք ուղարկել եւ նա մեռաւ հանապարհին։

∴

Մեզ մօտ յանախ էր գալիս թերեքեան մի խիզախ հաբեւրապետ։ Կարճ հասակով, ապաստաւոր քթով, սեպաձեւ սեւ մօրուքով։ Նրա թուխ դէմքը թաղուած էր հակայական ու ոպիտակ ատատով թաւամազ փափախի մէջ։ Սեւ

digitised by A.R.A.R.@

չերքէզկան, գոգիրներով, ինձ շատ երկար էր թուում նրա հատակի համար։ Հարբուբապետը յանախ այցելում էր մեզ։ Կանանց հասարակութիւնից ամիսներով կտրուած երիտասարդները, բնականաբար, մտանում էին մեզ։ Բայց Գոյները չէր քաջալերում սպաների այցերը քոյրերին, մրթմրթում էր ինչ-որ բաներ քթի տակ եւ այնքան էլ սիրալիր չէր հիւրերի հանդէպ։

Մի անգամ ջոկատ մտաւ հարբուբապետը։ Նայեմ՝ նրա տակի ձին մի պատկեր է։

Հարբուբապետն շտապեց.

— Ձեզ դո՞ւր է գալիս իմ ձին։ Հենց նոր եմ գնել։ Ագնուացեղ արար է…

— Լաւ է։ Իսկ երթի մէջ ինչպէ՞ս է…

— Նայեցէ՛ք,— հարբուբապետը թամբ ցատկեց ուղղակի գետնի վրայից, քշեց հովատի ու վերադարձաւ,— դե՛հ, ի՞նչ կ՝ասէք, քո՛յր։

— Լաւ է,— ասում եմ,— ես էլ չգիտէի, որ Թուրքիայում այդքան արաբական նժոյգներ կան։

Անցաւ մի քանի օր։ Վրանի ճաշարանից դուրս ենք գալիս։

— Ի՞նչ բան է ասա,— յանկարծ բացականչեց անտեսութեան վարիչը,— տեսէ՛ք, հարբուբապետը քշել-տարել է ձեր ձին։

Վազեցինք ձիապահների մօտ ու տեսանք, որ իմ չիկակարմիր կուսած ձիու փոխարէն, իսկ այն ժամանակ ես գեռ չուներ իմ հաւատարիմ կարապինցուն, կանգնած է հարբուբապետի արաբական մուգ շագանակագոյն հովատակը։

Առանց մտածելու ես գոռել էի հովատակին եւ, բատ կոմկասեան սովորութեան, հարբուբապետն այն նուիրել էր ինձ։

Տնտեսութեան վարիչը ցատկեց արաբի վրայ, մեր աղաներն՝ իրենց ձիերի, ու քշեցին հարբուբապետի յետեւից։ Նրանք դժուարութեամբ էին համոզել նրան իրենց տալ իմ չիկակարմիր կուսած ձին եւ յետ վերցնել արաբին։ Տաքացել, վիրաւորուել էր հարբուբապետը։

Երեկոյեան, երբ մենք թէյ էինք խմում, եկաւ մի կազակ՝ հարբուբապետի յանձնակատարը։

— Այնպէս որ, հարբուբապետը շատ է խնդրում քոյրերին՝ ներկայանալ ռուսական պարերին ու երգերին։

Տեղից ցատկեց Տ. Ն. Գոյները, դէմքը բարկացած, ժօռուքը դուրս ընկած։

— Ասա՛ քո պետին, որ այստեղ քոյրերը սպաների զուարճութեան համար չեն, այլ՝ աշխատանքի։ Հեռացի՛ր այստեղից։

Զուարճանում էր հարբուբապետը։ Կէսգիշերից շատ չանցած՝ հնչում էր կազակների երգը։ Հարբուբեակը զուարճանում էր իր պետի հետ։ Երգում, պարում էին՝ զօրավար Արացիեւի հենց պատուհանի տակ։

Իսկ առաւօտեան զօրավարը իր մօտ կանչեց հարբուբապետին։ Կազակները նկատողութիւն ստացան, իսկ հարբուբապետը ճակատ ուղարկուեց։

Մի քանի օր անց նա եկաւ ինձ մօտ։

— Ես ճակատ եմ գնում։ Երկուսից մէկը։ Կա՛մ ծառայութեամբ կը վաստակեմ, կամ էլ կը սպանեն։ Ձեզ եմ դիմում մի վերջին խնդրանքով՝ մի ժամով ժամանակ յատկացրէք ինձ։

Մենք թամբեցինք ձիերը ու գնացինք լեռները։ Թէ ինչ ասաց նա ինձ՝ չեմ յիշում, բայց յիշում եմ, որ նա խաղաղ էր, թախծոտ եւ չգիտես ինչու ես ինձ մեղաւոր էի զգում։

Այդ գրօսանքից յետոյ ես այլեւս երբեք նրան չտեսայ, բայց 50 տարի անց, արդէն վտրանդիութեան մէջ, ես նրանից մի հաճելի նամակ ստացայ Ֆրանսիայից։ Նա իր օրերը մինչեւ կեանքի վերջ ապրեց մի ծերանոցում։

digitised by A.R.A.R.@

3

ԴԷՊԻ ՎԱՆ ՔԱՂԱՔ

Մի անգամ, երբ մեզ մոտ եկաւ մեր լիազօր Ֆ. Ն. Գոլները, նա մի նոր յանձնարարութիւն բերեց ինձ համար։

— Վան քաղաք։ Այնտեղ վիճակը ծանր է, շատ են հիւանդները, մոլեգնում են տիֆի բոլոր երեք ձեւերը, հիւանդ է ամերիկեան առաքելութիւնը (Միսիան), բժշկական խնամք չկայ, հարկաւոր է անողոքաբար կէս բացել դերիների համար...

— Ե՞րբ է հարկաւոր գնալ։

— Որքան կարելի է՝ շուտ։ Կանչեցէք ձեր ուսանողներին։

Ես արդէն վազուց էի Գոլներին խնդրել աշխատանքի վերցնելու երկու ուսանողների՝ իմ ազգական Օնիսիմ Դենիսենկոյին եւ նրա ընկեր Կոլեա Կրաժովսկուն, իբրեւ գիրութեան եղբայրների։

— Տնտեսութեան վարիչը ձեզ կը հասցնի Իգդիր։ Երեւանում գնացէք պէտք եղած սարքաւորումը եւ ուսանողների հետ, եւ ես ձեզ կը տամ սանիտարին ու յանձնակատարին, գնացէք Վան։

Եւ ահա մենք նորից Իգդիր ենք գնում։ Իմ կարարդինցին եւ վարիչի հովատակը առոյգ են ընթանում։ Մի վերստ քայլով, մի վերստ վարգով, երեքմն իջնում ենք։ Ուրախ ենք...։ Հիւանդները, վիրաւորները, բոլոր հոգսերը յետեւում են։ Մենք չենք մտածում, թէ ինչ է սպասում մեզ։ Մենք ձուլուել ենք բնութեանը, թռչերը լցւում են լեռնային մաքուր օդով։ Ամէն բան, ինչ որ մեզ շրջապատում է,— լեռների անվերջ շղթաները, որընթաց գետակները, հովիտները՝ ծածկուած փարթամօրէն ամռոց բարձր խոտով,— այդ ամէնն այնքա՞ն ստատուածայնօրէն հրաշալի է, եւ այնքա՞ն հեռու մարդկային չարութիւնից, սպանութիւնից, տառապանքներից։

Ցողնութիւն չկայ։ Օրուայ կէսին կանգ ենք առնում մէկ–երկու ժամով, թամբերն իջեցնում ձիերից, սնում, հանգստանում ու դարձեալ ճանապարհ ընկնում։

Երեկոյեան դէմ մենք հասանք զինուորական կէտ։ Գիշերելու տեղ չկայ, մի սենեակ դատն երկուսի համար։ Լոյսը մարելով, հագուստները հանեցինք մթութեան մէջ, միմիանց չխանգարելու համար։ Իսկ վաղ առաւօտեան՝ դարձեալ ճանապարհ։ Շարժուեցինք ամբողջ օրը։ Իսկ երեկոյեան, երբ մթնեց եւ մենք իջնում էինք գառիթափ լանջով, մեր մօտով յանկարծ սուլեց մի գնդակ, երկրորդը...

— Գրդե՛ր են,— ամբողջ կոկորդով գոռաց յանձնակատար օրը։

Մենք՝ քոյրերս վախենում էինք գրդերից։ Եղել են դէպքեր, երբ գրդերը բռնարարել եւ սպանել են կանանց։ Եւ բոլոր քոյրերիս մօտ միշտ էլ կար կալիումի ցիանիդ (թոյն)։

Թքանեցինք ձիերը եւ քառատրոփ ուղղուեցինք լեռան ստորոտ։ Իսկ լեռը գառիթափ է, ժուռ, ոչինչ չի երեւում, կածանը ծածկուած է քարերով, գուցէ եւ ձին սայթաքի, վայր ընկնի։ Ու այն ժամանակ... կորած ենք։ Ես յիշում էի թեքուել, որքան կարող էի, Ալագեոզի առջեւի ոտքերը թեթեւացնելու համար, իսկ մտքիս մէջ անընդհատ ազաչում եմ. «Փրկի՛ր, սիրելի՛ս, ազատեցէ՛ք, միայն թէ չսայթաքես՝։

Իջանք...

Իսկ Իգդիրին մօտենալիս ընկանք ազատային մի ճահիճ։ Քաւար է։ Զիրեն ընթանում էին շոր տեղեր ընտրելով, լարելով մկանները, պրկուելով, մի հոգսակոչտից միւսը ցատկելով, խուսափելով ճահճուտից։ Երեւի իմ Ալագեոզ

digitised by A.R.A.R.@

դին եւ երբեք այնքան չէի դնահատել, որքան որ այդ դժուար երթի ժամանակ։ Այդպէս մենք ընթացանք շորս կամ հինգ վերստ, մինչեւ որ շոր դեռնի հասանք։

***

Մի քանի օր անցկացրինք Իդդիրում եւ Երեւանում, անառեսութեան վարիչի հետ։ Գնեցինք սարքաւորում։ Շատ ուրախալի էր նորից ընկնել քաղաքակիրթ աշխարհ,— ինքնաշարժներ, էլեկտրականութիւն, լաւ ճաշարան...։ Թերեւս մենք աւելի մեռցինք, քան թէ հարկաւոր էր...

— Դուք ինչո՞ւ գեռ վառ չէք դնացել,— քրթմնջում էր Տ. Ն. Պոլները,— վաղուց ժամանակն է...։ Ինդրեմ՝ անմիջապէս ճանապա՛րհ ընկէք...։ Այնտեղ մեր օղութեան մեծ կարիք կայ։ Իսկ դուք,— դիմեց նա անառեսութեան վարիչին,— ուղեկցէք Ալեքսանդրա Լուվեային մինչեւ կէս-ճանապարհ։

Մենք շատ ուրախացանք, չէինք ուզում բաժանուել։

— Լսում եմ։

Եւ ահա մենք նորից ճանապարհին։ Այս անդամ մեզ հետ են երկու ուսանողները, ատենապետը եւ յանձնակատարը։

Իմ ազգական Օնիսիմը գեղեցիկ երիտասարդ է՝ բաց դոյնի դանդուր մազերով, դանդաղ շարժումներով։ Երբ նրա հետ խօսում են աւագները՝ նա չփոթւում է, խօսքերն արտասանում դանդաղ, չփոթութիւնից մի քիչ ծռւում է նրա բերանը՝ գեղեցիկ դծուած շրթունքներով։ Նրա մուգ-կապոյտ մեծ աչքերում զարմանք է ու հարց, կարծես թէ նա ուզում է հասկանալ մի ինչ-որ գեռեւս չասուած բան։ Օնիսիմը միշտ ինձ թւում էր ոչ այս աշխարհից եւ վախ էի զգում նրա համար։ Նրա ընկերոջ՝ կոլեա Կրասովսկու համար ես չէի վախենում։ Նա վստահ էր ինքն իր վրայ, Օնիսիմին պահում էր ենթակայութեան մէջ, հրամայում նրան եւ մարմնապէս աւելի դիմացկուն ու ամրակազմ էր նրանից։ Նրա սեւ աչքերն այրւում էին, երբ ատենում էր ուղտերին, ձիերին, չալմայով քրդերին...։ Նա զորեղութեան, արկածների կարիք էր զգում։

Եւ ահա մենք նորից ձիերի վրայ։ Դարձեալ Զինգիլի ու է՛լ աւելի բարձր Թափարիզի լեռնանցքները։ Երեկոյեան դէմ քիթդ խփում ես՝ ննջելով թամբի վրայ։ Ալագեօզն ու ես արդէն վաղուց ենք մի ամրողջութիւն դարձել, ես զգում են նրա իւրաքանչիւր շարժումը։

Ճոնապարհի կէսին անառեսութեան վարիչը մեզանից բաժանուեց, նա պէտք է վերադառնար Ղարաքիլիսա։

Գիշերում։ Լայն այծենակաճի մի կէտ փռում ես խատի վրայ, խակ մեւսով ծածկում։ Բարձի փոխարէն, գլխատակին, կապական թամբն է։ Օդը մաքուր է, թափանցիկ։ Նայում ես անամպ երկնքին, թաղւում նրա մէջ։ Գեղնից վերեւ հազարաւոր շողշողուն աստղեր են...։ Աստուածայի՜ն խաղաղութիւն...

Ալագեօզը չի կապուած։ Նա քայլում է շրջապատում, պուճուկելով հիւթալի խոտը եւ ես գիտեմ, որ նա ոչ մի տեղ չի դնայ ու ինձ վրայ չի կոխի...։ Երանութեամբ քնում եմ։

Գայծառ արեւը արթնացրեց ինձ վաղ առաւօտեան։ Իմ առջեւ լիճ է, ափերը չեն երեւում, ջուրը միաձուլւում է երկնքին։ Լճի թափանցիկ կապաւաւուն մակերեւոյթը հաղիւ ծփում է եւ խաղաղ ճպփում ժայռոտ ափերին։ Ի՜նչ վսեմութիւն, ինչպիսի՜ գեղեցկութիւն։

Ուսանողները չեն երեւում, երեւի դնացել են լուացուելու։ Իջնում եմ ջրի մօտ եւ ակամայից մի կողմ ցատկում։ Մի ինչ-որ հսկայական բան կայ-

digitised by A.R.A.R.@

ծակնայլին արագութեամբ նետուեց իմ առջեւ ու անզգայացաւ։ Հրէշ–կրիան պառկած էր քարի վրայ, թաքցնելով գլուխն ու ոտքերը։

Ես եկել էի լողանալու մտադրութեամբ, բայց տեսայ այդ հրէշը, որուն ջուրը չմտնել, այլ միայն լուացուել։

Այնուհետեւ ընթացանք կածանով՝ լճի երկայնքով։ Վան քաղաք չհասած՝ վերջին կանգառում ձիերի թամբերն իջեցրինք, նստեցինք ծառերի տուտերում, սնունելու եւ հանգստանալու համար։ Նոր էինք պառկել խոտի վրայ, տեսնենք մտանում է մի մեծ, փայլուն ինքնաշարժ։ Ինձ թուաց, թէ մեքենայում նստած մարդիկ, երկու աղջիկներ եւ մի ազնուազարմ ազամարդ, ուրիշ աշխարհի մարդիկ են, անիրական էակներ այդ վայրի բնութեան, մարդազրկութեան մէջ, թէ նրանք սխալմամբ են այստեղ ընկել։ Գեղեցիկ ամերիկուհիներ, վայելուչ վոռ հագուստներով, ձեռնոցներով, խուզած մազերի վրայի գլխարկներով, կարծես թէ հենց նոր էին եղել վարսավիրի մօտ...։ Ամերիկացիները հաւատարիմ էին իրենց,— ուզած իրպրութեան մէջ եւ ուզած ճանապարհներում նրանք պէտք է լինեն ելաւ տեղովս։

Վերջին ամիսների ընթացքում ես բոլորովին հեռացել էի քաղաքակրթութիւնից եւ ոչ մի ուշադրութիւն չէի դարձնում իմ արտաքին տեսքի վրայ։ Ես, ասենք, դա անկարելի էր երթերի ժամանակ։ Հասանաբար, տհաւոր էր իմ տեսքը։ Արեւից ու լեռնային ոգից կլպուած դէմք, կոպիտ, ձիու քրտինքով ներծծուած, ճաքռտուած դորշ անթեւ բանկոն՝ կովկասեան կտորից, շալվար, երկարաճիտ կօշիկներ, գլխին ոչխարի սեւ փափախ՝ սպիտակ ասատով։ Այստեղ գրառնք կրում են արեւի հարուածից պաշտպանուելու համար։

Զգիտեմ, թէ ում աչք գրին ինձ ամերիկացիները՝ հարցնելով. «Ովրտե՞ղ է կոմսուհին», որին չփոթաւոր կոմսուհին պատասխանեց. «Դա ես եմ»։ Ցաղրդեցին բացականչութիւններ, ողջոյններ...

Ինձ նստեցրին փայլուն ինքնաշարժում եւ ես ամերիկացիների հետ ուրացի Վան, որոշ ափսոսանքով թողնելով իմ ընկերներին ու Ալագեօզին, նրան յանձնելով մեր յանձնակատարին։

4

ՏԻՖԸ

Կործանուած Վան քաղաք։ Մեր դալուց առաջ այդտեղ սարսափելի կռիւներ էին մղուել հայերի ու թուրքերի միջեւ։

Թուրքերը պաշարել են Վան քաղաքի՝ բարձր լեռան վրայ գտնուող բերդը, որտեղ ապաստանուած էին հայերը (ուժերի դասաւորումը ճիշտ չի ներկայացուած։ Այստեղ խօսքը, հաւանաբար, վերաբերում է Գաղամարջին,— ԹԱՐԳՄԱՆԻՉ)։ Նրանք պայքարել են գազանի պէս, պաշտպանելով բերդը։ Գիշեր–ցերեկ կանայք լցրել են ուռմբեր ու գրառնք նետել թուրքերի վրայ։ Բայց նրանք չէին կարող դիմանալ պաշարումին. սպառուել է սնունդը, վերջացել վառօդի ու արկերի պաշարը եւ հայերը ստիպուած կը լինէին յանձնուել, եթէ չհասցնէին նրանց փրկել մեր հեռուստ կազակները[10]։ Տեղի է ունեցել սարսափելի ճակատամարտ հայկական զոհերով՝ երկու կողմերից[11]։ Սպանուածների դիակները նետել են լիճ, որտեղ էլ գրառնք քայքայուել են. լիճը թուաց նաւորուել է եւ անկարելի դարձել նրա ջուրը օգտագործելն ու ծուխ ուտելը։

Թուրքերը հեռացել են՝ քաղաքում թողնելով շուրջ հազար դերիներ՝ հիւանդներ, կանայք ու ծերեր։

digitised by A.R.A.R.@

Խակ հայերը վրէժից կրակի են տուել քաղաքի ամբողջ թրքական թաղը ու քանի որ կաուչէն անները գժուար են այրուում, իւրաքանչիւր տուն հրդեհել են առանձին:

Բնակարան փնտռելուց առաջ մի քանի օր մենք ապրեցինք ամերիկեան միսիոներ Եարուլի բնակարանում: Մեծ տուն՝ բոլոր յարմարութիւններով,— լոգարան, մաքուր, լուսաւոր ննջասենեակներ, փափուկ մահճակալներ, մեծ հիւրասրահ, ճաշասենեակ: Այդ ամէն ինձ թւում էր անհաւատալի չքեղ:

Գիշերը ինչ—որ խայթոց զգացի եւ մարմինս քոր եկաւ, բայց ես այնքա՞ն խոր քնեցի — այն հանոյքով, թէ վերջապէս կարելի եղաւ հանուել ու վրայից վերցնել ծիու քրտինքով ներծծուած կեղտոտ անթեւ բանկոնն ու շալվարը,— որ ուշադրութիւն չդարձրի խայթոցների վրայ: Ես վայելում էի մաքուր սպիտակեղէնը, դլխատակի բարձը՝ կազական կոչա թամբի փոխարէն, մաքուր վերմակը՝ փռուած ու կծու այծենակաշի փոխարէն: Առաւօտեան ես լուացուեցի տաք լոգարանում, հազայ մեստաքսեայ մաքուր ներքնազգեստ, ներծծուած սպիտակ կուպրով, բայց դարձեալ մի ինչ—որ բան կծում էր ինձ: Այս անդամ ինձ վրայ բռնեցի մի քանի զգուելի սպիտակուն միջատներ, որոնք ծուլօրէն սողում էին սպիտակեղէնի վրայով: Դրանք ոջիլներ էին:

Ես չէի կարող հասկանալ, թէ բարեկիրթ, մաքրասէր, վայելուչ ամերիկացիները ինչպէ՞ս կարող էին թոյլ տալ, որ իրենց տանը ոջիլներ բուծուեն: Որտեղի՞ց:

— Ամբողջ հողը, բոլոր շէնքերը, որտեղ ռազմագերիներ են գտնուում, ամէն ինչ վարակուած է միջատներով, — բացատրեց ինձ ամերիկացի միսիոներ Եարուլը, — մենք ոչինչ չենք կարող անել:

Տէր եւ տիկին Եարուլները ու նրանց երեք երեխաները — երկու աղայ եւ մէկ աղջիկ — շատ հաճելի մարդիկ էին եւ ինձ շատ դուր եկան: Երեւում էր, որ նրանք անհամբերութեամբ էին սպասել մեզ: Նրանց օդնութիւն էր հարկաւոր:

Առաջնութեան մօտ աշխատող գոկտոր Թասելին ես աւելի քիչ էի ճանաչում: Նա եւ նրա կինը մեր գալուց յետոյ շատ չանցած հիւանդացան բծաւոր տիֆով, միայն գոկտորի քոյրն էր մնացել:

Մեր գալիք աշխատանքին ծանօթանալով, ես հասկացայ, որ շատ քիչ բան կարելի էր անել:

Երկու խոշոր դպրոցական շէնքեր: Բոլորովին դատարկ հսկայական սենեակներ. չկան ո՛չ մահճակալներ, ո՛չ սեղաններ, ոչ էլ աթոռներ: Ոչի՛նչ:

Յատակին կեղտոտ, լաթերով ծածկուած մարմիններ են: Թուրքեր: Տղամարդիկ, կանայք, ծերեր, երիտասարդներ, երեխաներ: Բոլորը միասին՝ իրար կողքի թափուած:

Տնքոցներ, զառանցանք, փոքր երեխաների լաց...: Ոմանց մօտ, ինչպէս ինձ թուաց, կասկածելի բծեր կան դէմքերին: Ի՞նչ է դա: Ծաղկա՞խտ:

Մեզ են մեկնուում կեղտոտ ու նիհար ձեռքեր, կանայք լալիս են, ինչ—որ բան խնդրում, ազաչում մեզ, ջանալով բացատրել թուրքերէն.

— Խանո՛ւմ, խանո՛ւմ (տիկին),

Ծերերը լռում էին: Խոժոռադէմ, չարացած, նրանք չէին բարձրացնում աչքերը մեր վրայ: Նրանք զրաղուած էին: Վերնաշապիկները հանած եւ նիհար, թուխ մարմինները մերկացրած՝ նրանք ոջիլներ էին փնտռում եւ եղունդներով զարկելով ճզմում նրանց:

Ես ուշադրութիւն դարձրի անկիւնում նստած մի կնոջ վրայ, որը սարսափելի կերպով ցած թոզնելով կողքերից սարուրերուող կեանքից դուրկ թեւերը՝ խաղաղ, հազիւ լսելի տնքում էր:

digitised by A.R.A.R.@

— Նրա ձեռքերը դուրս են գցուած,— բացատրեց ինձ միսարը Եարուն՝ ի պատասխան իմ հարցական հայեացքի։

— Ո՞վ է արել դա, ինչո՞ւ։

— Հայերի հետ բախուելու ժամանակ...

— Հայե՞րը։ Բայց ինչո՞ւ են կնոջը այլանդակել,— հարցրի ես զարմանքով,— ես թերթերում կարդացել եմ, թէ Թուրքե՛րն են գազանութիւններ արել, ջարդել հայերին։ Ես չեմ հասկանում...

— Ամէն ինչ եղել է։ Կոտորած՝ երկու կողմերից[12]։

Ինքներն հասկանալի է, որ մարտական գործողութիւնների ժամանակ տեղի է ունեցել թէ՛ մէկը եւ թէ միւսը։ Թուրքերի ու հայերի թշնամութիւնը աւելի է դարերով։ Դաժանութիւններ են եղել երկու կողմերից, բայց այստեղ՝ Վանում, մեզ վիճակուեց տեսնել հայերի անմարդկային դաժանութիւնը։ Ասում էին, թէ հայերը կտրել են կանանց կրծքերը, շուռ տալով հանել, ջարդել նրանց տաքերը, ձեռքերը եւ այդ անմարդկային դաժանութեան զոհերին ես տեսել եմ անձամբ։

Ամերիկացիների տանը երկար մնալն անյարմար էր եւ մենք տեղափոխուեցինք հայի տնակ։ Մէկ սենեակում ապրում էին ուսանողները, միւսում՝ ես։ Ներքեւում տեղաւորուեցին տանտէրն ու յանձնակատարը։

Երբ մենք եկանք Վան, գերիների մի մասն արդէն մեռել էր։ Մնացել էին մօտ 800 մարդ։ Կազմակերպեցինք տեսուչը, ջուր տաքացրինք մարդկանց լուացուելու եւ ապիտակիզէն լուանալու համար։ Մերերներն տառում էին զինուորական գերատեսչութիւնից։ Բայց շատ բաներ չկային։ Անկարելի էր օճառ ձեռք բերել։ Օգտագործում էինք լճի ոգտ–ոգտին աւազը, դրանով կարելի էր լուանալ ապիտակիզէնը։ Սարքեցինք մի պարզունակ լուացքատուն։

Մի անգամ, հեւալով, ինձ մօտ վազեց Օնիսիմը.

— Մարտո՛ր Սաչա, շտա՛ւ արա՝ գնանք միասին։

— Ի՞նչ է պատահել։

— Ոգի Թուրքին տարան Թաղելու։

Շէնքից մի քանի Թուրք տղաներ վագելով դուրս էին հանում դիակները պատգարակներով։ Ամէն օր 15–20 դիակներ էին Թափում հին խրամատները եւ արեւէ կերպ ծածկում հողով։

— Նայի՛ր։

Երկու տղաներ կրում էին պատգարակը։ Մենք կանգնեցրինք նրանց։ Մերանի է։ Աչքերը փակ են, կարծես թէ չի շնչում, մի ձեռքը կախուել եւ օրօրւում է ոգում։ Ես վերցրի նրան՝ երակապարկն ստուգելու համար, եւ յանկարծ աչքերը բացուեցին, մարդը յետ քաշեց ձեռքը եւ Թափով դրեց կրծքի վրայ։

— Ոգի է։

Մենք ծերանոցն յետ ուղարկեցինք բարաք, բայց այդ օրուանից սկսած, երբ տղաները հանգուցեալների Թաղելու էին տանում, գնում էին ստուգելու, թէ նրանց մէջ արդեօք ողջեր չկա՞ն։ Տանտէրին եւ Կոլեսային նշանակեցինք այդ գործի վրայ։

Օնիսիմին վիճակուեց Թաղել։ Նա իրեն շատ վատ էր զգում՝ այդ սարսափելի, տգեղեալ աչքերով կապտած դիակները տեսնելիս, որոնք մէկը միւսի վրայ Թափուած կոյտեր էին կազմում, խրամատներից տարածուող դիակների գարշահոտ Թունից։

Մենք պահանջեցինք, որ դիակները լաւ ծածկեն հողով եւ տղաների հետ միասին տարեց տղոց Թուրքերին եւս աշխատանքի ուղարկեցինք։

Բժիշկներ չկային։ Մնացել էր միայն մէկ ռուս զինուորական բժիշկ, միւս բոլորը հիւանդ էին տիֆով, մի քանիսն էլ մեռել էին։

digitised by A.R.A.R.@

Ասաքճանաբար հիւանդանում էին ամերիկացիները։ Նախ բծաւոր տիֆով հիւանդացաւ դոկտոր Ռասելը, աւելի ուշ՝ տիկին Եարօուն ու նրա ամուսինը։

Աշխատող չկար։

Ես վախենում էի իմ ուսանողների, մա՛նաւանդ Օնիսիմի համար։ Նա միակն էր։ Տարեց ծնողները նրան պաշտում էին։ Եւ յանկարծ հիւանդանա՞յ,– մտածում էի ես,– ի՞նչ պատասխան կը տամ ծնողներին։ Նրանք նրան բաց էին թողել իմ պատասխանատուութեամբ։

Ես որոշեցի նրան թիկունք ուղարկել։

Նրա դեղուց յետոյ մի քանի օր անց ես յուր սատցայ, թէ Օնիսիմը հիւանդացել է բծաւոր տիֆով եւ ուղարկուել Երեւանի հիւանդանոց։

Վանում մնացած միակ բժշկական անձնակազմը ես ու գինուորական բժիշկն էինք։ Հանդամի մասին նոյնիսկ մտածելու հարկ չկար։ Մենք աշխատում էինք, առանց ժամերը ծալելու, առանց քնելու եւ գրեթէ առանց ննդի։

Միասրբ Եարօուն մեռնում էր։ Դէմքը կապոյտ էր, երակապարկ համարեա՝ չկար։ Կապտախտ (ցիանոզ)։

— Երեւի կը մեռնի,– ասաց բժիշկը՝ ձեռքը անյոյս թափ տալով,– դե՛հ, աղաչու ծոյթ թափէք։

Մեզ՝ քոյրերիս չէր հասնում այդ բառն ասել։

— Ինչպէ՞ս թէ, բժի՛շկ, ես պէտք է որ ուրիշ հիւանդի մօտ լինեմ... կոնիակով սուրճ տուէք եւ օրական երեք անգամ կամֆորա սրսկեցէք...

Բժիշկը չբլուսեց ու հեռացաւ։

Ամերիկացին ապրեց։ Բայց հիւանդացաւ իմ ատենապետը, իսկ մի քանի օր անց՝ Կոլիա Կրասովսկին։

Ի՞նչ անել։ Իմ երկու օգնականները՝ Օնիսիմ Դենիսենկոն եւ Կոլիա Կրասովսկին՝ հիւանդացել էին բծաւոր տիֆով։ Օնիսիմին հացրի Իզդիր ուղարկել եւ հիւանդանոց դնել։ Կոլիա Կրասովսկին ապաքինուեց Վանում եւ նրա մօտ մնում էր մեր յանձնակատարը։

Բայց մի քանի հարիւր քրդուհիներ, Թրքուհիներ, հիւանդներ, վիրաւորներ առանց խնամքի մեռնում էին նախկին ամերիկեան՝ առանց կահույքի, առանց մահճակալների գպրոցական չէնքերում, ապրատիկ սենդով, որը եփում էին քրդուհիներն ու Թրքուհիները եղիպտացորենից։ Ամէն օր մեռնում էր մօտ 20 մարդ՝ տիֆի երեք տեսակներից, գլխաւորապէս բծաւորից։

Ինչպէս յայտնի է, բծաւոր տիֆի գլխաւոր փոխանցողները ոջիլներն են։ Մեր սպիտակեղէնն ու հագուստները, յատկապէս պահեստներում, լեցուն էին այդ զզուելի, ճնկոտ, գանգրաշաչաթ սպիտակաւուն միլիառներով եւ անկարելի էր նրանցից ազատուել։ Մեռաքսեայ սպիտակեղէնը ներծծուած էր սպիտակ կուպրով, այն լուանում էինք ամէն օր, բայց երեկոյեան ամբողջ մարմինը կծտուած էր ու կասաղօրէն քոր էր գալիս։ Այդպէս չէր կարող շարունակուել։

Ես գնացի հրամանատար զօրավարի մօտ։ Զօրավարն ինձ չընդունեց։ Նա բացեց պատուհանը.

— Ձեզ ի՞նչ է հարկաւոր, քո՛յր։

Զօրավարը դուրս չեկաւ ու հաւանաբար վախենում էր ինձնից վարակուել։ Ինձ հետ խօսում էր՝ գլուխը պատուհանից հանած։

— Ձերդ գերազանցութի՛ւն, ինձ հարկաւոր են 30 սայլեր, եղիպտացորենի, ալիւրի պաշար, ոչխարների հօտ... եւ...

— Ի՞նչ։ Ի՞նչ բան է,– զօրավարը սարսափով նայեց ինձ վրայ,– ինչո՞ւ։ Ինչի՞ համար։

digitised by A.R.A.R.@

Ես բացատրեցի նրան. «Դպրոցները, որտեղ դասում են հիանալի թրքու հիները, բարձու նրի վրայ են: Նրանք լեցուն են հիանալիներով: Շատ են բնաւորութիւնները, մահացու թիւնը հսկայական է: Առուտակը բարձունքից ցած է հոսում, որտեղ զօրանոցներն են: Հարկաւոր է բոլորին հաւաքել դպրոցներից եւ իրենց դիւղերն ուղարկել: Դրանով դուք կը փրկեք թէ՛ զօրաբաժինը եւ թէ մահմեդական կանանց, երեխաներին ու ծերերին, որոնք վարակուում են մեկը մեսից՝ նեղուածութեան, կեղտի ու ոջիլների մէջ»:

— Լա՛ւ, ինձ ժամանակ տուէք մտածելու, ասա՛ց:

Եւ երկու օր անց երեւացին սայլերը, ուլերների հոտն ու պարենամթերքը: Պէտք էր տանել կանանց ուրախութիւնը, երբ նրանք գնում էին: Նրանք ինչ-որ բաներ էին փնթփնթում թուրքերէն, ոմանք իրենց վրայից հանում էին ինչ-որ քարերից պատրաստուած ապարանջաններն ու մանեակները, որոնցից ես գժուարութեամբ հրաժարուեցի: Նրանք ինչ-որ բանով իրենց չնորհակալութիւնն ու ուրախութիւնը արտայայտելու կարիք ունէին. «Խոնդ՛մ, խանո՛ւմ»: Երբ մի քանի օր անց ես մեկնում էի Վանից, հանապարհին հանդիպեցի ամբողջ դէմքով ժպտացող մի թրքուհու՝ կուէ կուլան գլխի վրայ: «Խանո՛ւմ, խանո՛ւմ», ասում էր նա եւ ինչ-որ բան ուեւլացնում թուրքերէն: Նրա ամբողջ դէմքից ես միայն հասկացայ, որ նա երջանիկ է:

5

ԱՍՏՈՒԱԾ ՆՐԱ՝ ՎԱՐՈՐԴԻ ՀԵՏ

Իմ դործն աւարտուած էր: Վանում մնալու հարկ չկար: Ես կուլեա կրասովսկուն տանիտարի հետ թողեցի Վանում: Նա ապաքինում էր, բայց դեռ շատ թոյլ էր:

Զօրավարն ինձ տուեց իր ինքնաշարժը՝ վարորդով, մինչեւ լեռնանցք հասնելու համար: Այնու հետեւ հարկաւոր էր դնալ երկանիւ սայլով կամ ձիով:

Գնացինք մինչեւ լեռնանցք, սկսեցինք բարձրանալ: Ինքնաշարժը կանգ առաւ: Վարորդի հետ հրեցինք ներքեւ՝ հովիտը, որպէսզի ճանապարհից չերեւայ: Վախենում էինք, թէ գիշերը ջրդերը կը յարձակուեն: Ուրիշ հնար չկար, պէտք էր այդտեղ գիշերել:

Երեք անքուն շաբաթներից յետոյ անչափ քնել էի ուզում: Աչքերս փակուել էին: Ես նստել էի յետեւի նստարանին եւ արդէն ննջում էի, երբ յանկարծ վարորդը եւս յետեւ եկաւ, պատրաստուելով նստել կողքիս: Զգեստիս ինչու՝ վախեցայ:

— Նստեցէք առջեւում,— ասացի խստօրէն:

— Իսկ ինչո՞ւ:

— Դուք լսեցի՞ք իմ հրամանը: Նստեցէ՛ք առջեւի նստարանին:

— Ես չեմ հասկանում, թէ ինչու: Ցրդերի յարձակուելու դէպքում ես պիտի ձեզ պաշտպանեմ: Ես դինուորական մարդ եմ: Ի՞նձ տուէք ձեր ատրճանակը:

— Դուք լսեցի՞ք, թէ ինչ ասացի: Արէք ա՛յն, ինչ որ ձեզ հրամայում է:

Նա ահաւոր թեամբ հեռացաւ: Թէ ինչ պատահեց յետոյ՝ չեմ կարող նկարագրել: Անվայել շարժուեցինք, կեղտոտ խոսքեր...

Ես ատրճանակը հանեցի պատեանից, որ կախուած էր կաշեգօտուց, եւ բռնեցի հրահանից:

«Եթէ շարժուի՝ պիտի կրակեմ», մտածում էի ես:

Եւ այդպէս նստած մնացի մինչեւ լուսաբաց, հետեւելով ցնդած մարդու իւրաքանչիւր շարժմանը: Դա որքա՞ն անվերջ, երկար գիշեր էր: Աչքերս

digitised by A.R.A.R.@

փակում էին, գլուխս պտտվում, ամբողջ մարմինս ցաւում յարուածու-
թիւնից։ Քնե՞լ, քնե՞լ։ Աչքերս փակել մի վայրկեան ու քնել։ Բայց գիտէի, որ
այն ժամանակ կորած եմ։ Կը վերցնի ատրճանակս եւ ես նրան չեմ կարող յա-
թահարել։ Սարսափից քունս ցնդում էր, բայց միայն կարճ ժամանակով։ Ես
կսմթում էի ինձ, ջանալով ալեկոծող մտքերով քունս հեռացնել։ Ոչինչ չէր
օգնում։ Քնե՞լ, քնե՞լ։ Բայց վարորդի նուազագոյն շարժման գլխում՝ մատս
արդէն հրահանգի վրայ էր։ Ես պատրաստ էի դա սեղմել։

«Ո՞ւր կրակել, ձեռքի՞ն, ոտքի՞ն, մատնում էի ես։ Նրան սպանել ես չէի
ուզում։ Որքան էլ անհամակրելի ու զզուելի լինէր այդ մարդն իմ աչքում, ես
չէի կարող հոգուս վրայ վերցնել նրա սպանութիւնը։

Բայց ահա, վերջապէս, հազիւ բացուեց լոյսը։ Լեռների յետեւից դան-
դաղ ծագում էր արեւը։ Ես նայեցի չուրջս։ Զորս բոլորք լեռներ են։ Մենք հով-
տում, մեզնից վեր՝ նեղ ճանապարհ...

Ու յանկարծ ճանապարհին գզրգացին սայլերը։ Գնդակի նման դուրս
ցատկեցի ինքնաշարժից։ Տեսնեմ՝ զինուորները երկանիւ սայլերով նորոգման
են տանում անիւներ...

— Եղբայրնե՛ր, եղբայրնե՛ր,— բղաւում եմ,— կա՞ղ ասէք, ձեզ հետ
վերցրէք ինձ։

Մէկը կանգ առաւ.

— Ի՞նչ կայ, քոյրի՛կ։ Որտեղի՞ց։

Եւ ես նրան ամէն ինչ տեղնուտեղը պատմեցի, իբրեւ հարազատի, ու
չդիմանալով՝ արտասուեցի։ «Ա՛խ, իմ խեղճուկ։ Տեսնո՞ւմ ես, լկտի չուները ինչ-
պէս է վախեցրել։ Նստեցէ՛ք, քոյրի՛կ։ Զինուորը իմ իրերը բերեց ինքնաշար-
ժից։ Ինձ նստեցրեց վերեւում՝ անիւների վրայ, ես նոյնիսկ չնայեցի վարորդի
կողմը, եւ հենց որ չարժուեցինք՝ քնեցի մեռածի քնով։ Իսկ երբ արթնացայ,
տեսայ, որ զինուորն ինձ բռնել եւ պահում է գօտուց, որպէսզի վայր չընկնեմ
երկանիւ սայլից։ «Մեռե՛լ»։ Զինուորն ինչու, գլխարկը հանեց, ջուր հաւաքեց մի
ինչ-որ ջրի փոսից.

— Խմի՛ր, քոյրի՛կ։

Չեմ յիշում, թէ ինչպէս տեղ հասայ։ Քնած էի ամբողջ ճանապարհին։

Իգդիրում այդ գիշեր քնեցի մեռածի պէս։ Առաւօտեան գնացի Երե-
ւան՝ Օնիսիմի մօտ։ Նա արդէն ապաքինում էր։

Հաւանաբար, եթէ ես գանգատուէի վարորդից, նրան կը յանձնէին
ռազմա-դաշտային դատարանին, բայց ես չուզեցի այդ բանն անել։ Գլխաւորն
այն է, որ ոչ մի վատ բան չպատահեց։ Աստուած նրա հետ։

Թիկունք դալով ես իմացայ, որ Համառուսաստանեան Զեմստուոյական
Միութեան քոյրերի ու բժիշկների մեր մեծ ջոկատը մօտ երկու ամիս, Թիֆլի-
սում նստած, հալումաշ է եղել անգործութիւնից՝ նշանակման սպասելով։ Իսկ
գործելու ինչպիսի՜ հսկայական դաշտ կարող էր լինել Վանը նրանց համար։

Ակնյայտորէն Գոլենները, մեր ջոկատի հետ նահանջելով Ղարաքիլիսայից,
չէր հասցրել մտածել Վան համալրումներ ուղարկելու մասին եւ, ինձանից
լուրեր չստանալով, չէր պատկերացնում այն վիճակը, որի մէջ ընկել էինք
մենք։ Մեր ջոկատը Ղարաքիլիսայից, պետի հրամանատարութեամբ, նահան-
ջել էր լրիւ կարգով։

— Ափսոս, որ իմ հաւերն ու կովերը կորան,— ասացի ես մեր պետին։

— Օ՜, ո՛չ,— պատասխանեց նա ծիծաղելով,— ես Թուրքերին ոչինչ չեմ
թողել։ Ձեր բոլոր հաւերին վերցրել ենք. կովերն է՛լ եմ քշել ինձ հետ։

Իմ ուսանողները, փառք Աստուծոյ, ապաքինուել էին, եւ ես նրանց
տուն ուղարկեցի՝ ծնողների մօտ, Նովոշերկասկ։

Ես երկար ժամանակ չէի կարողանում ազատուել արեւաղարձային մա-
լարիայից, տարիներով հիւանդ եղայ։

digitised by A.R.A.R.@

Քեզ բոլորովին առողջ ես զգում եւ յանկարծ սկսում ես գոռալ։ Նոպան տեւում է մօտ մի օր։ Դողը քեզ մահճակալ է նետում, ատամներդ իրար են խփում, ծածկւում ես մի քանի վերմակներով՝ ոչինչ չի օգնում։ Ջերմաստիճանդ բարձրանում է մինչեւ 41, 42։ Մի քանի ժամ քրտնելուց յետոյ՝ ջերմաստիճանդ իջնում է։ Մարդը առողջ է, միայն թէ մեծ թուլութիւն կայ։

Մոսկուայից իմ յետուից եկել էր իմ նախկին քարտուղարուհին եւ մենք միասին ապրում էինք մի հիանալի հիւրանոցում։ Ընկնելով քաղաքակիրթ Թիֆլիս քաղաք՝ ես վազում էի խանութից խանութ, գնում հագուստ, քանի որ բոլոր հագուստներս ինձ վրայ կախուած էին՝ ինչպէս կախարանից։ Ես կորցրել էի մօտ 40 ֆունտ։

Երեկոյեան, մինչեւ ուշ գիշեր, մենք նստում էինք ճաշարանում, ուտում խորոված եւ լսում յաւ նուագախմբի նուագ։ Բայց հարկաւոր էր գնալ տուն եւ աշխատանքի անցնել։

Ռուսերէնից Թարգմանեց՝
ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

26-7-1987 թ.

ՄԱՆՐ ԵԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Նախախորհրդային Ռուսաստանի տեղական՝ նահանգային եւ այլ ինքնավարութեան շրջանները ներկայացնող մարմին, քաղաքների շրջանը ներկայացնող օգնականների միութեան կոչին։ Ջեմստւոյական համերկրային միութիւնը գոյացաւ, նահանգային առանձին զեմստւոյական մարմինների համագործակցութեան հիման վրայ, 1914թ Յուլիսին, պատերազմական պայմանների թելադրանքով։

2) Բնագրում գրուած է էքզրցում-կարոչ, ինչ որ ակնյայտօրէն տեղերի չփոթութիւն է, յոյզրզգանութեան խախտումով։

3) Այդպէս է գրուած բնագրում, ինչ որ ակնյայտօրէն տուներ չփոթութիւն է։ Հետագայ տարիում եւս, ինչպէս որ կը տեսնի ընթերցողը, յիշւում է «ներքոյ գետնատուն», բայց այս անգամ արդէն հիւս խմաստով, քանի որ խօսքը վերաբերում է Աբեւելեան Եվրոպայի՝ Արեւմտեան վերին հոսանքին։ Հաւանաբար չփոթութիւնը գրաքից է ծագում։

4) Այստեղ ցոյց է տրւում, թէ յեղուական համեստ պաշարով խաղացին ինչպէս է խօսում ռուսերէն, օտար բառերի խառնուրդով եւ բառակազմական շեղումներով, ինչ որ ասելայն, չի խանգարում փոխադարձ հասկացողութիւնը, ինչպէս լինում է առհասարակ այդպիսի դէպքերում։

5) Վերջերս երկարութեան ռուսական հին չափ է՝ մէկ կիլոմետրից մի քիչ աւելի։

6) Տղաստանի ծանրաքաշութեան մէջ նշւում է՝ «Լիկա ֆունտ» ազգականութիւն Բերս բնատների միջոցով։

7) Ինքնին զարմանալի են այդ անհեղեղութիւնն ու այդ հարցերը։

8) Ծանրութեան հին չափ։ Փութը հաւասար է 16,38 կիլոգրամի։

9) Երկարութեան հին չափ, հաւասար է 2,134 մետրի։

10) Այստեղ լիովին անհասկանալի է հայ կամաւորների կարեւոր գերը եւ առհասարակ վանի հերոսամարտի բնթացքը։ Աւելի քան մակերեսորէն է ներկայացւում, թէեւ կարելի էր, նոյնիսկ յուշերի շրջանակում, վաւերական տուեալներ գտնել ու հաղորդել։

11) «Երիտ» կոչմից հակայական գումարներ պարապան եւս միանգամայն թերի է ներկայացւում։ Որ տեսակի անհիմն հաւասարութեան նշան է դրւում ամրոցներին տպագրուած պետական բանակի, նրա հետ գործող ասպիսանութեան, արեան ու կոզապուտի ծարաւի բաշիբոզուկների եւ խաղաղ ու անդէն, բառացիօրէն կենաց ու մահու գոյամարտ մղող հայ բնակչութեան միջեւ։

12) Թէ՝ միսխանների բացատրութիւնը եւ թէ հեղինակի զարմանք ձեւացնելը խիստ տարօրինակ է։ Երեւում է, որ նրանք բոլորովին տարբեր աչքերով են նայում պատահած դէպքերին, խուսափում էսպանից եւ կարդում պատահական դիպուածներին, որից եւ՝ նրանց անվաւեր եզրայանգումները։

digitised by A.R.A.R.@

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԴԷՄ ԱՌ ԴԷՄ ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ

●Կը կարծեմ, որ որոշ չափով շեղեցաւմ նիւթէն, հարցին էութեան խորքը թափանցելով հանդերձ: Մեր նպատակը մեր գունամտածողութեան հոլովոյթը լուսարձակի տակ բռնելն էր, պարզել անոր զարգացման հոլովոյթը, որ հոգին գոյնէն՝ սրճագոյնէն, պայմարոգներու եւ թշուառներու գորշ գոյներու երանգներէն ճամբայ ելլելով՝ հասաւ գուարթ ու լուսաւոր հարուստ երփնապնակի մը:

— Ես միշտ ալ մէկ համեստ աշակերտն եմ բնութեան: Բնութենէն կու գան իմ պատառներուս գոյները, իմ ներքին բնութենէս եւ երբ կ'արթննամ. ստեղծագործական երազէն, այսինքն՝ երբ պատառը կ'աւարտի, երբեմն ես ալ կը զարմանամ, թէ ինչո՞ւ համար այս կերպարանքը կանչի ներքնանգներով գծած եմ, երկրորդը՝ կապոյտ, ուրիշ մը՝ դեղին: Եւ ոչ, ինչո՞ւ կ'ուզենք անպայման պատասխաններ գտնել, գոյնը կարեւոր ալ չէ, էականը արտայայտութիւնն է, խօսքն է, խորհուրդն է: Ես կը գծեմ ամենայն ազատութեամբ, որովհետեւ կիներ այլ բան չէ ինծի համար, եթէ ոչ բնութեան խօսուն հայելին. այդ իսկ պատճառով անոնք կանայք են, կարմիր են, դեղին են, շագանակագոյն են, կապոյտ են, որովհետեւ կինը ինծի համար թէ՛ ծառն է, թէ՛ կեանքի աղբիւրը, թէ՛ լոյսը, թէ՛ հողը, թէ՛ երկինքը, թէ՛ արեւը, թէ՛ ծովը, մէկ խօսքով՝ ողջ տիեզերքը...

Աւելի քան երեսուն տարուան ընթացքին, իմ երփնապնակս զգայիօրէն հարստացաւ, որովհետեւ իրրեւ մարդ՝ իմ հոգիս հարստացաւ, միտքս բացուեցաւ նոր հորիզոններու, իսկ կեանքս լիացաւ իրեւ բայլարող փորձառութիւններով: Ես գոյնը կ'ընտրեմ բնազդաբար, առանց մտածելու, երբ կը զգամ, որ անիկա հաշտ կը հնչէ քովի գոյներուն, աւելի կը զօրացնէ անոր արտայայտչականութիւնը, նոր ուժ եւ կենսունակութիւն կու տայ պատառին: Ինչպէս ըսի, ես կ'աշխատիմ. տարեբային թափով, որովհետեւ ձեռքս միտքէս առաջ կը վազէ, որովհետեւ անիկա կրցաւ ըլլալ՝ ձեռք, ե՛ւ սիրտ, ե՛ւ միտք: Ես միաժամանակ կ'աշխատիմ. շարքի մը վրայ, կը սկսիմ մէկը, կ'անցնիմ երկրորդին, կը գծեմ երրորդ մը, չորրորդ մը, յետոյ կը վերադառնամ առաջինին, այնքան ատեն, որ գիս տանջող խնդիրը տակաւին չէ լուծուած, այնքան ատեն, որ կը շարունակէ ալեկոծել էութիւնս:

Վերջապէս, գոյն, ձեւ, ծաւալ, ֆոմփոզիսիոն, դանակ, վրձին, թէ աւելի կոթ՝ ասոնք բոլորն ալ օժանդակ տարրեր են, մտածումդ արտայայտելու միջոցներ, մինչ հիմնականը արտայայտչականութի՛ւնն է, կեա՛նքն է: Օրինակ, քարայրներու պատերուն վրայ կարմիր ցուլեր նկարող նախամարդուն համար գեղեցկութիւնը եւ գոյնը ոչ մէկ կարեւորութիւն կը ներկայացնէին: Ան կը գծէր, որովհետեւ գոյատեւելու կոիւ ունէր, ստիպուած էր իր հոգիէն արմատախիլ ընել վախի զգացումը, գետին փռել ցուլի

digitised by A.R.A.R.@



Սպիտակ շրջանի գործերէն՝ «Հանգիստ»

կերպարանքով ներկայացող մահուան գաղափարը, եւ մահուան յաղթելու համար ան միմիայն ունէր մէկ զէնք՝ հաւատքը: Ու հաւատքով զինուած՝ ան իր գոյատեւման պայքարը մղեց քարանձաւի պատերուն վրայ, գծելով ցուլը՝ ապանձնեց մահը, զօրացաւ, արտակարգ ուժ եկաւ վրան, հասաւ արտայայտականութեան, իր բուն էութեան: Այս դիտանկիւնէն մօտեցած՝ որոշ առումով ես քարայրի նախամարդն եմ:

Վերցուցէք ուրէ հանճարեղ արուեստագէտի ձեր ուզած գլուխ-գործոցը: Ի՞նչն է կարեւորը. ձե՞ւը, գո՞յնը, գիծե՞րը, պատատոին համաչափութի՞ւնը՝ ո՛չ, հիմնականը ժամանակի զգացողութիւնն է, բռնուած դրուագին կամ հոգեվիճակին ամբողջական արտայայտականութիւնը, պահին ուժականութիւնը:

Հարց տանք մենք մեզի՝ «Ի՞նչ է արուեստը»: Թէքնի՞ք, լեզուական կամ գունային վարպետութի՞ւն, ակադեմիանեբու մէջ աւանդուող օրէնքնե՞ր, ընդունուած չափեր եւ յարաբերութիւններ՝ ո՛չ, հազա՛ր անգամ ոչ, որովհետեւ այս բոլորը ըլլալով հանդերձ, ամէն բանէ առաջ եւ վերջ՝ արուեստը ճշմարտութեան փնտռտուքն է, կեանքի խորհուրդներուն փնտռտուքը: Անշուշտ, արեւու լոյսին տակ կան բազմաթիւ ճշմարտութիւններ, յարգելի ճշմարտութիւններ, բայց զիս հետաքրքրող ամենասուրբ ճշմարտութիւնը մարդո՛ւն ճշմարտութիւնն է, եւ ասոր համար է, որ ես միմիայն մարդիկ կը նկարեմ, որովհետեւ երբեք պիտի չուզէի եւ չեմ կրնար բարոյական անձնասպանութիւն գործել:

●1980ին, «էշսիրոյի ձեր ցուցահանդէսին, որ նաեւ հզաւ յետադարձ յուշ մը ձեզի համար, կնոջ կերպարին կոզիին՝ երեւցաւ նաեւ այլ տիպարներ: Օրինակ, պաստառի մը վրայ մենք տեսանք հաստատամայլ, գլուխը բարձր բռնած էշ մը, որ կը քալէ ուղիղ. կարծէք Ցիսուսը դէպի Երուսաղէմ առաջնորդող աւանակը ըլլար՝ բոլորովին տարբեր արտայայտութեամբ, վճռական եւ

digitised by A.R.A.R.@

ինֆնավստահ, կամ՝ ցոյսի խորհրդանիշ մը: Այլ պաստառներու մէջ՝ ձկնորսներ, բեռնակիրներ, որմնադիրներ, մշակներ՝ աշխատանքի պահուն, ճաշի ատեն, գրոյցով մը տարուած կամ հանգիստի վայրկեաններուն, կամ կոյրը, որ իր լսողական զգայարանքով ո՛չ միայն կը յսէ դիմացինին բառերը, այլու կը դիտէ, կ'ուսումնասիրէ իրեն համար անծանօթ դիմագիծերը: Դիտելով ձեր այս պաստառները, մենք զգացինք ձեր գործերուն հետ, հաղորդուեցանք անոնց բազմերանգ խորհուրդով եւ թափանցեցինք անոնց խորքը:

Գէտ փափաքէինք գիտնալ, թէ ի՞նչ դրդապատճառներ ձեզ մղեցին արուեստասէրին հրամցնելու նիւթերու այսպիսի զանազանութեամբ բնորոշող ցուցահանդէս մը...

— Ես զգացի անհրաժեշտութիւնը գարձեալ շուկայ իջնելու, կեանքի հեւքին ու թափին մէջ անգամ մը եւս նետուելու անսանձելի պահանջ մը, վերաքարմացնելու համար յիշողութեանս պաստառին վրայ արձանագրուած տեսարաններն ու վիճակները: Բայց պատերազմը շրջած էր ամէն իրականութիւն եւ արժէք. անցեալի կենսախայտ շուկաները վերածուած էին անշունչ եւ ամայի փլատակներու, բեռնակիրներուն արդար քրտինքն ու գուարթ կանչերը թաղուած էին վառօդի եւ քարակոյտերու ահաւոր քաոսին տակ, երբեմնի Գուրճ Համուտը դիմագիծ փոխած էր եւ իմ բարի դրացիներս, մենաւոր մասամբ, արդէն հրաժեշտ տուած էին այս աշխարհին: Հետեւաբար, ինծի կը մնար մէկ լուծում — դիմել իմ հազարաւոր ճեպանկարներուս: Եւ ես սկսայ խառնչտկել հին թուղթերս, վերյիշեցի հին օրերը եւ սկսայ վերստին վրձնագրել ընտրած գծանկարներս:

●Այսինքն՝ վերամաղ մը բրիհ, որոշ հեռաւորութենէ մը դիտեցիք եւ ապրեցաք ձեր անցեալը՝ զայն փոխադրելով ներկային մէջ, վերյուշին եւ անցեալի ձեր մատիտանկարներուն օժանդակութեամբ: Ասիկա ծանօթ երեւոյթ է. գրագէտներ, գեղանկարիչներ, երաժշտագէտներ եւ այլ արուեստագէտներ յանախ կը դիմեն իրենց յուշերուն, զանոնք կը կարդան երկրորդ աչքով, զգալի հեռաւորութենէ մը: Ցետոյ, այս պարագային, ժամանակը կը խաղայ իր բարերար դերը. նոյնպէս՝ զարգացման եւ հասունացման հոլովոյթէ մը անցած նոր արուեստագէտը, որ նուաճած կ'ըլլայ նոր աշխարհահայեացք, աւելի հասուն զգայարանքներու համակարգ, մասամբ խաղաղած եւ հանգչած դատողութիւն: Այս բոլոր տուեալները կը նպաստեն, որ ան մեզի ներկայացնէ մաքրազտուած, իր էութիւնը միայն ցուցադրող անցեալ մը, որ, բախտաւոր պարագային, պահելով հանդերձ անցեալի հիմնական գիծերն ու երանգները՝ մեզի կը ներկայանայ նոր հնչեղութեամբ եւ վերաթարմացած, աւելի ճիշդ՝ իր կատարելիութեան հասած բովանդակութեամբ: Կ'ուզէինք գիտնալ, թէ այս առումով ինչպիսի՞ հոգեվիճակներ ապրեցաք, երբ ձեր երփնապնակով ու յիշողութեամբ զինուած՝ անցաք պաստառին դիմաց:

— Հոյակապ հոգեվիճակ մը: Կարծէք սկսայ երկրորդ անգամ ծնիլ: Երեսուն տարի հոգ, մէկը անշո՛ւշտ որ կը հասունանայ, գոյները կը փոխուին, գիծերը կը յստականան, պաստառները աւելի կուռ fոմփոզիսիոն կ'ունենան, եւայլն: Երեսուն տարուան փորձառութիւն մը ապրած նկարիչը անպայմանօրէն որ տարբեր ձեւով պիտի մտածէ, հասուն զգացումներով պիտի մօտենայ իր թեմային եւ պիտի սկսի գծել կատարելագործուած թեմիքով: Իրաւունք ունիք, երբ կը խօսիք երկրորդ հեռաւորութեան եւ վերափոխուած, հասունցած արուեստագէտին մասին, որովհետեւ օրեւէ յաջող պաստառի նախապայմանը մա՛րդն է, ապրող, տագնապող, ջղայնացող, ապշող, ուրախացող փորձառու մանուկը՝ մարդ—արուեստագէտին հոգիին մէջ: Ես զարմանալի չէ, որ իմ գոյները փոխուեցան, գիծերը յստակացան եւ պաստառներս աւելի պայծառ գուարթ դարձան: Ցետոյ, ասիկա ինծի համար լուրջ քննութիւն մըն էր, փտանգաւոր փորձ մը՝ ստուգելու համար, որ նոյն բեռնակիրը, 1949ին, 1950ին, 1951ին եւ աւելի ուշ թուղթի վրայ

digitised by A.R.A.R.@

Սատանային դէմ

Հրաշափառ յարութիւն

գծուած բեռնակիրը ինչո՞վ կը տարբերի 1980ին գծած իմ նոյնարնոյթ պատատուէս։ Ես կը կարծեմ, որ աւելի զգացում տուի, գոյներս օժտեցի յաւելեալ յատակոտութեամբ, աւելի վճռականութիւն եւ ինքնավստահութիւն գրի գիմագիծերուն մէջ, անպարտելի կամքով ու բողոքով գինեցի գիրքեր եւ, կը հաւատամ, որ անցեալին արտաքինով գժբախտ այդ տիպարները հագան յուսաւոր հագուստներ, երջանիկ ու յաղթական արտայայտութիւն, հասկցա՞ք ինչպէս։

Ցեւոյ, ամէն մարդ ինծի շարունակ կը հարցնէ. «Լաւ, պատերազմին դէմ կը խօսիք, բայց պատերազմի տեսարաններ չէք գծեր»։ Ո՞վ ըսաւ. ես գծած եմ պատերազմը, բայց իմ ոճով, գծած եմ գեղին ինկած ծաղիկ մը, որ հին ծաղիկը չէ, արցունք ու թախիծ կայ իր թերթերուն վրայ, կամ երբ մայրին եղերքը նստած պզտիկ մը կը գծեմ, պատերազմը կ'ամփոփեմ անոր գիծերուն մէջ, անոր տխուր ու տարտափահար կերպարանքին մէջ, իր սհաւոր նայուածքին մէջ...

● Ուրեմն, դուք համաձայն էք կեանքէն վերցուցած ձեր նիւթերը բեռլադրականութեամբ արտայայտելու ոճին։ Օրինակ, տխուր-տարտամ նստած այս տարտափահար ապցնակին գիրկին մէջ ցարդուփշուր պուպրիկ մը գետեղելով՝ կ'ուզէք ներկայացնել լիքանանեան պատերազմը։

— Միայն այդ չէ։ Կը ներկայացնէ լիբանանեան պատերազմը, կը ներկայացնէ Հայկական Ջարդը, կը ներկայացնէ մարդկութեան ապրած տառապանքներն ու ողբերգութիւնները, բոլո՛ր ժամանակներուն, բոլո՛ր երկիրներուն մէջ, մէկ խօսքով՝ կը ներկայացնէ բացարձակ տառապանքը...

● Երբէ՞ հիշ առաջ կ'ըսէիք, թէ ձեր վերջին տասնամեակի գործերը կը յատկանշուին թատերական աշխատութեամբ, մենք կը մեկնէինք հիմնական տուեալներէ. առաջին՝ նստած տիպարներու փոխարէն՝ վերոնշեալ հանգրուանի ձեր պատտառները կը հանդիսացէին սլացիկ, ներքին իրարանցում մը մատնող կնոջական խումբեր, երկրորդ՝ մայր մը եւ նորածինը, հարս մը եւ բանի մը հարսնեւորներու փոխարէն՝ իրարու միաձուլուած,

digitised by A.R.A.R.@

պատատին Ֆոնը գրեթէ ջնջած եւ միշտ շարժուն հերոսուհիներ, որոնք կարծէք դուրս կը յորդին շրջանակէն եւ կ'ուզեն իրենց վառ աշխուժութեամբ հրդեհել նաեւ ցուցադրավայրին մթնոլորտը: Այս պարագան այնքան ակներեւ է, որ նոյնիսկ հպանցիկ ակնարկով մը կը նշմարէ դիտողը, թէ խորութիւնը փոխարինուած է պատատին տարածութիւնը ամբողջականօրէն գրաւած բնորդներուն միաձոյլ շարադրանքով: Հանդարտ եւ տխուր գունամշակումներէ դէպի կենսայորդ եւ յարաշարժ, խտացեալ ոճի անցումը անշուշտ արդիւնք էր հոգեբանական եւ ընկերային որոշ դրդապատճառներու: Երբեւիցէ մտածա՞ծ էք այս մասին:

— *Շատ աւելին մատնանշում մը կատարեցիք: Որոշ չրջան մը բազմակերպար, միաձոյլ կնոջական կերպարներէ կազմուող պատատներ աւարտելէ հետ, ես ալ սկսայ զարմանալ, թէ ինչպէ՞ս եւ ինչո՛ւ սկսայ գծել եօթը, տասը եւ աւելի կնոջական սիլուէթներ մէկ կտաւի վրայ ամփոփող յօրինումներ՝ երկու, երեք, կամ հինգ կիներէ բաղկացած պատատներու փոխարէն: Չխ զարմացուց մանաւանդ ա՛յն պարագան, որ այս գործերուն մէջ անոնք սկսած էին գրաւել նաեւ խորքն ու ամբողջական տարածութիւնը պատատին: Այն ատեն միայն անդրադարձայ, որ ոճիս մէջ կատարուած այս փոփոխութիւնը ուղղակի եւ անուղակի հոգեբանական անդրադարձն է լիբանանեան պատերազմին: Գիտէ՞ք, լիբանանեան պատերազմը մեզ աւելի մօտեցուց մարդուն, ապրիներուն մէջ մարդիկ կծկուեցան իրարու վրայ, իրարմով զօրացան, իրարու հաւատք ներշնչած՝ ոտքի ելան եւ ոտքերէն եւոք, ծանօթ ու անծանօթ, հազիւ դուրս ելած՝ սկսան հարցուփորձել զիրար, հետաքրքրուիլ հեռաւոր շրջաններու մէջ կատարուած աւերներով, ցաւեցան անմեղ քաղաքացիներու, մանուկներու եւ ծերունիներու յօշոտուած, բզկտուած մարմիններուն պատկերները դիտելով թելեւիզիոնին վրայ:*

Ո՛չ, հակառակ բոլոր ոճերուն եւ աւերումներուն, հակառակ այս փոքրիկ հայրենիքը պատառ-պատառ ըրած լենկ-թիմուրի անասնուած ժառանգորդներուն բոլոր դաւերուն եւ ոճիրներուն, հակառակ յարանուանական նեղմտութեանց խաւարամիտ ախոյեանները բոլոր հրաւէրներուն եւ արտայայտութեանց, ջախջախիչ մեծամասնութիւնը այս երկրի գաւակներուն կառչեցաւ ամբողջական Լիբանանի եւ անբաժանելի ու մէկ ժողովուրդի գաղափարին, տառապեցաւ երազելով եւ երբեք չհրաժարեցաւ իր այն մեծ երազէն, որ տարներու հրահանգներով մղուող այս կոտորածներն ու աւերումները վերջ պիտի դնեն անպայման, վերստին պիտի քանդուին հայրենիքը իրարմէ անջատող բոլոր անցարգելները եւ պիտի ողջագուրուին ակամայ գիծին միւս կողմը մնալու գաղափարաբուած իրենց եղբայրներուն եւ քոյրերուն հետ:

Դուք չատ լաւ գիտէք, որ ես ունիմ տարբեր համայնքներու պատկանող մեծ թիւով մտաւորական, արուեստագէտ եւ բանաստեղծ բարեկամներ, եւ ամէն անգամ, որ իրարու հանդիպելու առիթը ներկայացած է ինծի, միշտ ալ անոնցմէ բաժնուած եմ աւելի խոր հաւատքով, անպարտելի լաւատեսութեամբ եւ հոգեկան անդիմադրելի, բազմապատկուած ուժով:

●Այս բոլորը, անշուշտ, անուղղակի դրդապատճառներ են: Մենք կը կարծենք, որ աշխարհահայեացքի եւ ոճի այս փոփոխութեան ետին պէտք է զտնուին նաեւ մղիչ այլ զսպանակներ: Այս վայրկեանին պիտի չուզէինք արծարծել գունամտածողութեան եւ նաշխազարդումի յատկանիշները, որոնց կ'անդրադառնանք աւելի ուշ: Մենք շատ լաւ գիտենք, ինչպէս դուք ալ հաստատեցիք, որ ձեր պատատով կը գրէք Փոլ Կիրակոսեան հայ մարդուն կենսազրավէպին հատորները: Կարելի չէ իրարմէ անջատել ձեր կտրած արուեստի հանգրուանները, որոնք իրարու ազուցուած են շղթայի մը օղակներուն պէս: Մէկ ամբողջութիւն են անոնք: Ո՛չ մէկ կասկած այդ մասին: Ձեր գործերով դուք ո՛չ միայն կը հաղորդակցիք ձեր շրջապատին հետ, այլեւ կը փոխանցէք սիրոյ, եղբայրութեան, արդարութեան եւ զոհողութեան կառչելու, ըստ այնմ

digitised by A.R.A.R.@



Ասպետներու շքերթը

ապրիլու եւ ծառայելու պատգամը: Դուք միշտ ալ ըսած էք եւ կրկնած գանազան առիթներով, որ արուեստագէտը առաքեալ մըն է, համեստ ու խոնարհ ծառան մարդկութեան՝ յար եւ նման Քրիստոսի աշակերտներուն, որոնց նկարագրային առանձնայատկութիւններէն եւ վարքերէն բազելիք շատ դասեր ունինք: Այդ իսկ պատճառով, դուք միշտ ալ բարձր գնահատած էք կեցուածք ունեցող արուեստագէտը, յանձնառու մարդը արուեստագէտին մէջ եւ ձեր քուէն տուած էք պատգամ մը փոխանցող տագնապահար արուեստագէտներուն եւ նոյնիսկ անշահախնդիր, պարկեշտ ու ասուուածավախ մարդոց: Այս իրողութիւնը եւ յետոյ, ինչու չէ, նաեւ ձեր նկարագրի քիւրեղացումը պէտք չէ՞ տեսնել այս գարգացման ետին: Կեանքը իր ամբողջութեամբ պարագրկելու անզուսպ պահանջը, ներքին եռմանը գլխաւոր ազդակ մը չեզա՞ւ...

— Անշուշտ, եւ այն ալ՝ ինչպէ՞ս: Երբ սկսայ գծել, շուրջ քառասուն տարի առաջ, ես ամչկոտ երիտասարդ մըն էի: Նոյնիսկ չէի կրնար հաւատալ, թէ աղջկայ մը սիրոյն կրնամ արժանանալ: Եւ խեղպէս չհաւատացի, երբ նկատեցի, որ մեր դրացու հիին աղջիկը, Ժիւլիէթը, որուն դեռեւս դասեր կու տայի, անհուն սիրով մը կապուած է ինծի: Որովհետեւ նկարչութիւնը այդ օրերուն հաց չէր կերցներ եւ ով ինչ պիտի ըներ ամուսին մը, որ չոր հաց ապահովելու ի վիճակի չէր: Սիրահարութիւնս մեծ յոյսեր եւ հաւատք ներշնչեց ինծի. սկսայ աւելի խոր սիրով պաշտել մարդը, տառապեալ ու չքաւոր պարզ մարդը, թագեցիներու, որոնց հանդէպ ունեցած սէրս կրկնապատկուեցաւ, եռապատկուեցաւ, երբ ամուսնացայ եւ զաւակներու հայր դարձայ:

Յետոյ սկսաւ յաջողութեան ճամբան, կամաց-կամաց թօթափելի ամչկոտ, տակաւին մարդու տկարութիւնս, ձերբազատուեցայ երկչոտութենէս եւ հոգիս ամրապնդուեցաւ սիրոյ ու հաւատքի հուրով, պայքարելու եւ կեանքը նուաճելու վճռակամութեամբ: Եւ տարիներուն հետ՝ բազմացան նաեւ բարեկամներս, դուրս ելայ իմ նեղ շրջանակէս, գարձայ փնտռուած անուն մը, հայուն ու լիբանանցիին, արաբին ու ֆրանսացիին, ամերիկացիին ու ռուսին համար, մտայ արուեստի գանազան շրջանակներէ ներս ու հաստատեցի ինքզինքս: Եւ որովհետեւ նկարչութիւնը կեանքն է, կենդանութիւնն է, կառչեցայ մարդուն, ազնուագոյն մարդուն՝ մօր, բազմերանգ, մշտանորոգ, ամէն զգացում եւ ապրում արտայայտող կենդ մարմնին, երկիրն ու երկինքը իրարու կամրջող այս բացառիկ հարստութեան, կեանքի անփոխարինելի ակնաղբիւրին, որուն անհրաժեշտութիւնը զգաց նոյնիսկ Աստուած, երբ որոշեց իր որդին աշխարհ ղրկել մարդկութիւնը փրկելու համար:

Եւ կեանքն ու գեղեցիկը նկարելու համար, բազմերանգ ու բազմաձայն խորհուրդները փառաբանելու համար, ես սկսայ երփնագրել կնոջական մարմիններ, որոնք բազմացան ինքնաբերաբար,

digitised by A.R.A.R.@

երբ անգուսպ տարողութիւն ստացաւ կեանքը իր ամբողջութեամբ ապիտակ կաւին վրայ անշարժացնելու իմ հոգեկան տակնուվրայութիւնս, միակ ու գեղագոյն նպատակս։ Ահա, ինչպէս այսպէս, իմ անձնական խնդիրներուս տեսանկիւնէն բացուելով կեանքին՝ ես սկսայ հասկընալ աշխարհը, մարդկութեան անհատնում տագնապներն ու հարցերը, կեանքի, մահուան, ծնունդի, նուիրումի եւ անձնազոհութեան յաւիտենական հարցերը, եւ միաձուլուեցայ մարդուն, եղայ հայելին մարդկութեան եւ մարդիկն ու կեանքը՝ իմ ներաշխարհիս հայելին։ Վերջապէս, ի՞նչ է մեր կոչումը, արուեստագէտներուս պարտականութիւնը, եթէ ոչ օգնել մարդուն, որ ան աւելի խոր կերպով հասկնայ իր ներաշխարհը, տիրանայ իր հոգիին ազատութեան, որպէսզի խորաթափանց աշխարհահայեացքով կարդայ կեանքի բարդ, հակասական, զիրար խաչաձեւող ճշմարտութիւններն ու իմաստները։

Հաւանաբար հոս պէտք է փնտռել պատասխանը այն հարցումին, թէ ինչո՛ւ անցայ մարդկային խումբեր նկարելու հանգրուանին։ Որովհետեւ կեանքը իր ամբողջութեամբ պաստառին անշարժացնելու, այսինքն՝ պաստառը յաւելեալ լարուածութեամբ, համապարփակ արտայայտչականութեամբ եւ բազմաշերտ բովանդակութեամբ օժտելու համար ինծի կը մնար մէկ լուծում–ընթել մանրամասնութիւնները, մարդկայնացնել ամբողջ պաստառը՝ մարդկայնութեան գեղագոյն արտայայտչականութեան հասնելու համար։

●Մեր այս դարասկիզբէն ի վեր արուեստները ճանչցան արագընթաց զարգացում մը։ Գեղանկարչութեան բնականոն զարգացումը եւս, իր կարգին, ապրեցաւ անսպասելի վերիվայրումներ, երբ տատայիզմը, սիւրռեալիզմը, ֆովիզմը, գիւպիզմը, ապրսբրաֆ արթը, օպթիֆ արթը, անդիսիւրռեալիզմը եւ այլեւայլ դպրոցներ եկան հիմնովին շրջելու գեղանկարչութեան ընթացքն ու նուիրականացած աւանդները։

Պատերազմին եւ մարդու մեքենայացման, աւելի ճիշդ՝ նարտարարուեստի վրայ հիմնուած մեր օրերու քաղաքակրթութեան դէմ կատարուած այս ըմբոստութիւնը անշո՛ւշտ որ ունէր հոգեբանական եւ քաղաքակրթական լուրջ դրդապատճառներ։ Պատերազմներու արհաւիրքէն հարուածուած Արեւմուտքը կ'ապրէր մտատանջութեան, անորոշութեան, սարսափի եւ անհեթեթի խորագոյն տրամները։ Մարդիկ սկսած էին փնտռել փրկութեան լաստեր, դիմացկուն եւ անպարտելի լաստեր, ահաւոր փոթորիկէն խաղաղ քարափ հասնելու համար։ Այլ կերպ չէր կրնար ըլլալ կեանքի ընթացքը եւ, բնական է, որ արուեստները նաեւ կրէին արմատական փոփոխութիւններ։ Բայց այս փոփոխութիւնները զացին մինչեւ առաւելագոյն ծայրայեղութիւնները եւ հիմնովին շրջեցին արուեստի դարաւոր աւանդներն ու նուիրական ըմբռնումները՝ իրենց տեսաբանութիւններուն իսկ սահմանումով հակաարուեստը ըլլալու համար։

Անշուշտ, այս վերիվայրումները այս կամ այն համեմատութեամբ նաեւ ձեզ զբաղցուցին։ Անոնք ի՞նչ անդրադարձ ունեցան իր դիմագիծի փնտռտուքին լծուած երիտասարդ գեղանկարիչ Փոլ Կիրակոսեանի վրայ եւ որքանո՞վ լուսաւորեցին ձեր ուղին։

—Հաւանաբար զարմանալի թուի ոմանց, եթէ ըսեմ, թէ այս բոլորը ոչ մէկ չշոշափելի անդրադարձ ունեցան գործերուս վրայ եւ միաժամանակ դիս առին իրենց փոթորիկներուն մէջ՝ իրրեւ մտածող, տագնապող եւ կեանքը վերլուծելու ելած երիտասարդ նկարիչ։ Ես չէի կրնար լուռ մնալ եւ պաղ ջիղերով դիմաւորել այս բոլոր վերիվայրումները, մա՛նաւանդ եթէ նկատի ունենաք, որ ես երբ վրձինը ձեռքս առած կը փորձէի ինքզինքս արտայայտել՝ Փիքասոյի, Քանտինսքիի, սիւրռեալիզմի եւ միւս նորութիւններուն մասին գաղափար իսկ չունէի։ Այդ շրջանին, ես նորութիւններու մեծ սիրահար մըն էի եւ իւրաքանչիւր հանճարի հագիւ ծանօթացած՝ կ'ուզէի յաղթել անոր։ Անոնց կեանքի ուսանելի կենսագրութիւնը մա՛նաւանդ մեծապէս կ'անդրա-

digitised by A.R.A.R.@

Նմոյշ մը՝ «Ապրիլ 24» շարքէն

գառնաց վրան եւ իմ ամբողջ ձգտումս կ՚ըլլար ապրիլ Թաֆայէլի պէս, Վան կոկի պէս, Թամպրանտին նման հարուստ եւ խիզախ կեանք մը, կրակոտ ու մեծ յուզումներով յատկանշուած կեանք մը:

Առանց էին իմ ուսուցիչներս, գաւառական հսկաներ, իսկ Փիքասոյին, Թանարնաքին, Տալիին, Կորքիին, Էրնեսթին, Մուրին եւ ժամանակակից նորարար այլ արուեստագէտներու գործերուն ծանօթացայ աւելի ուշ, երբ հարցումներս գտած էին իրենց պատասխանները եւ ինձի համար յստակ էր իմ ուղիս: Ես ի՞նչ պատճառ ունէի Արեւմուտքի նկարչութիւնը երկնելու, երբ նոյնինքն Արեւմուտքը ինքզինք թարմացուցած էր արեւելեան նկարչութեամբ, ընդօրինակելով Արեւելքի եւ Աֆրիկէի փրիմիթիւ նկարիչներուն գործերը, ճափոնական նկարչութիւնը, պարսկական ու արեւելեան գորգերուն դուռնամածողութիւնը, փիւնիկեան, բարելոնեան, եգիպտական, չինական ու հնդկական գաւառաւոր քանդակներն ու բիւզանդական արուեստը, պարզ խօսքով՝ մեր դարաւոր քաղաքակրթութեան կեղեքը միայն: Այս, ընդօրինակելով միայն տեսանելին եւ խեղաթիւրելով անտեսանելին՝ խորքն ու հոգին, աշխարհահայեացքն ու իւրայատուկ այն արտայայտութիւնները, որոնք Արեւելքի արեւէն, հովէն, փոթորիկէն ու բնութեան մէն մի տարրէն ծնած են: Որովհետեւ արեւմուտքցի արուեստագէտը մեր քաղաքակրթութիւնը կը կարդար արեւելագէտի, ըսել կ՚ուզեմ՝ ուսումի ճամբով գիտութիւններ ամբարած հետաքրքիր եւ բանիմաց տարբերակի աչքերով, մինչդեռ Արեւելքի մէջ ծնած նոյնիսկ տկար թեքնիքով նկարիչը, նոյնիսկ ինքնուս եւ ժողովրդական գծողը կը կարդար անոր հոգին, լուութիւնը, կ՚ապրէր այդ գործերուն մէջ ամփոփուած խորհուրդները եւ այ թէ կը հիանար ու ափիրեան կը մնար՝ ի տես չքնաղ սրբանկարի մը կամ որմնանկարի մը գոյներուն, հարթաքանդակի մը ձեւոյթներու կամ ծաւալներու յարաբերութեան սրճնքին:

●Այս բոլորը ցիշդ ըլլալով հանդերձ, նաեւ նոյնքան ճիշդ է, որ մեր գործերը եւ նոյնիսկ մեր հիմնած իւրայատուկ ուղին շատ բան կը պարտին Արեւմուտքին: Արտայայտչապաշտ դպրոցը Արեւմուտքի նկարիչները հիմնեցին ու զարգացուցին, Արեւելքի նկարչական կարգ մը աւանդները իւրացնելէ ետք: Բայց իր խորքով եւ էութեամբ արտայայտչապաշտութիւնը արեւմտեան դպրոց մըն է եւ բնական ու հարազատ մէկ հանգրուանն է Արեւմուտքի նկարչութեան դարաւոր հոլովոյթին: Յետոյ, մեր վրձնահարուածը, դիմանկարներուն մէջ բացայայտուող դասականութիւնն ու նիւթը մշակելու եղանակը հիմնուած են արեւմտեան դասական աւանդներու վրայ, իսկ վերացապաշտութեամբ յագեցած մեր իւղաներկ պատատառները իրենց յանդգնութիւնը մասամբ Արեւմուտքին կը պարտին: Ըսել կ՚ուզեմ՝ եթէ արեւմուտքցի կարգ մը արուեստագէտներ այսքան ծայրայեղ չըլլային, այսինքն՝ դասականութենէն անդին անցնելու, հակա-արտ-*

digitised by A.R.A.R.@

ւեստը յայտնագործելու խենթութիւններ եթէ չընէին՝ Արեւելքի նկարիչներն ու դուք պիտի չարձագանգէիք անոնց, որովհետեւ Արեւելքի նոյնիսկ փրիմիթիւ գործերը հիմնուած են տեսողական զգայարանքի եւ նշգրիտ համաչափութիւններու օրէնքին վրայ:

— Կը հասկնամ ձեզ: Ճշմարտութեան մեծ բաժին մը կայ ձեր ըսածին մէջ, բայց բացարձակ ճշմարտութիւն չէ, որովհետեւ ամբողջական ճշմարտութիւն գոյութիւն չունի արուեստին մէջ: Կրնար եւ հակառակը պատահիլ՝ յար եւ նման հին դարերուն, երբ Արուեստը գլուխ-գործոցներ կը ճանչնար Արեւելքի մէջ, մինչ Արեւմուտքը կ'ապրէր նախամարդու ժամանակաշրջանը:

Իմ համոզումովս՝ հարցը այս բոլորէն շատ անդին կը գտնուի: Փոխադրեցութիւններ՝ բոլոր դարերն ալ ճանչցած են փոխադարձ ազդեցութիւններ, առանց որոնց կարելի չէ ապրիլ: Արուեստներուն համար թթուածին են անոնք, միաբջիջ եւ տեսադաշտը ընդարձակող, աշխարհընկալումդ հարստացնող, ազնուացնող նախապայմաններ: Իսկանը՝ օրինակը չկրկնելն է, այլ՝ դայն իւրացնելը, սեփականացնելը, կարելի՞է ըսել՝ անհատականացնելը, զայն քու ներկապնակիդ մէկ հարազատ եւ կենդանի գոյնը դարձնելու հմտութիւնը, վարպետութիւնը:

Այս իմաստով՝ ես օգտուած եմ արուեստի բոլոր շարժումներէն ու դպրոցներէն, որովհետեւ լուսնի վրայ չեմ ապրիր եւ բոլոր ժամանակներու բոլո՛ր արուեստները իմս են, որքան հայկական խաչքարն ու մանրանկարչութիւնը, որքան բարելոնեան ու փիւնիկեան հարթաքանդակները, որքան պարսկական գորգարուեստը, որքան հնդկական գրականութիւնը, կարճ խօսքով՝ իմս են բոլոր ժամանակներու արուեստի բոլո՛ր սեռերու արտայայտութիւնները, որովհետեւ ես առանց պարարտ հողին մէկ նոր ծիլն եմ եւ արմատներս չեմ կրնար նետել օդին մէջ: Նոյնպէս, իմս են սիւրռեալիզմը, գիւսիզմը, ֆուվիզմը, ապոթրաքթ արթը եւ բոլոր շարժումներն ու խնդիրները: Ես չեմ ուրացած եւ չեմ ուրանար զանոնք: Սակայն չեմ կրնար նաեւ լուռ մնալ եւ ձեռքերս ծալած նստիլ, երբ ֆուվիզմի, անդիսմպոլիզմի կամ այլ անունի մը տակ մարդիկ կը շահագործեն արուեստը, կը ջանան հրապարակը ողողել ապեգութիւններով, մարդուն հոգին մութ ու ազատա զգացումներով խնողող ազատութիւններով...

Արուեստը նման գիւտեր չի կրնար հանդուրժել, որքան ալ այս միջին տարին կեցած բլլան կազմակերպուած ուժեր թէ միջազգայինի կառոյց մը՝ իր բոլոր միջոցներով ու տեղական մաֆիաներով: Ի՛նչ մաքառանիզները մեծապէս օգտուեցան չափերու եւ օրէնքներու խախտումներէն՝ արուեստի քողին ներքեւ հետապնդելով այլ մութ հաշիւներ,— մարդուն ապաքաղաքակրթացումը, անառնացումը, մարդուն բանականութեան եւ մարդկային զգացումներուն սպանդը:

Մեր օրերու սիւրռեալիստ նկարիչներուն գործերը ժամանակաւոր կեանք մը ունին. այդ թապլոները մեծաւ մասամբ ծրագրուած զարմանքի խաղը կը խաղան, այսինքն՝ դիտողը զարմացնելու համար գծուած կէս-երազային եւ կէս-երեւակայական արտակարգ գործեր են, որոնք պահ մը զարմացնելէ հետ անմիջապէս կը հիննան, իրենց հետաքրքրութիւնը կը կորսնցնեն, բան մը չի մնար իրենցմէ, մինչ միւսները, բուն սիւրռեալիստները, ինչպէս օրինակ Նարեկացին, Թամպոն, Ժերոմ Պոշը, ո՛րքան կարդաս, ո՛րքան դիտես՝ ա՛յնքան աւելի կը խորանաս: Որովհետեւ անոնք գրամ շահելու համար սիւրռեալիստ չեղան, իրենք այդպէս ծնած էին, այդպէս կ'ապրէին: Այսո՞ր, արուեստները հովանաւորող տեսանելի եւ անտեսանելի ուժերը,— կայսրիները, արդի արուեստի թանգարանները, մեծ ընկերութիւնները, պանկերը եւ քարոզչութեան բիմերը ամէն օր հարիւր հատ սիւրռեալիստ նկարիչ կրնան հնարել. փա՞ստ՝ քանի՞ հազար սիւրռեալիստ նկարիչ կայ հիմա, Ֆրանսայի եւ աշխարհի բոլոր երիտասարդ նկարիչները շրջան մը միմիայն, սիւրռեալիզմը, գիւսիզմը եւ միւս իզմերը ընդօրինակեցին: Ինչո՞ւ: Որովհետեւ մոտան սիւրռեալիզմն էր, ոչ թէ որովհետեւ իրենք այդպէս ծնած էին. մինչդեռ, Նարեկացիին կամ Պոշին հա-

digitised by A.R.A.R.@

«Մեծարանք՝ Արայիին»

... Եւ «Ոգը» իւղանկարները

մար կեանքը ահաւոր պայքար մըն էր, հոգեկան պատերազմ մը եւ ոչ թէ շինծու երազ մը: Միւրեալիստնե՞ր... միմիայն կ'երազեն. երազողն ալ, չերազողն ալ սկսաւ երազել եւ, եթէ կ'ուզես՝ բոլորն ալ իրարու պէս, ապուշ ու կեղծ երազներ, մարմինին վրայ դատարկ գաբակներ կը բանան, լեզուն օձի պէս կ'երկարեն, վրան մրջիւններ ու ասրդ եւ հեայլն, հեայլն:

● Ամոնց գործածած խորհրդանշանե՞րն են, որ նեղութիւն կը պատճառեն ձեզի: Ճիշդ է, որ Սալվատոր Տալիի պատառներով լայն տարածում գտան բազմաթիւ խորհրդանշաններ, ինչպէս՝ հաւկիթը, մրջիւնը, սարդոստայնը, ձուկը, ոստրէն, խեղանդամուած մարմինը, ժամացոյցը, առասպելական էակները, սակայն Տալին ամոնցմով կ'արտայայտէր ծնունդի, լինելութեան, արարչութեան եւ մահուան հետ առընչուող տիեզերական խնդիրներ: Կարելի չէ անտեսել նաեւ այս պարագան ու մանաւանդ ա՛յն իրողութիւնը, որ Սալվատոր Տալիի երեւակայածին կարծրուած պատառները ունին իրենց իրապաշտ հէնքը, մեզի ծանօթ կեանքն ու բնութենէն վերցուած առանցքային տարրեր, որոնք կու գան Սպանիայէն, իր ծննդավայրի ժայռերէն, բնութենէն, եւ որոնց շնորհիւ իր պատառները կը խարսխուին հաստատ ենթահողի մը վրայ, իսկ խորհրդանշանները կը ստանան կրկնակի հնչեղութիւն, բազմաբնոյթ բովանդակութիւն...

— Ասոնք բոլորն ալ երազային թատրոնն են: Ես լաւ կը հասկնամ Տալին, կը յարգեմ իր դպրոցն ու խորհրդանշանները, գլխարկ կը հանեմ անոր արուեստին կատարելութեան առջեւ, բայց չեմ կրնար ըմբռնել, թէ մէկ որէն միւսը մարդիկ ինչպէ՞ս կրնան տեսնել նոյն երազները, մտածել նո՛յն ձեւով, բայց մա՞նաւանդ՝ իրենց մտածումներն ու ապրումները արտայայտել միեւնոյն սեմպոլներով, միեւնոյն ոճով եւ միեւնոյն թեքնիքով: Ես մերժելով կը մերժեմ արուեստը շահագործող այս խարեբայութիւնը, որովհետեւ կրկնութիւնը այլ բան չէ, եթէ ոչ արուեստին ուրացումը:

Անշուշտ, ես շատ լաւ գիտեմ, թէ ընդօրինակութիւնը որքան բարերար դեր կը խաղայ սկսնակ նկարիչին կազմաւորման եւ հաստատացման մէջ: Առաջին հերթին, կը մարդէ անոր աչքը, յետոյ՝ ձեռքը, սիրտը, միտքը, այսինքն՝ կ'ազնուացնէ, կը կրթէ զանոնք՝ բառին գեղագիտական եւ

digitised by A.R.A.R.@

«Գեղեցիկ եմ, սիրուհիս»

«... Երբ կը շրջի քաղաքին մէջ»

բարոյական ամբողջական առումով: Ահա թէ ինչու ինձմէ խորհուրդ պահանջող ակնակալ գծագրիչներուն ես միշտ կ'ըսեմ. «Դիտեցէք ձեր շուրջը, թափանցեցէք իրերուն եւ կացութիւններուն խորքը եւ նկարեցէք բնութիւնն ու կեանքը, որպէսզի դուք ձեզ գտնէք»:

Վերջապէս, մարդն է առանցքը արուեստին: Եւ ինչ որ կը մնայ այսօր նկարչութեան մէջ՝ իրրեւ արուեստի գլուխգործոց եւ հոգեկան ու իմացական արժէք, արուեստի այն գործերն են, որոնք մարդը անմահացուցած են ամենապարզ վիճակներու մէջ, պատկերացուցած են մարդուն ամենանուրբ եւ գողտրիկ ապրումները,— սիրոյ, աշխատանքի, ծնունդի, մահուան, հաւատքի եւ յաղթանակի բոլորիս ծանօթ, բայց միշտ անծանօթ տրամները:

● Քսաներորդ դարու մարդուն տագնապներուն եւ տուայտանքներուն անդրադարձող արաթերէն գրուածոյ մը մէջ, կատարած էի սա բնորոշ մատնանշումը. «Ցնուսահատութիւնը մեր մէջն է, արուեստագէտը միշտ ալ կը կասկածի իր կարելիութիւններուն վրայ, եւ ասիկա ստեղծագործութեան տագնապն է, արարչագործութեան տագնապը, եւ միեւնոյն ատեն՝ մահուան ու լինելութեան տագնապը»:

Ուրեմն, դուք կ'ուզէք հաստատել, որ արուեստը կրնայ հիմնովին էապոխել նոյնիսկ ժխտական ուժերը, օրինակ, յուսահատութիւնը, կասկածը, հոգեփլուզումը, յուսահատութենէն անցնիլ լինելութեան կասկածին, ապա՝ կրնայ բարձրանալ ստեղծագործութեան փառատօնին, որովհետեւ, ձեր իսկ համոզումով, արուեստը յայտնագործող տագնապ մըն է: Ձիշդ հասկցա՞ծ եմ ձեզ...

— Այո: Արուեստագէտը մնայուն տագնապն է, որովհետեւ երբ իրր մարդ ան կը տեսնէ մարդուն հակամարդկային դաւերն ու արարքները, երբ կը տեսնէ ժանտաբոյ օրէնքներն տիրական ներկայութիւնը՝ ամենահամեստ մարդուն ամենապարզ շարուածներէն մինչեւ ամենապատասխանատու մարդոց գազանային արարքները, անկասկած, արուեստագէտը կ'ապրի ահաւոր տագնապ մը եւ կը պոռթկայ ո՛չ միայն մարդուն, այլեւ՝ երբեմն նոյնիսկ բնութեան տարերքին դէմ: Կը պոռթկայ, որովհետեւ ճշմարիտ արուեստագէտը կ'ապրի ահաւոր տագնապ մը եւ կը պոռթկայ ո՛չ միայն մարդուն, այլեւ՝ երբեմն նոյնիսկ բնութեան տարերքին դէմ: Կը պոռթկայ, որովհետեւ ճշմարիտ ար-

digitised by A.R.A.R.@

ուսումնասիրելու, որ նամբոյ կ'երթայ իր հոգիին մէջի յուսահատութիւնն ու վախը վանելու յեղափոխական մեկնակետէ, չի կրնար հանդուրժել ո՛չ անօթութիւնը, ո՛չ պատերազմը, ո՛չ աւերումները եւ ոչ ալ մահը։ Տակաւին, նոյնիսկ հիւանդութիւնը, որ բնական բան մը է, իրեն զարմանք կը պատճառէ, որովհետեւ ան չ'ուզեր մանուկ մը տեսնել գալկագէմ ու տխուր վիճակի մէջ, չի կրնար ըմբռնել, որ կեանքը նաեւ սեւ գոյնը ունի, կայ անօթութիւն եւ մահ եւ, այդ իսկ պատճառով՝ կը կեդրոնանայ լոյսին վրայ ու կը գծէ մթմթայն լոյսը, երբ գոյներու կամ գիծերու լեզուով կը մչակէ նոյնիսկ ամէնէն ողբերգական ու մութ նիւթերը։

● Գուֆ քաղաքի բնակիչ էր։ Ծնած ու մեծցած էր քաղաքներու մէջ եւ ազդուած՝ ձեր քաղաքային միջավայրէն։ Արդեօք այս պարագայի՞ն պէտք է վերազրել շէնքերու ամշարժութիւնը եւ խնդումը յիշեցնող ձեր պատատեսներուն ներքին բացայայտ խնդումը, իրարու փակած մարդկային խումբերը, որ նաեւ սարսափահար հաւաքականութիւններու ամձկութիւնը կը դրսեւորեն, հակառակ անոր, որ հագած են գուարթ զգեստներ, հայկական եւ քրտական տարազներու եւ արեւելեան կերպասներու աչքառու գոյներն ու նաշխերը։

— Ձիւղ ըսիր։ Վերջին շրջանին, ես էապէս գրաւուած եմ արեւելեան փոլիֆոնիով, բայց մանաւանդ՝ հայկական գորգաբուեստով եւ տարազներով։ Տեսէք, որքա՜ն կեանք եւ աշխուժութիւն կայ այդ նաշխերուն ու գոյներուն մէջ, տրոփող ու վարակիչ կենդանութիւն, որ յատուկ չունչով հաբաստացուց իմ վերջին շրջանի խմբանկարներս։

Առաջին ակնարկով անշարժ, ամուր ոճք ունեցող այդ խմբանկարները եթէ երբեմն կ'արտայատեն մերօրեայ պէրութիւնի տագնապն ու ապրափը, իրարու կառչելու, իրարմով գօսնկանալու հաւաքականութիւններուն ցեղային թէ մարդկային ազնիւ զգացումները, միւս կողմէ՝ անոնք կ'երգեն կեանքն ու ծնունդը, յարութիւնն ու երջանկութիւնը, բնութիւնն ու ողջ տիեզերքը, որովհետեւ սեփական հարցերէ մեկնելով՝ ես կեանքն ու աշխարհը խտացուցած եմ այդ պատատեսներուն մէջ։ Այդ պատատեսներուն մէջ փնտռեցէք գարունը եւ անապատի պիտի գտնէք, փնտռեցէք յոյսի, սիրոյ եւ հաւատքի յաղթանակը եւ անիկա պիտի խօսի ձեզի հայերէն գոյներով եւ հայու զգայարանքով։ Որովհետեւ ես անոնց մէջ նկարած եմ մարդու հոգիին գարունը, հոգիին հարատեւութիւնը, հոգիին ծաղիկներն ու զգացումներուն գաղտնիկները։ Այդ իսկ պատճառով, անոնք բազմիմաստ գործեր են, կ'արտայայտեն կեանքի հակասութիւնները, տարբերտարբեր զգացումներ եւ ունին համընդհանուր, բազմահնչիւն ու բազմաբանգ արտայայտչականութիւն՝ յար եւ նման երաժշտական բոլոր գործիքներով երաժշտական կտորներ մեկնաբանող սիմֆոնիք նուագախումբերու զգլխիկ կատարումներուն։

Ահա թէ ինչու ես չէ, որ կը բացայայտեմ ու կը մեկնաբանեմ գիրքերս, այլ այդ գործերն են, որ էութիւնս լոյսին կը պարզեն։ Որովհետեւ ճշմարիտ արուեստը աւելի զօրաւոր, աւելի վեհ, աւելի բարձր եւ կատարեալ է, քան բոլոր արուեստագէտները։ Արուեստը ամենակարող ու հրաշազօր այն ուժն է, որ արթուն կը պահէ մեզ՝ ապահովելով կենդանի թթուածին է՛ մեր հոգիին, է՛ մեր մտքին համար։ Արուեստը կորիզն ու առանցքն է նոյնիսկ գիտութեան բոլոր հիւղերուն, ներկայ ու գալիք գիտական բոլոր գիւտերուն, նոյնիսկ վազուան գիտութիւններուն, որովհետեւ անիկա կեանքին կենդանաշունչ լուսաղբիւրն է, որ արեւու լոյսին մշտանոլոգ ճառագայթներուն պէս կու տայ անուանդ ու աւիւն մեր երակներուն, երազ ու տենչիլք՝ մեր ներքին լարերուն, կը պահպանէ ու կը պաշտպանէ մեր հոգիին եւ մտքին լոյսերը, յուսակերտ արժէքներն ու գանձերը, եւ կը լուսաւորէ մարդկութեան անցեալը, ներկան ու ապագան։

Հարցազրոյցը վարեց՝
- ՅԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Շար. 3. եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

Յ. ՕՇԱԿԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ն. ՍԱՐԱՖԵԱՆԻՆ

…… * * ……

ԺԳ.

6 Սեպտ. 946
Երուսաղէմ.

Սիրելի Նիկոլ,

13 Օգոստոսի նամակդ հիմա առի: Թէեւ կը գրես, որ պատասխանի չես սպասեր, եւ աչք կ'առնեմ գրելիքներուս պատասխանատուութիւնը: Պիտի կարդաս:

Ա– Ունիմ գիրդ առնին գրուած, ուր կ'ըսես, թէ «գիտակ, որ պիտի սիրէիր «Անչրպետի մը գրաւումը», որով քու վերագրումդ, թէ 20 տարիէ ի վեր բերանս չեմ առած Ա.Գ.ը ինքնին կը հերքուի: Կ'երեւի նամակները քեզի ուղղուած կրակի կու տան:

Բ– Միջնաբերդէն իմ վերլուծած կարծս պատահական էր: Անչուշտ որ անսրբագրելի կերպով վարժապետ եմ քեզի: Պիտի անդրադառնաս բառերուդ ձգած ներքին (քառ մը պակաս) ուրիշի մը վրայ: Ու ատիկա պիտի առաջնորդէ քեզի իրաւ բառին:

Գ– Կը գանդատիս, որ չեմ սահմանած իրաւ բանաստեղծութիւնը, երբ արդէն ըսած եմ, որ ատիկա անսահմանելի է: Հիմա Միջնաբերդը իրաւ կ'ըլլար, եթէ երբեք իր արտայայտութեան մէջ այս թերիները խնայուէին: Սքանչելի այդ խորքդ էր, որ չկրցար ընդմիշտ մոռացումի դատապարտել յիշատակդ: Ուրեմն ինչ որ կը հասկնամ իրաւ բանաստեղծութենէն, իմացիր զայն կարդալու անքը քու հոգիիդ: Գտիր այդ կտորներու վայել զգեստ: Ու եւ կ'իջնեմ երկես իրաւ բանաստեղծ մը ողջունելու: Աւելի պարզելով իմ տագնապը,– չեմ հանդուրժեր ոչ մէկ խախուտ բառ, զոր կրնանք ուրիշով մը փոխարինել: Չեմ հանդուրժեր ոչ մէկ հասարակ, ներկուած, փչուած սուտ վիճակ, որոնցմէ յղփանալու չափ կուշտ ենք:

Դ– Սիալ կ'ընես Վարուժաններու եւ Թէքէեաններու վրիպած կտորները օգնութեանդ կանչելով: Անոնք ուրիշ սերունդի մարդեր էին: Դուն ուրիշ: Պիտի սաս քու սերունդդ, իր բոլոր դաժանութեամբը, թշուառութեամբը, իրաւութեամբը: Ու ատոր համար բոլոր միջոցները, քու բառերդ ……[1] ունին: Քեզ սեպնեմ: Վարուժանին մեղքերը իր ժամանակինն են: Դուն որեւէ ժամանակի չպատկանելու դժբախտութիւնը պիտի վերածես արժանիքի: Ներէ որ աչակերտի խօսացի պէս խօսիմ: Դեռ չեմ հաշտուած քառասուներ անցած բյլալու դ:

digitised by A.R.A.R.@

Ե— Այս նամակը այսքան արագ քեզի գրելու մղողը վէպիդ ակնարկութիւնն է։ Եթէ իրաւ է, որ յաջողած ես ապայ Փարիզը, այն առանձն ես իմ մէջ կը զգամ պարտքիս ու հպարտութիւն։ Իշխանուհին, Ղուկաս Այպանելին վրիպանք էին ու մինչեւ այսօր չեմ հասկցած թէ ինչու։ Իմ ապաւորութիւնս այն էր, որ ձեւի նուազուն մեռելը քեզ չեն նեղեր։ Ուրիշ է հիմա ապառնալիքդ։ Կը վախնամ, որ գայթակղութիւն շահագործողի դեր մը պիտի տան քեզի վէպիդ մէջ, ինչպէս բրած է Շերվանզադէ Արսէն Դիմաֆոնանին մէջ։ Արդ, Շերվանզադէի ամէնէն շատ մեռած վէպն է ասիկա, թէեւ աղմուկ հանեց այնքան. պարզապէս գայթակղութեան սիրոյն։ Արտաս տալու չեմ յաւակներիս։ Իրական տիպարները պարտաւոր որ ես անհանդուրժելի ընծայել, այսինքն՝ այնքան խորացնել անոնց հոգին, այնքան ընդլայնել անոնց մեղքերը, որ մոռնայ չանցընեն այդ դժբախտները արժանանալ այդ փառքին։ Ատոր համար ո՞ւժ։ Կը կասկածիմ։ Ամէն պարագայի դիտցիր, թէ թշնամիներ շահելու համար առաջնակարգ այդ յատկութիւնը կը վնասէ գրականութեանդ։ Նայէ որ թափանցիկութիւնը չվարէ գրիչդ։ Մենք կ'անցնինք։ Ու մենք եւ մեր տիպարներուն վաւերագրութիւնն ալ կը մեռնի։ Կը մնայ կնիքը, որ մեզմէ վեր էր, ինչպէս տիպարէն ալ վեր։ Քեզի խրատ տալու չափ չեմ առաջ երթար։ Օշական գրականութիւնը ունէր տրամադրութեանը տակ։ Գրէ ինծի, թէ ամբողջացուցա՞ծ ես։ Քանի՞ էջնոց գործ է։ Ո՞րն է հիմնական թեման։

Զ— Որբուներին անուն ես խառներ։ Ինծի ղրկած էին ժողովուրդ թերթին թիւը, ուր Ռմբուճի կեղծանունով մէկը կը յարձակէր Օշականի յոբելիանին վրայ։ Ուրիշ մը ալ, բոլորովին տարբեր մէկը Որբուներէն, կը կասկածէր, թէ դուն էիր հեղինակը յօդուածին։ Ես չկարդացի անշուշտ, ինչպէս քեզի գրեցի օրին, ...[1] վերջը տարփակ դանելուս ոճը։ Դուն հայհոյած առնող արուեստի կ'ելլես։ Բայց մտածեցի պահ մը, որ դիտմամբ կրնայիր դուեհկանալ, լաւ ծածկուելու համար։ Հիմա ուրախ եմ, որ դուն չես հեղինակը այդ Փարիզէն խակ «անարգ» որակուած յօդուածին։

Է— Թէեւ նամակդ յուսահատութիւն կը բուրէ, գիրդ կ'ըսէ բոլորովին հակառակը։ Դուն հիւանդ խակ չես։ Գիրէ կը հասկնամ քիչ մը։ Ու ահա իմ թեւլադրանքները.

ա) Հաւատալ ոչ թէ ըրածիդ (բոլորս ալ լաւ կ'ընենք մեր ըրածին երբեք չմտածելով), այլ՝ ընելիքիդ։ Թէ ինչո՞ւ։ Փաստը կ'առնեմ գիրքդ, որ պինդ, առողջ, չյոգնող, ծանր, ուղիղ ու հաստատ է իր չէնքին մէջ։ Ու գիրը միաքն է մարդուն, սիրտը ըլլալէ առաջ։ Այդ աշխատանքի կարողութիւնը քեզի վահան է բոլոր փորձանքներուն դէմ։ Ու կ'ուզեմ որ պաշտամունքի մաս ընես այս վերագրումս։

բ) Կորով կայ նաեւ կիրքերուդ մէջ։ Թուլիկ-մուլիկ նիկոլը, յաւերուն ամէնէն խորունկէն անցնելէ վերջը չէ որ կարծրացած է։ Գիրը նոյնն է կեղրոնականին օրերէն։ Հետեւաբար նիկոլը պիտի գտնէ իր արժանի իրապործումը։

գ) Զգայնութիւնդ կը պահէ բոլոր թարմութիւնը։ Ցաւերը երբեմն աղբի կը նմանին. մեր հոգին կը սնուցանեն։

դ) Ազատագրուած է գրեթէ մթոքդ. թէեւ Փարիզին բարիքը ամբողջ չեմ զգար հոն, բայց ուրախ եմ, որ յաւակնոտ ու տափակ չես եղած։

ե) Քու յաւակնութիւնը մի վերածեր բառարանի իմաստի մը։ Օշականի գրչին տակ անիկա ճիշդ այն է, զոր .....[2] ես տրդէն։ Կրնայի հաւատալ ալ գրել։ Բայց....[3] են հոգեկան վրիպանքներդ։ Հաստատ միաքը անարգար չի կրնար ըլլալ ամէնէն առաջ ինքը իրեն դէմ։ Անշուշտ ամէն բան քիթին չգնող հոհոնը չես։ Բայց քեզի եղած Ց.Գ. նամակը փակելու առեն եկար այչքիս։ Ով գիտէ ինչ լեցուած ես կեանքին դէմ։ Երկրորդ նամակի մը նիւթն է ասիկա։ Գիտի ուզէի

digitised by A.R.A.R.@

քեզ չիշեցնել, թէ երբեք ուրիշ կիրպ չես եղած կեանքին գէմ, նոյնիսկ փոր-ձանքներէդ առաջ: Զուարթնոցի կտորը, նամակդ արձակէդ լու վկայու-թիւններ են: Գորովով անցիր Վէպիդ ու դրէ, ոչ անշուշտ վարդի ջուր սրսկելու համար մասնաւորներու կեղծիքին, այլ գիտլով, այլ իրապէս տառապելով մարդոց տկարութեանց վրայ: Եթէ տաղանդ չունենայիր, պիտի չըսէի, որ չրջանակ մարէ: Մենք, տղաս, տաղանդը պատժելու այդ ինքնասիպ ձեւը որ-գեղրած ենք:

Հայածանքն ալ հեղինակելու մէջ քիչ չէ բաժինդ, ինչպէս գիտես, թէ ինչպէս, թէ նման է իմ ալ պարագաս քու կիրեդ: Սեւ ամպդու թեան մասիկ մը կայ նամակիդ մէջ, շրջապատէդ, ընկերներէդ, ուխտարէն, կեանքէն անհուն գառնութեամբ լեցուած: Երբէ բաժակը՝ տակէն կ'ելլէ... Օշականը: Դուն նոր կը մտածես ինքնասպանութեան: Ես մտածեր եմ կայ յիսուն տարի, ապա՞ս: Ու իմ մեղքը պարզեր եմ... իմ յիսուն հատորներուն: Զիս չմեղցնողը, մահուընէ ետ տանողը աշխատանքն է: Հիմա հերոսութիւն չեմ ծախեր, երբ քեզ ալ առաջարկեմ նոյն գործանը: Մինչեւ Միջնաբերդ քու սերունդդ մի-քիներն մէջ ցայտուն գիծ մըն էիր, քիչ, գէշ, թեթեւ մրաք մը: Միջնաբերդը չի հերքեր քու տաղանդը: Բայց կը որոշուի: Ինչ որ պակսեցաւ մեր սերունդին,-իր ըրածին վրայ հաւատքն էր: Զեր բոլոր չարմեղանքները կրնամ ընդունիլ ու ներել մեզի, քանի որ այդ չարմեղանքներէն վեր պիտի ըլլար իմը, գործը: Գար-տաւոր ես մեղմանալ: Մատնել չրջանակի, ոչ տանոց նմանելու, այլ ինքզինքդ ըլլալու համար: Հայլիները յիմարութիւններ չեն: Քեզ գտնելու համար չու-նիմ բաւարար տուեալներ: Բայց ահա մտածումիս ամէնէն գաղտնի մասը: — Պիտի ուզէի, որ իմ մեղքերս ու արժանիքներս, քու մէջդ քեզի համար, քու կող ըլլային: Թէ ինչո՞ւ: Ինչ ալ ըլլան իմ թափանցումի չափերը, այլեւս Սփիւռքը փախած է ինծմէ: Ըսել կ'ուզեմ՝ զայն նուաճելու, վերկրու մէջ սեւեռելու հնարաւորութիւնը դրեթէ անկարելի դարձած, հիւանդութեան պատճառով: Այս տրամ. գիտակցութեան անդրադարձը՝ ահա իմ փափաքը: Հրանդը լու գիրք մը գրեց: Շահնուրը ուրիշ մը: .....[5] ուրիշ մը: Ասենը եկած է, որ Նիկոլը դրէ իր գիրքը: Իր ձեւով: Ահա յաւակնութեան բուն տարողութիւնը:

Թ— Կ'ակնարկես Սիւնեցիին իրր վրիպանք: Ու չես մտածեր, որ թատ-բական բանաստեղծութիւնը լիրիզմ չի կրնար հոտիլ: Արձակ կամ ոտանաւոր, էականը հոն լեզուն չէ: Այլ կիրքերը: Ափիմ կտորի մը մէջ մշակումը, խստու-թիւնը բառերու դէմ օրէնք: Թատրոնը չի կրնար բիւրեղանալ:

Ժ— Իմ Սասունցի Դաւիթը չէ մշակուած: Առած եմ հեքիաթէն քանի մը գրուագ ազգ համար, որպէսզի ներկայացնեն: Մաքիս մէջ ունիմ իրաւը: Բայց թատերականէն յանախուելը դժբախտութիւն է: Սասունցի Դաւիթէն պոեմա չ'ելլեր, ինչպէս փորձած է Թումանեան: Մինեմա, պալէ, օրգեսթրա, բալեղ բեմերու տեքստ: Առաջ ասենք. վերջը՝ .....[6]: Ցեռոյ պարտաւոր եմ հիմնովին նորոգել ամբողջ տիպարները, պահել միայն հեքիաթին .....[7]: Երեքս աշխա-տանքի դորձ է: Հայեցիութիւնը պահել կրնալու դժուարութիւնն ալ յաւելեալ տագնապ: Լաւ է չիսօսիլ չեղած գործերու մասին:

ԺԱ— Քու սերունդդ ծանր ու սեւ կը գտնես: Տաղանդը չէ հեղինակը, որ Շահնուրները ըլլան չատախօս: Այլ՝ մեր դժբախտութիւնը: Իմ նամակը կը լրանայ: Երբ կարդը կու գայ խօսելու այդ սերունդէն: Կ'անցնիմ, ցաւերս չնորոգելու համար:

ԺԲ— Գիտեմ, թէ չատ քիչ, գէշ կարդացուած հեղինակն եմ: Բայց ինչ արած: Ճակատագրին դէմ չեմ ելլեր: Կը հաւատամ իմ գործին նախ, ըսի վերը, ինծի ըրած բարիքին համար, գիս կեանքին կապելուն, երկրորդաբար բարի-քին, որ այդ գործը կանչուած է ըլլալու, երբ յիսուն տարի մը անցնի ու ազատ մարդեր հետաքրքրութեամբ, քիչ մըն ալ իրաւին նախանձախնդիր խաւնչար-

digitised by A.R.A.R.@

կէին սփիւռքեան թղթեղէնը, ինչպէս ես ըրի երեք սերունդի համար: Այն ատեն պիտի գտնեն, որ Օշականէն վէպ մը բարիք մրն էր:

ԺԳ— Քեզի հետ չեմ, երբ կը գրես, թէ մեր բանաստեղծութեան հորիզոնը յայնցուցիր: Միջնաբերդը սիրեցի ոչ իր թեքնիքին, ոչ իր նորութեան, ոչ ալ իր անկատարութեանց համար, այլ վասնզի սպասնած էիր հոետորութիւնը: Բայց կատարուածը փոխուածը մոխիրնոցն է կ'ըսեն: Երկու պոեմաներդ հակադրաբար հոետորականութեան կրնային ազատագրուիլ: Ու եթէ չես կրցած փրկել զանոնք, պատճառը սարսափն է հոետորութենէն: Ահա մաքիս մէջ տիպարը քու քերթողութեանդ.

ա) Բոլորովին լեր կ, պարզ, գաժան ու իրաւ:

բ) Խստապանութիւններ, որոնք լսուած չըլլան (կեանքը քեզի տուաւ այդ սարսափները):

գ) Նորունկ բարութիւն նոյնիսկ մեղքին վրայ:

դ) Հաւատաք քու վրադ:

ե) Անարգանք մահուան դէմ, որուն վրայ խորհելէն աւելի պզտիկ, սարսին բան չկայ:

զ) Բոլոր բառերդ ականակուռ կ'ուզեն տողերդ:

է) Բոլոր տողերդ նուաճեն, կործանեն ամէն ընդդիմութիւն:

Թէ այսպէս եղած–կատարուած գործ մը Սփիւռք կ'ըլլայ, գիս չի շահադրգռեր: Դուն ապատ ես կարծեմ ըսի երկարելու այդ ցանկը:

Յոգնեցայ: Ու հեղեղին տակն եմ ըսելիքներուս: Ոչ մէկ ցաւ, ոչ ոքի դէմ: Քեզի դէմ՝ նեմատապէս: Թերեւս ուրիշ աւիթով մը քեզի գրեմ իմ կատակը, գրական անշուշտ: Ջեմ կարդացած յոդուածդ Ցառաջի մէջ, ըստ սովորութեան: Կ'ենթադրեմ, որ տեղը քեզ պիտի ընէր զդոյշ փոշիի վերածելու Օշականը, ինչպէս կ'ընեն կայ շորս–հինգ ամիս յառաջդիմական թերթերը: Գիտեմ, թէ չեմ կարդացուիր, թէ գրողներն իսկ չուներն ժամանակ Օշականի կարդալու: Իրա՞նց, թէ իմ գժբախտութիւնը:

Կամաց–կամաց սիրելի կ'ըլլաս ինծի: Նամակդ գրական չատ իրաւ էջ մըն էր: Այդ իրաւութեամբ երբ վէպի մը մէջ տիպարներ վերլուծես, կը յաջողիս անպայման: Պիտի ուզէի, որ Հայէպի Նայիրիին գրէիր: Քու տեղդ է: Ահաւասիկ տառապանք է ինծի ներկայ հայերգութիւնը հայրենիքին մէջ թէ հոս: Կ'երեւի անխուսափելի հետեւանք մը թիւներ կան: Հայրենիքին մէջ կտորդ շեղում մրն էր: Բայց թոնը քեզի չի դար: Կանուխէն ասպետ, չես նոյնանար երբ կը փորձես տեսնել ըսածներուն տակ, իրաւ բաներ հոն, ուր գիտես, թէ սուտն ու կեղծը կը մնան տիրական:

Գոհ եմ նամակիդ անկեղծութենէն: Ջանա՛ մեկուսացուիս դդ շարունակել, կամ ինծի պէս վանք քաշուիլ, վսեմանալու համար:

Սիրով՝
Ց. ՕՇԱԿԱՆ

1) Անրնթեռնելի բառ:
2) Երկու բառ ամրնթեռնելի:
3) Անրնթեռնելի բառ:
4) Անրնթեռնելի բառ:
5) Անրնթեռնելի մականուն:
6) Անրնթեռնելի ֆրանսերէն բառ:
7) Անրնթեռնելի բառ:

(Շար. 4)

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՒԱՑՔ ՓՈՌՈՒԱԾ ՏԱՆԻՔԻ ՎՐԱՅ



«Լուացէ փոռուած տանիքի վրայ» *քիչ մը արտասովոր ընդհանուր խորագրին տակ, ափիւոքահայ արձակագիր Մովսէս Գէլաքճեան 1987ին ի մի խմբեց վերջին տարիներուն «Յառաջ» օրաթերթի մէջ լոյս տեսած իր ակնարկները կամ տոմսերը:*

Մեր առօրեայէն վերցուած հարցերուն անդրադարձող այս ակնարկները, իր բառով՝ «գրանկարներ»ը հատորի մը մէջ ամփոփելու իր որոշումը հիմնաւորելով, Մ. Գէլաքճեան կ'ըսէ. «Այս գրութիւնները կարդացողներ յաճախ ըսած են, թէ կատարած են կրկնակի ընթերցում, հետեւաբար կ'ենթադրեմ, որ պիտի ուզէին կարդալ զանոնք անգամ մըն ալ՝ մէկը միւսին ետեւէն՝ ամբողջական պատկերացումի մը համար»:

Այս հաստատումը կատարելէ ետք, Գէլաքճեան կ'աւելցնէ, թէ «երբեմն տեղական խմբատ ունենալով հանդերձ», այս հատորը կազմած գրութիւնները կ'արծարծեն Սփիւռքի բոլոր գաղութները շահագրգռող եւ յուզող հարցեր, ինչպէս՝ ճեղքոտպանութիւնը դատապարտելու դիտակցութիւնը, հայ լեզուի անաղարտ պահպանման հարցը եւ նման այլ խնդիրներ, որոնց արծարծման լաւագոյն բեմը կը մնայ հայ մամուլը, որովհետեւ, հեղինակին խակ ընդգծումով՝ «Թերթը մեր ամէնէն հարազատ յուշարարն է, մեր ամէնէն հետեւողական ուղեցոյցը, բարեկամ կամ ընկեր թլլալէ շատ առաջ»:

Փարիզի Communication *տպարանէն 1987ին լոյս տեսած այս հատորը, որ կը բաղկանայ 141 էջերէ եւ նուիրուած է երկար տարիներ հայ մամուլին ծառայած իր ընկերոջ՝ լրագրող Զարեհ Մոնոֆարեանի յիշատակին, կ'ամփոփէ աւելի քան քառասուն տոմսեր:*

Վերջին տասնամեակին արձանագրուած քաղաքական, ընկերային, մշակութային, հասարակական-ազգային թէ միջազգային գանազան իրադարձութիւններ նիւթ հայթայթած են Մովսէս Գէլաքճեանի, որ զանոնք մշակած է արեւմտագէտ հրապարակագիրի պարզ, հաղորդական եւ պատկերաւոր լեզուով:

Ծանուցումի թեմայէն մինչեւ լեզուական - ուղղագրական գայթակղութիւններ, ուսուցչական փորձառութենէ մը մինչեւ քաղաքական-տնտեսական կնճռոտ հարցեր, հայ գիրքի ողբերգութենէն մինչեւ անհատ-հասարակութիւն հարցեր, եւ զեռ՝ մինչեւ «Ֆրեսերիֆ Շիկամօրուս կամ սէր Կիպրոսի մէջ», «Նոմվ Արմենէն Միշել Ֆուոնս», «Փա-

digitised by A.R.A.R.@

րիզի փապուղիներէն Հայաստանի թանգարաններր, անցնելով Կիլիկիայէն», «Տէր-Զօրէն Մասիսաղրն» և «Վերջակէտ/Նոր տող», Մովսէս Գլաքճեան կը բախի Սփիւռքի և մեր ժամանակները բնորոշող այլապան հարցերու, տարբեր դոյն և բովանդակութիւն ունեցող կացութիւններու, որովհետև՝ «կարելի՞ է հայ ըլլալ ու մնալ անտարբեր որեւէ հարցի նկատմամբ, մա՛նաւանդ երբ կը վերաբերի հողի»:

Նման հարցադրումներով, մտածում մը մտածում ստեղծող խորհրդածութիւններով, յիշողութեան բնդդնող անդրադարձներով և պահը կամ մտածումը աւելի բացայայտող, խմաստաւորող բնորոշ մէջբերումներով Գլաքճեան կը գունազարդէ մէկ–երկու էջի նաւալի մէջ խտացուցած իր նիւթը, զայն օժտելով պատմական փորձառութեամբ, անմիջականութեամբ և երգով:

Այսպէսով, արձակագիր Մ. Գլաքճեան ընթերցողին կը ներկայանայ նաեւ իբրեւ գիւրահաղորդ հրապարակագիր:

ՃՐԱԳԱԼՈՅՑ

Շահանդուխտի «Ճրագալոյց» անուն բանաստեղծութիւններու գրքոյկը լոյս տեսաւ 1988ին, եգիպտահայ ակը եւ տիկին տաքթ. Սուրէն Գայրամեանների մեկնաբանութեամբ:

Գեղանկարիչ Զոհրապի գծանկարկողքը կը պատրաստէ ընթերցողը, որուն գիմաց հատորին կրօնարոյր եւ ոգեկան աշխարհին ծայրերը կը բանայ Սեպուհ Ծ. Վրդ. Սարգիսեանի «Ճրագալոյց» խորագրեալ ներածականը: Երեք սեղմ էջերու մէջ, Սեպուհ վարդապետը կը կատարէ գնահատումը գրքոյկին, առաջին հերթին մատնանշելով, թէ «այս գրքոյկը զրոյցէ աւելի է. ան ինքնամփոփ խոստովանանք է ու իրական հաղորդութիւն Աստուածամօր անձին եւ այդ Անձէն ճառագայթող յաւերժարոյր ճշմարտութիւններուն հետ: Տակաւին աւելին: Շահանդուխտի այս գործը



կրօնարոյր գրականութեան մը ճաշակը կու տայ մեզի»:

Ապա, մէջբերումներով ան կը խորացնէ իր այս գաղափարը, եզրակացնելու համար, թէ «խորունկ ու անկեղծ հաւատքի շիթերով պարարտացած հոգիէ մը բխող կրօնարոյր բերքաւածները այս գրքոյկին» արդարութեան եւ սիրոյ ազնուագոյն լոյսերով վերանորոգուելու կոչ մըն են, մտքի եւ հոգիի ճառագայթում եւ վեհացնող հրապարոյց, որ պիտի խօսի այն բոլոր ընթեցողներուն, «որոնք տակաւին վառ ու կենդանի կը պահեն Լուսաւորչեան իրենց հաւատքն ու Հայեկացի վարդապետին գիւտին նախանձախնդիր սէրը»:

Ճաշորդ գոյգ էջերով տրուած են Շահանդուխտի կենսագրութեան ամփոփ գիծերը, ապա՝ գրքոյկին «Ցառաջաբան», որ մեր առնելէ ետք տառապանքէն ծնած ու բիւրեղացած հաւատքի արտայայտութիւններ՝ իբրեւ «աբուեռ, հոգեչու նշ–մխսթիք մշակոյթ» եւ իր մտածողութիւն, կ'ներգրաւէ. «Այս գրքոյկը գրոյց մըն է համայնական Մօր՝ Աստուածամօր հետ: Զրոյցը հրաւէր մըն է ինքնին բոլոր մարդոց, մա՛նաւանդ մեր իգական սեռին, որոնելու եւ գտնելու

digitised by A.R.A.R.@

մնայուն «արժէքները, փիչիկ մը խաղաղ ապրելու համար»:

Ցաւորդ 34 էջերը կը գրաւեն կարճ ու միջակ ծաւալի 28 քերթուածներ, որոնք իրրեւ նիւթ կը շօշափեն մայրութիւնը, սէրը, նուիրումը, հաւատքը, արդարութեան ոգին, յուսապաշտութիւնը եւ յարակից թեմաներ:

«Դատարակ», «Զրոյց կորսուած իրերու հետ», «Այգաբացի հանդիպում», «Գիշերային խոհեր», «Հրաժարիմք», «Ցեղնչ արդարութիւն», «Արեւազայ», «Վեղար» եւ մեւս խորագիրները գրքոյկին լաւագոյնս կը պարզեն անոր ներքին մթնոլորտը:

Պարզունակ այս խոստովանութիւններուն շուրջ ճաշակ մը փոխանցելու համար, ստորեւ ամբողջութեամբ կու տանք «Մարդերուն հետ, մարդերէն հեռու» կարճ քերթուածը.

Եթէ կ'ուզէք մարդը չափել,
Մի հայիր իր ոտքերուն, այլ՝ քայլերուն...
Ցեղոյ՝ աչքերուն:
Ուրախութեանց օրերուն խնդակից,
Իսկ սուգի սեւ օրերուդ՝ անկարեկից,
Փախուստ տուած, անհետացած,
Դեռ երէկուան երգն ու ժպիտ
ոտնակոխուած...
Մինչ դուն կը զգաս առանձնութիւն
Ու կ'ափսոսաս, թէ խաբուած ես:
Միակ քարիքը որ կը ջերմացնէ սիրտդ մսող
Վերանորոգման յոյսդ է մխիթար
Դառնալու նոր մարդ
Արհամարհելու մարդերը տմարդ...

ՈՍՏԱՅՆ 1

1987ին, Մոնթրէալի մէջ, նոր հիմնուած Մեսրոպ Մաշտոց հիմնարկութեան նախաձեռնութեամբ լոյս տեսաւ հրապարակագիր Վրէժ-Արմէնի «Ոստայն 1» հատորը, որուն բացատրական կարճ գրութեան մէջ հեղինակը կը յայտնէ, թէ հրամցուածը փունջ մըն է՝ կազմուած երեսուն տարիներու ընթացքին սփիւռքահայ մամուլին մէջ հրատարակուած իր գրութիւններէն: Ապա ան կ'աւելցնէ, թէ երբեք չէ ունեցած գրական գործեր ստորագրելու յաւակնութիւնը, իսկ ինչ կը վերաբերի այս հատորը կազմած կտորներուն, «գրեթէ բոլոր գրութիւններն ալ օրագրային բնոյթ ունին, ոմանց տպաւորապաշտ էջեր են, ուրիշներ՝ մենախօսութեան փորձեր, եւ հաւանաբար գրականութեան եւ լրագրութեան միջեւ տեղ մը կարելի է դասել զանոնք»:

«Ոստայն 1» հատորը, որ կը հաշուէ 192 էջեր, կը բաղկանայ երկու մասէ՝ «Մենագրոյցներ» եւ «Ցիշատակի փաթիլներ»:

Ութ կարճ գրութիւններէ կազմուած «Մենագրոյցներ» բաժինը, բարձրաձայն խոստովանութեան մը յատուկ պարզ ու անմիջական լեզուով, յուսաբձակի տակ կ'առնէ հայու ճակատագրին հետ առընչուող զանազան հարցեր, սփիւռքահայ մարդուն հաւաքական ապրումները եւ տագնապալի առօրեան՝ մարդկային յարաբերութիւններու ջերմութեամբ շիկացած:

Երկրորդ մասը հատորին՝ «Ցիշատակի փաթիլներ», որ աւելի ծաւալուն է (էջ 77–190), կը խմբէ 16 անուն գրութիւններ, որոնք վերյուշն են ապրուած քաղցր պահերու, անձնական թէ ազգային փորձառութիւններու, բայց մանաւանդ՝

digitised by A.R.A.R.@

սիր ու ոգեհայ մարդը բնորոշող համահայկական տողանցներու։ Այսպէս, մանկութիւն եւ ընտանիք, դպրոց ու ակումբ, մամուլ եւ միութիւն, մէկ խօսքով՝ Հայութիւն եւ Հայաստան կը տողանցեն վերոյիշեալ բաժինի իւրաքանչիւր էջին վրայ, ներկայացնելով հայկական ջերմ մթնոլորտը այն զոյգ քաղաքներուն, որոնք կը կոչուին Գահիրէ եւ Մոնթրէալ։

Ընտանեկան մտերիմ ապրումներէ, յուշերէ եւ դրուագներէ մինչեւ համահայկական հոգեվիճակներ բացուող այս գրութիւններէն մէկուն մէջ, Վրէժ-Արմէն կը խորհրդածէ.

«Ոստայն մը է կեանքը ինքնին, ու մենք բոլորս ինկած ենք անոր մէջ։ Ամէն օր մենք կը հիւսենք անոր թելերը. մենք կ'երկարենք զանոնք մեր յարաբերութիւններով, կամայ թէ ակամայ»։

Վէրջապէս, ինչպէս կը գրէ հատորին ծնունդի գրդապատճառը մեկնաբանող «Ոստայն» անուն մենախօսութեան եզրափակիչ տողերով, ոստայն մը՝ ենք մենք, իսկ թելերը, որ մեր կեանքը իմաստաւորող մասնիկներ են, միշտ ալ բան մը կը տանին իրենց հետ, կը բգկանեն մեր հոգին, երբ կը փչրուին յեղակարծօրէն։

«Զայներ՝ հետզհետէ մարող, ցնարներ՝ կամաց-կամաց խամրող ցնարներ, բայց երբեմ չմոռցուող յիշատակներ, այդ թելերը։ Նոյնիսկ երբ չես գիտեր թէ միւս ծայրը գտնուողը դեռ հո՞ն է թէ ալ չկայ»։

«... Ես կեղրոնն եմ այս ոստայնին։ Ամէն մարդ՝ իր ոստայնին։ Բայց տէ՞րն ենք անոր, թէ՝... ոբսր»։

Վրէժ-Արմէնի «Ոստայն 1»ը «գրականութեան եւ լրագրութեան միջեւ» տեղ մը գրաւած, այսինքն՝ գրականութեան էատարբերով հարուստացած հրապարակագրութիւն է, տաք ու հաղորդական։

ՄԱՅՐԵՐԳ

Բաֆֆի Գէրպէրեանի խմբագրութեամբ, վերջերս Անթիլիասի Կաթողիկոսարանի ապարանէն լոյս տեսաւ 238 էջերէ կազմուած «Մայրերգ» ժողովածուն,



մեկնաբանութեամբ սիրեցն Վիքթորիա Թիւֆէնքճեանի։

«Երկու խօսք» խորագրեալ իր կարճ ներածականին մէջ, Բաֆֆի Գէրպէրեան առաջին հերթին դիտել կու տայ, որ այս հատորը «կը բազկանայ շուրջ հարիւր յիսուն տարուան շրջան մը ընդգրկող Արեւմտահայ եւ Արեւելահայ գրականութիւնն անդաստանէն քաղուած արծակ եւ չափածոյ կտորներէ»։

Ապա, ան կ'անդրադառնայ բոլոր սեղմագրերու գրողներուն հաւասարապէս ներշնչման աղբիւր հանդիսացած մօր թեմային եւ առ այդ կը մատնանշէ, թէ ինք հնարաւորութեան սահմաններուն մէջ հաւաքած է առաւելագոյն քանակով գրութիւններ, «առանց նկատի առնելու մեր գրողներուն տաղանդի չափանիշը»։

Այնուհետեւ, դարեր շարունակ «հայ սերունդներու դաստիարակման ու ցեղի յարատեւման ի խնդիր» մաքառած հայ մօր անփոխարինելի դերակատարութիւնն ու վաստակը դնահատելով, ան իր այս հատորը կը նուիրէ «ազգային ոգիով տոգորուած, առաքինի, զոհաբերող եւ հայ ցեղին գոյատեւման մեծագոյն զօրավիգներուն՝ Հայ Մայրերուն»։

digitised by A.R.A.R.@

«Երկու խումբերն կը յաջորդէ «Արեւմտահայ բանաստեղծներ» բաժինը, ուր կը կարդանք հայ մօր ձնուած բազմատաղանդ բանաստեղծութիւններ՝ Մատթէոս Մամուրեանէն, Թովմաս Թէրզեանէն եւ Գեւորգ Դուրեանէն մինչեւ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Վահան Թէքէեան, Համասաղ, Ժագ Ճակրեան, Մուշեղ Իշխան եւ Ե. Գեղարդ:

Երկրորդ բաժինին մէջ, կը կարդանք նոյնպէս նոյնքան բանաստեղծութիւններ՝ Յովհաննէս Յովհաննիսեանէ, Աւետիք Իսահակեանէ, Աւետիս Ահարոնեանէ, Վահան Տէրեանէ, Եղիշէ Չարենցէ, Սարմէնէ, Վազգէն Նորենցէ, Սոզոմոն Տարօնցիէ, Յովհաննէս Շիրազէ, Համօ Սահեանէ, Գէորգ Էմինէ, Սիլվա Կապուտիկեանէ, Վահագն Դաւթեանէ, Գարոյր Սեւակէ եւ տասնեակ մը այլ բանաստեղծներէ:

Հատորին 129րդ էջով կը սկսի «Արեւմտահայ արձակագիրներ» բաժինը, ուր արձակ էջերով հանդէս կու գան Գարեգին Բ. Կաթողիկոսը, Արամ Արքեպիսկոպոս, Գրիգոր Զարեհեան, Թլկատինցի, Ինտրա, Տիգրան Զէյթունեան, Յակոբ Օշական, Յակոբ Մեծուրի, Թուրէն, Սօս Վանի, Նշան Պէշիկթաշլեան, Շաւարշ Նարգունի, Վազգէն Շուշանեան, Կարօ Մեհեան եւ ուրիշներ:

Ապա կը կարդանք նոյն նկարագիրը ունեցող այլ էջեր, այս անգամ՝ արեւելահայ գրողներէ,— Հաշտաւոր Աբովեան, Րաֆֆի, Աւետիս Ահարոնեան, Յովհաննէս Թումանեան, Սիմոն Վրացեան, Վահան Թոթովենց, Ստեփան Զօրեան, եւայլն:

Հատորին երրորդ մասը ի մի կը խմբէ հայկական երգեր ու օրօրներ, որոնց կը յաջորդեն հայ եւ օտար դէմքերու թուղթերէն քաղուած մասնումներ՝ մօր մասին:

«Մայրերգ» հատորը կը փակուի «Մայրերու տրուած ածականներ եւ վերադիրներ» տախտակով, զոր խմբագիրը կազմած է՝ իրեւ ապրիւր ունենալով յիշեալ դիրքի էջերուն լոյս տեսած չափածոյ եւ արձակ գրութիւնները:

ԱՄՍՕՐ-Արա.Ս.Ս.Ի
Ա. Մ. Ա. Մաշտոցեան

digitised by A.R.A.R.@

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

ՎՐԷԺ - ԱՐՄԷՆ

Ո՛Ս.Տ Ա.Ց Ն, 1

— Արձակ էջեր —

• Մոնթրէալ, 1987, հրատարակութիւն՝ Մեսրոպ Մաշտոց հիմնարկութեան, 192 էջ։

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ.

ՄԵՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ

— Վերլուծումներ —

• Անթիլիաս, 1987, 100ամեակի հրատարակութիւններ, թիւ 13, 120 էջ։

CHOUCHIK DASNABEDIAN

Zabel Essayan

ou

l'univers lumineux de la littérature

• Catholicossat Arménien de Cilicie, Antélias-Liban, 1988.

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ	100 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին	1000 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ	25 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՑԵԱՆ

Խմբագրութեան անդամ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

B. P. 80896 - Beyrouth - Liban

Tél. 266740

شباط ١٩٨٨ digitised by A.R.A.R.@